

Պ.ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ

ՏԵՐ
ՍԱՐԳԻՍ

ՊԵՏՂԱՏ

891.99
Գ-23





ՀԱՅԿԵՆԻ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆՑ 6 NOV 2011

891.99
F-23

ԱԿ

ՏԵՐ ՍԱՐԳԻՍ

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՂՈՒԼԸ

ԱՌԱՋԱԲԱՆ
ՔՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ

ՊԵՏՏՐՈՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

29.08.2013

60395

ՀԵՂԻՆԱԿԻ ԾՆՆԴՅԱՆ
ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
1837—1937



655
39



ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ո՞վ և Տեր-Հովհաննիսյանցը, կյանքի ի՞նչ ուղի յե կտրել—
չաա քչերին և հայտնի: Արդարև, դա մի անհայտ անուն և հայ
գրականության պատմության մեջ: Մի քանի տասնամյակ—
ների փոշի կա նստած նրա անվան վրա: Փամանակի մի մեծ
տարածություն, մոտ յոթ տասնամյակ, մեզ բաժանում և նրա—
նից:

Ի՞նչ և մեզ հայտնի այդ մոռացված մարդու մասին:

Տեր-Հովհաննիսյանցը ծնվել է 1837-ին, Ուզունթալա գյու—
ղում: Սովորել է Ներսիսյան դպրոցում: Ներսիսյան դպրոցի
վերահացու Հովհաննես Քաթանյանցի ջանքերով, 1858-ին Գար—
բիելին անդովում և տեղափոխվել Մոսկվա՝ ուսումը շարունա—
կելու, Ղզլարցի բարերար Պիտանյանցի ծախքով: 1860-ին Գար—
բիել Տեր-Հովհաննիսյանցն արդեն Մոսկվայի համալսարանի
բժշկական ֆակուլտետի ուսանող էր: Այդ տարիներին Մոսկվա—
յում կաղմակերպվում էին հայ ուսանողական ժողովներ. ժո—
ղովներին մասնակից է դառնում նաև 22-ամյա Տեր-Հովհաննիս—
յանցը: Այդտեղ նա ծանոթանում է Ստեփանոս Նազարյանցի հետ,
վորն հրավիրված էր դասախոսություններ կարդալու համար:
Մեմուարային գրականության մեջ հետաքրքրական հիշատա—
կումներ կան այն մասին, թե ինչն և յեղել այդ ժողովների
նյութը և գրադմունքը:

«Ոտարության մեջ ապրող հայ ուսանողները, — գրում և
Քաջբերունին իր հիշողությունների մեջ, — մի տեսակ կարիք են
զգում միմյանց մոտենալ, միմյանց հանդիպել, իրար հետ շփ—
վել և հենց այդ զգացմունքից՝ յուրաքանչյուր տոն և կիրակի
օրերում հավաքվում էին հայոց յեկեղեցում պատարագին ներ—
կա լինելու:



Յուրաքանչյուր շարաթ յերեկո հոյ ուսանողները հաճաք-
 վում էյին առանձին սենյակ, վոր վարձված եր ուսանողական
 անդամակցական գումարով և ուր ապրում եր մի չքավոր ուսա-
 նող, ուսանողական վճարից նպաստ ստացող, վոր պարտավոր
 եր սենյակը մաքուր պահել: Այդ խմբումն կոչվում եր «ժողով»:
 Սա ուներ իր ընտրովի նախագահը և քարտուղարը:

Ժողովի նիստերում ուսանողները զբաղվում էյին հայերեն
 խոսակցությամբ, վիճարանությամբ, արժարժում էյին մի
 վորևէ դիտնական կամ աղբայնական հարց, կարդում էյին հա-
 յերեն հոդված, թարգմանություն, ռեֆերատ և այլն: Կադ-
 մակերպում էյին թատերական ներկայացումներ, զբաղվում էյին
 յերբեմն ուսանողական կենցաղի հարցերով և այլն:

Ուսանող Աղատացյանն այդտեղ կարգաց յուր նոր գրած
 «Վայ իմ կորած 50 վոսիկ» կատակերգություն. Ստեփաննոս
 Ստեփանյանց— Ստեփաննի կարդում եր յուր վոտանալորները
 Իշխան Բաղրատունի ստորադրությամբ. Գարրիել Հովհաննիս-
 յանցը կարդացել է յուր անդրանիկ վեպը դյուշական վորսոր-
 դական կյանքից առած, վոր մինչև այժմ ել մնացել է սևադրու-
 թյամբ նրա մոտ: Գեորգ Քանանյանը, վոր արդեն ավարտել
 եր համալրարանը 50-ական թվականների վերջերում, և յերբեմն
 այցելում եր ժողովը, առաջին անգամ կարգաց ժողովում Ռա-
 ֆայել Պատկանյանցի ձեռագիր «Քաջ Վարդան Մամիկոնյանի
 մահը» աշխատությունը Պետերբուրգից ուղարկված. և այլն և
 այլն»:

Տեր-Հովհաննիսյանցը դառնում է «Հյուսիսափայլ»-ի մեր-
 ձավոր աշխատակիցներից մեկը: 1861-ին «Հյուսիսափայլ»-ում
 սկսում է լույս տեսնել նրա անդրանիկ աշխատությունը— «Տեր-
 Սարգիս» վեպը: Վեպի տպագրությունը կիսատ մնաց: «Հյուսի-
 սափայլ»-ի մայիս, ոգոստոս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամ-
 սագրերում լույս տեսավ վեպի միայն մի մասը, ընդամենը 22
 գլուխ և ընդհատվեց: Նալբանդյանն անհավանական չէր դնում,
 վոր ընդհատվելու միակ հիմնավոր պատճառը պետք է յեղած
 լինի վեպի հակակղերական ուղղությունը. «մեր կարծիքով—
 գրում է Նալբանդյանը— այդ գործին ավելի պատշաճ եր
 «Քաղցիկը Հայաստանի» անուն ունենալ, քան թե կապվել մի
 արեգոտավորի անունի հետ, վոր շատ կարելի չե թե անհա-
 ջողության պատճառ ել դարձավ»:

Տարիներ հետո, յերբ լույս տեսան Գ. Հովհաննիսյանցի
 «Իշողությունները՝ Քաջբերունի ծածկանվան տակ, Նալբանդյա-
 նի կասկածներն արդարացան: Պարզվեց, վոր վեպի հրատարա-
 կության վրա արգելք դնողն, իրավ վոր, յեղել է ցարական
 գրաքննությունը:

Ահա թե ինչ ենք կարդում Քաջբերունու հիշողությունների
 մեջ այդ առթիվ.

«Ի՞նչ է պատճառը, վոր Տեր-Սարգիսը վեպը ընդհատվեց,
 չարունակվեց: Վեպը, յերբ հասել եր այն կետին, վոր պետք
 է բեմ հանվեր Թիֆլիսի յուր ժամանակին նշանավոր քահանա-
 ներից մինի— Սահակ ավագ քահանա Սահառունու— կրոնի դա-
 ստովության խայտառակ ձևը Ներսիսյան դպրոցի բարձր դա-
 սանում, հեղինակին հաղորդել եր Սահառունու աշակերտ
 Մարտիրոս Սիմոնյանցը: Հենց այդ ժամանակ բորբոքված եր
 Մատթեոս կաթուղիկոսի կողմից հալածանք Նաղարյանցի դեմ,
 ուստի ցենզոր Բերոյանցը արգելք դրեց վեպի շարունակությանը:

Առանց վեպին վորևէ վնաս հասցնելու հեղինակը կարող եր
 դեն ձգել Սահառունուն ել, նրա դաստովությունն ել և հան-
 դիսա շարունակել վեպը, բայց նա անխորձությունից զիմեց
 դանազան միջնորդների ու անհաջողության մատնվելով, զիմեց
 կարապետ Յեղյանի միջնորդությանը, վորը 1862 թ. մայիսի
 15-ի նամակով պատասխանեց, թե Բերոյանցին անկարելի չե
 համոզել, վոր նրան— Բերոյանցին— հրամայված է ցենզորական
 կոմիտեյի կողմից, վոր հայոց հոգևորականության մասին վոչ
 մի հոդված թույլ չտա տպագրության. Ավելացրեք սրա վերա-
 ն այն, վոր շուտով դադարեց Հյուսիսափայլը:

Ահա այդպիսի փորձանքի յենթարկվեց «Տեր-Սարգիսը»,
 վորի շարունակությունը մնում է անչուք մինչև այսօր»:

1863-ին Տեր-Հովհաննիսյանցը գրում է «Ջուխտ անխձյալ
 գերեզման» խորագրով վեպը, վորը, սակայն, ինչպես ինքն է
 ասում, «Նաղարյանցի վոճով գրելու պատճառով և հետագա-
 յուր հայացրին տեղ առ տեղ անհամաձայն գտնելով՝ մնացել է
 անտիպ մինչև այսօր»: 1864-ին գրում է մի վեպիկ «Սուբբ
 Գեորգի դուրը» անունով, վորը, սակայն, տպագրության է տա-
 լիս մի քանի տարի հետո, 1872-ին, Պետրոս Սիմոնյանցի «Մեկու-
 Հայաստանի»-ի մեջ (№№ 24 և 25):

Տեր-Հովհաննիսյանցն այլևս հանդես չեկա՞վ վորպէս բե-
լետրիստ. ընթերցողը կորցրեց նրա հետքը: 1867—1898-ը Տեր-
Հովհաննիսյանցը վարում է գավառական բժշկի պաշտոն, ճա-
կատագիր ունենալով մշտական շրջագայութիւնները:

... «Որերով և շարաթներով լինելով ծառայական անգա-
գար շրջագայութեան մեջ,— գրում է Քաջբերունին,— նա յուր
ճանապարհին հանդիպում էր սարերի, ձորերի, գետերի, ան-
տառների, դաշտերի, գյուղերի ժողովուրդների, հին վանքերի,
յեկեղեցիների, ամրոցների, գերեզմանների և այլն և այլն, վո-
րոնցով նա չէր կարող չհամիշտակվել, չէր կարող աչքերը խփել
և անցնել, ինչպէս արել են նորա պէս շատ-շատ ծառայողներ:
Քայց նա յուր այդ բոլոր տեսածները գնում էր, քննում էր,
նյութեր էր ժողովում, գրի յեր անցնում յուր ծոցատետրերի
մեջ, վոր դժվար չէր իրագործել այդ բոլորը»:

«Փորձում», «Արարատում», «Նոր գարում», «Արձագան-
քում», «Լուսայում», «Ազգագրական հանդեսում», ինչպէս և
ուսուսական պարբերական մամուլում հանդես է գալիս ընդարձակ
Հանապարհորդական նկատողութիւններով, վորոնք, սակայն,
առավել լայն պատմագիտական-հնագիտական-ազգագրական նշա-
նակութիւն ունեն/ Առանձին արժեք և հետաքրքրութիւն են ներ-
կայացնում նրա հիշողութիւնները՝ Ալեքսանդրապոլի թատրո-
նական կյանքի շուրջը («Արձագանք»), ինչպէս և Պերճ Պոռչ-
յանի վերջին օրերի մասին («Լուսա»): Այդ աշխատութիւնների
քանակը, չհաշված մանր-մուկ թղթակցութիւնները, հասնում
է, ինչպէս ինքն է ասում, 66-ի: Բոլորն էլ լույս են տեսել Քաջ-
բերունի ստորագրութեամբ:

Լեօն, Ստ. Նազարյանցի կյանքին և դործին նվիրված յերկ-
հատոր աշխատութեան մեջ, իսկ հետագայում էլ «Հորիցնում»
լույս ընծայած իր մի հոդվածում, հիշում է Գարրիել Տեր-
Հովհաննիսյանցին և կշտամբանք կարդում «Տեր-Սարգսի» հե-
ղինակի գլխին, վոր թողել է գեղարվեստական գրականութիւնը
և զբաղվել ազգագրական նկարագրութիւններով: Իր հիշողու-
թիւնների մեջ անդրադառնալով այդ հարցին՝ Քաջբերունին
գրում է:

«Ապա թե ինչ է պատճառը, վոր Գ. Տեր-Հովհաննիսյանցը

վիպագրութիւնը թողել է և անցել է հնութիւններին և ժո-
ղովրդագրութեան: Ահա դրա բացատրութիւնը:

Իժիշկը 1867 թվականից մինչև 1898 թվի վերջը միշտ վա-
րել է գավառական բժշկի պաշտոն, մի պաշտոն, վոր շարունակ
չարժան մեջ է, վոր չունի վոչ հանգիստ և վոչ դադար: Ուրեմն
վեպի համար նա չէր կարող ունենալ միջոց և ժամանակ»:

1912-ին դեկտեմբերի 25-ին լրացա՞վ Ստ. Նազարյանցի
ծննդյան հարյուրամյակը: Գարրիել Տեր-Հովհաննիսյանցը գրի
է առնում իր հիշողութիւնները 60-ական թ. թ. Մոսկվայի հայ
ուսանողների և «Հյուսիսսիբայի» ու Ստ. Նազարյանցի մասին—
«Ստեփանոս Նազարյանցի շուրջը 60-ական թվականներում» խո-
րագրով: Նրա հիշողութիւնները լույս են տեսնում սկզբում
«Արարատում», 1916-ին, իսկ հաջորդ տարին՝ առանձին գրքույ-
քով:

Ահա այն մի քանի կցկտուր սովյայները, վոր մեզ հայտնի
յեն «Տեր-Սարգսի» հեղինակի մասին: Նույնիսկ մինչև հիմա
հնարավոր չի յեղել վերականգնել Տեր-Հովհաննիսյանցի մահվան
թվականը, վորը, անշուշտ, մեր յերիտասարդ ժրաջան գրական-
ւերնդի դործն է, ինչպէս և նրա ձեռագրերի հայտնաբերումը.
ուր, պիտի հուսալ, վոր պահպանված կլինեն ինչպէս նրա յերկու-
անհայտ վեպերի ձեռագրերը, այնպէս էլ «Տեր-Սարգսի» շարու-
նակութիւնը, վորի մասին հեղինակն ասում է՝ «մնում է ան-
շուք մինչև այսօր»:

«Տեր-Սարգսի» հեղինակը՝ Գ. Տեր-Հովհաննիսյանցը մեզ
նայում է հեռավոր տարիների մշուշից, ճիշտ կլինի ասել՝ հայ
նոր գրականութեան պատմութեան խանձարուրից: Նրա անունը
առնչվում է այն դեմքերին, վորոնք հիմք գրին հայ աշխարհիկ
գրականութեան՝ նոր գրական յեղվով: Յեթե վոչ Արովյանի,
վորի «Վերք Հայաստանի»-ն գրված էր վաղուց, բայց լույս
տեսա՞վ 1858-ին, ապա Նալբանդյանի, Պոռչյանի բախտն ու նշա-
նակութիւնը՝ վորպէս արձակագիրների՝ բաժանում է նաև Տեր-
Հովհաննիսյանցը: «Վերքը» լույս է տեսել 1858-ին, Նալբանդյա-
նի «Մեռելահարցուկը» մի տարի հետո՝ 1859-ին, Պոռչյանի «Սոս-
և Վարդիթերը»— 1860-ին, «Տեր-Սարգիսը»— 1861-ին: Ահա այն
նախնական սյուեռաչարը, վորի վրա բարձրացա՞վ մեր արձա-

կազմութեան կոթողը, հանձին Աղայանի, Բաֆֆու, Երվանդա-
գեյի, Մուրացանի, Նար-Դոսի, Փափաղյանի և ուրիշների:

«Տեր-Սարգիսը» Նալբանդյանը գնահատում է հենց այդ
լույսի տակ: Նալբանդյանն իր նշանավոր կրթիկայի մեջ գրում
է. —... «Մենք պարտականութիւն ունենք հրատարակել թե
պ. Արովյանցի «Վերք Հայաստանի»-ն և «Սոս և Վարդէթերը»
հիմք դրին արդյան ազգային վիպասանութեան: Այո, արդա-
բութիւնը նույնպէս պարտք է դնում մեր վրա բարձրարարաւ
հուշակէլ պ. Գարրիէլ Տեր-Հովհաննիսյանցի «Տեր-Սարգիս» մա-
կազրով վիպասանութիւնը, վոր տպւում էր 1861 թվականին
Հյուսիսստիպլի մեջ, և վոր, ախոս և հազար ախոս, հեղինա-
կից կամ Հյուսիսստիպլից կախում չունեցող պատճառներով
ընդհատվեցաւ»...

Նալբանդյանը, վոր հայ անդրանիկ դրական քննադատն է
և սեպտեմբրի տեսարանը մեր քննադատական մտքի պատմութեան
մեջ, դեռ 50-ական թվականների վերջերին, «Հյուսիսստիպլ»-ի
էջերում, առաջ քաշեց ազգային դրականութիւն ստեղծելու
հարցը: «Մենք չունինք ազգային յերկեր, չունինք ազգային յե-
րաժշտութիւն, չունինք բանաստեղծութիւն» — գրում է մեծ
քննադատը: Նալբանդյանը ազգային դրականութիւն ստեղծով
հախ և առաջ հասկանում էր ժողովրդի սեպտեմբրի արտա-
ցումը դրականութեան մեջ: Նրա կարծիքով՝ ստեղծվող դրա-
կանութեան առարկան «իրական ճշգրտութիւնից դուրս չի լի-
նելու»: Նալբանդյանն այդ տեսակետով էլ մոտենում է Տեր-
Հովհաննիսյանցի վեպի գնահատութեանը: «Տեր-Սարգիսը» սեպ-
տիստական մի պատկերաչար է: Յերկի յուր ճշգրտութեանու-
թիւնն է — գյուղական քահանան և տիրացուն, գործակալը և
այլն: Հեղինակը նկարագրել է այն, ինչ վոր տեսել է մանուկ
հասակից, գյուղական շրջանում: Դա ազգային կյանքի մի հե-
տաքրքրական խորհի սեպտիստական պատկերազրումն է:

Մեր դրականութիւնն իր խանձարուրի մեջ արդեն յերկ-
փեղկված էր. ոտմանտիկականը և սեպտիստականը հալասար
քայլով առաջանում են մինչև Բաֆֆու հանդես գալը: Արովյա-
նի ոտմանտիկայի դիմաց մենք ունենք Նալբանդյանի, Պոռչյանի
և Տեր-Հովհաննիսյանցի սեպտիստական վիպագրութիւնը.
60-ական թվականներին Գամառ-Քաթիպան ոտմանտիկական;



ՄԵՅՆ 1861 ՓՈՒԵԿԵՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՏԵՐ ՍԱՐԳԻՍ:

ԵՐԿՈՍԻՆԵ ՎԵՐԳՐԵՆՈՒԹԻՒՆ.

1.

Դեռ սրբապետ չէր բացվել: Մարտի կտորացրի և դրոշմի
տարածութիւնը դեռ էս միտ էր կամ պատճառ հին: Կո միտ ար-
դեն մայր էր մտել և ստորին երկրի կամարի վերայ այս տեղ ու-
սին տեղ վայրիցայու միտ: Այ մի կրակի նշող չէր երևում անկի
հերթից, ըստ որում այդ արդարաւ զի ուր բնակիչները բողոքեման
ընած էին: Միայն ժամկոչ չարտուր, մի փայտ մեկն, շնորհ
հարցնելով զուրա կհա յնայր իւր տանից և գնաց ու գրակի
դեղի եկեղեցին: Ա պարտուր զի ուր ճանաչումս առած, ըստ ազ-
րատ է եկեղեցու պատկանուար նի ին կրով: Կեկեղեցին տնի բա-
նով չէ որոշում մի հասարակ օրէկանից. միայն ին նորս մեջ կան
մի բանի կտորատած, սրբան և կխտանչ պատկերներ: Եկեղեցին

«Տեր-Սարգիս» վեպի անգրամիկ հրատարակութեան առաջին եջը
(Հյուսիսստիպլ, 1861, մայիս)

ճառական յերկերի կողքին արտադրել է ռեալիստական-յերգի-
ծական վոտանափոքներ. կարենյանցի, Գալֆայանցի փքուռույց
ճառական վոլդերգուլթյունների դիմաց՝ առաջ է դալիս Մի-
քայել Պատկանյանի, Տեր-Գրիգորյանի, Փուղինյանի և վերջա-
պես՝ Գ. Սուեդուկյանի ռեալիստական կատակերգուլթյունը:

Ի դեմս Միքայել Նալբանդյանի, Անանիա Սուլթանչահի,
Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի— «Հյուսիսափայլ»-ի մեջ, Պոռո-
յանի— «Կուռնիկ»-ի մեջ՝ մշակվում, ձև էր ստանում մեր գրա-
կան-մտավոր կյանքի վերածնուլթյան շրջանի գեմոկրատական
հոսանքը: Դեմոկրատական հոսանքը, վորի դրոշակակերը պայ-
ծառամիտ 60-ականն էր, Նալբանդյանը, թարմուլթյուն է նոր
չունչ էր բերում հայ գրականուլթյանը և ընդհանրապես մտավոր
կյանքին: Մեր գեմոկրատական հոսանքը դանվում էր ռուս հե-
ղափոխական 60-ականների ազդեցուլթյան ներքո: «Սովբեմեն-
եիկի» և նրա շուրջը համախմբված նշանավոր վաթսուականնե-
րի լավագույն տրադիցիաները հաղթական քայլերով հրապարակ
են դալիս՝ մաքրելու հնադարյան ճահիճը, վորի խաղաղու-
լթյունն ու անդորրը այնքան թանգ էր ցարիզմին, նրա հայախոս
գաղափարակիցներին, յեկեղեցուն ու կուրին: Հայ դեմոկրատ
վաթսուականները կուխի հայտարարեցին ճահճի դեմ, բացելով
բոլոր դռները լուսավորուլթյան առաջ— դեպի ժողովուրդը:

Հայ դեմոկրատ վաթսուականները ռեալիզմի հիմնական
կրողը դառնալով գրականուլթյան մեջ, չհրաժարվեցին ռոման-
տիզմից: Ռոմանտիկան մի տեսակ անհրաժեշտ էր մեռած ճահի-
ճը շարժելու համար, քնած մտքերին թև ու թռիչք տալու, հար-
կավոր էր՝ քարացած կյանքն ապադայի վառ հեռանկարով լու-
սավորելու համար: Հարկավ, գրական հիմնական վոճը— վորի
վաղ ներկայացուցիչներն էյին այ դեմոկրատ ներկայացուցիչ-
ները— ռեալիզմն էր, մերկացնող, դիմակագերծող, իրապատում
ուղղուլթյունը: Ռոմանտիզմի դերը միայն ծառայական էր:

Հայ 60-ականների ռեալիզմը թեև տակավին իր բալոցքի
մեջ էր, բայց, չնայած դրան, հեռու յեր կյանքի լուսանկարչա-
կան, ստրիկական նկարագրից: Ճիշտ է «Հյուսիսափայլի» շուրջը
համախմբվածների մեջ կային և այնպիսիները, վոր անկարող
յեղան կյանքի ստրիկական նկարագրուլթյունից բարձրանալու,
դեղարվեստական խոշոր ընդհանրացումներ տալու: Բայց դրանք

կողքին աճում և հասակ էր առնում ռեալիզմը, առողջ, ճշմար-
տապատում գրական վոճը՝ ընդունակ կերտելու հոյակապ պատ-
կերներ, կենդանի բնավորուլթյուններ: Դեռ 1859-ին Նալբանդ-
յանը «Հյուսիսափայլի» եջերում հանդես յեկավ պաշտպանելու
«գրականուլթյունը կյանքի հայելի» սկզբունքը գոեհայացելուց,
գրականուլթյունը կյանքի լուսանկարչական արտացոլումը դարձ-
նելուց: Բանաստեղծուլթյունը—գրում է Նալբանդյանը—բարձրա-
նում է իրականուլթյունից դեպի մի այլ անչափելի տարածու-
լթյամբ լայն աշխարհ—աննյուլթ կամ հոգեկան աշխարհ: Վաղ
ռեալիզմի վոլջ պարզամտուլթյունը գտավ իր պատկերը
Պոռոյանի անդրանիկ վեպում. այդ են վկայում վեպի լե-
զուն, կառուցվածքը, տիպերի կերտվածքը և այլն: Դեռ
Նալբանդյանն իր հոչակավոր կրիտիկայի մեջ մատնանիչ
արավ, վոր Պոռոյանը «վորտեղ բաղդակի խոսում է բնու-
լթյան լեզվով, ուր միայն լոկ թարգման է լինում բնու-
լթյան և ստորագրում է այն, ինչ վոր այժմ ամեն մաքր
կարող էր տեսնել և ստուգել, հոյակապ արժանավորուլթյուն
ունի, իսկ ուր մեկ վայրկյան անգամ արգո հեղինակը բնու-
լթյունը թողնելով, ոգնուլթյուն է խնդրում յերեակայուլթյունից
և հնարատեղծում է անբնական բաներ, այնտեղ գործի արժեքը
թուլանում է և անհամեմատ թուլանում է»:

659
39

Նույնը չի կարելի ասել «Տեր-Սարգսի» մասին: Որինակ,
Նալբանդյանը Գ. Տեր-Հովհաննիսյանցին այդ առումով համե-
մատելով Պոռոյանի հետ, իր կրիտիկայի մեջ գրում է.

«Պ. Գ. Տեր-Հովհաննիսյանցի «Տեր-Սարգիս» գործում մի
հոյակապ արժանավորուլթյունն էլ այն է, վոր նա բացի մի քանի
անհրաժեշտ պատժական ծանոթուլթյուններից և արտաքին նկա-
րագրուլթյուններից՝ իր ներգործողների հոգեբանական կամ բա-
րոյական վորպիսուլթյան մասին բնավ իր բերնից խոսելով հան-
դես չէ գալիս. ներգործողը իրենց խոսքերով կամ գործերով
ցույց են տալիս մեզ իրենց ուլ և ինչ լինելը: Մեծ տարբերու-
լթյուն կա տեսնելու և լսելու մեջ: Այն հեղինակը, վոր ինքը
բան չէ ասում մեզ, այլ մարդիկ է հանում մեք առջև, ներգոր-
ծել տալով նոցա,— նա ցույց է տալիս. էլ տեսնելուց հետո
լսելու կարոտուլթյուն չկա: Իսկ այն հեղինակը, վոր վոչ ամեն
բան ցույց է տալիս ներգործողների ձևերով, այլ յերբեմն իր



բերնից և պատմում նոցա մասին, նա լսեցնում է, վորի ապա-
վորութիւնն ավելի թույլ է, քան թէ տեսնելու և շոշափելու
ապալորութիւնը»:

Ինչպէս ռեալիտտ հյուսիսափայտականներից շատերի, այն-
պես էլ Գ. Տեր-Հովհաննիսյանցի վրա, նկատելի յէ «Սովրեմեն-
նիկի» ազդեցութիւնը: «Սովրեմեննիկը» առաջ քաշեց Գողզլի
արձակի պաշտպանութեան հարցը: Յե՛վ հիրավի, «Տեր-Սարգսի»
վրա նկատելի յէ «Մեռյալ հոգիների» արխիտեկտոնիկական կող-
մի ազդեցութիւնը: Ինչպէս «Մեռյալ հոգիների» մեջ պատմվող
գեպքերը մի Փարուլյատիվ առանցք չունին, այնպես էլ այստեղ,
«Տեր-Սարգսի» մեջ: «Մեռյալ հոգիների» մեջ պատկերազօված
բոլոր գեմքերի ու գեպքերի առանցքը մեկն է—Չիչիկովը, այս-
տեղ էլ Տեր-Սարգսին է՝ տիրացու Ծիտուլի հետ: Հումորը
«Մեռյալ հոգիների» վողին է, նրա շունչը: Նույնը կարելի յէ
ասել նաև «Տեր-Սարգսի» մասին. հեղինակը մի նուրբ հումորով
է շարաշէլ էր բոլոր հերոսներին, պատկերազօվող բոլոր գեպ-
քերը:

Յեթէ Գ. Տեր-Հովհաննիսյանցը նույն վողով, նույն ուժով
և կորովով կարծնար շարունակել հեղինակել գեղարվեստական
յերկեր, նրա գրական վաստակն անկասկած կղաւնար հայ իրա-
կանութեան մի վողու շրջանն արտափայլող հայելին:

«Յեթէ յերբևէ լինի—գրել է հայ նշանավոր վաթսուներկան
Նալբանդյանը 1864-ին, Պետրոպոլիտիան ամբոցի մթին խցերից
մեկում նստած— այդ կիսատ մնացած գործը ավարտի, միև-
նույն հողով և հմտութեամբ շարունակելով, այն ժամանակ մեր
նոր դպրութեան մեջ այդ գործը նույն տեղը կունենա, ինչ տեղ
ուսու դպրութեան մեջ ստացել է «Մեռած անձինքը»: Թող կան-
խիկ ընդունի մեր սրտանց շնորհակալութիւնը հայկական Գո-
ղզլը, վողին մաղթում ենք մի փայլուն դարոցը»:

Տարիների փոշու տակից հանելով և հրապարակելով մեր
գրականութեան այս մոռացված էջը, հուսով ենք, վոր գեթ այ-
սուհետև Գ. Տեր-Հովհաննիսյանցը դուրս չի մնա հայ նորագույն
գրականութեան պատմութիւնից, ինչպէս այդ անում էյին հայ
կուլտուրայի յերզվյալ պաշտպանի դիմակ հազած դարչելի աղ-
գայնականները:

Ռ. Զ.

ՏԵՐ-ՍԱՐԳՍ

1861



Արտատպւած է 1861-ի «Հյուսիսափայլ»-ից

Գետ արշալույսը չէր բացվել: Սարերի կատարքը և դաշտերի օտարածութիւնքը դեռևս մթությամբ պատած էին: Լուսինը արդեն մայր եր մտել և աստղերն յերկնքի կամարի վերա սյուսեղ ու այնտեղ փայլելում էին: Վո՛չ մի կրակի նշույլ չէր յերևում տների հերթից, ըստ վորում Վարդաբուրբ գյուղի բնակիչները բոլորեքյան քնած էին: Միայն ժամկոչ Ծիտուլը, մի փայտ ձեռին, շներին հաչացնելով դուրս յեկավ քնազլոր յուր տանից և գնաց ուղղակի դեպի յեկեղեցին: Վարդաբուրբ գյուղը, չճարհոտն ասած, շատ աղքատ և յեկեղեցու պատկանալոր նյութերով: Յեկեղեցին վոչինչ բանով չէ՛ վորոչվում մի հասարակ սթեանից, միայն թե նորա մեջ կան մի քանի կոտրատած, սրբած և կիսամաշ պատկերներ: Յեկեղեցին չինված և դեռնի տակ, պատերը հասարակ քարերից և տանիքն ևս ծածկված և այնպիսի փտած փայտով, վոր մի քանի անգամ անձրևի ներդարծութիւնից կիսով չափ քանդվել եր: Յեկեղեցու մոտ կանդնած էին յերկու կարծ սյուն, վորոնց վերին ծայրերը կամարապատ միանում էին միմյանց հետ: Այս կամարի մեջտեղից կախած եր կոչնակ, այսինքն մի տախտակ, վոր Հայաստանի գյուղերում գործ և անվում զանգակի փոխանակ:

Այսպէս Ծիտուլ ժամկոչը յերբ վոր հասավ յեկեղեցին, նախ և առաջ մի լալ համբուրեց պատի քարը, հետո յեկեղեցու սրահի պատուհանից հանելով յերկու կեռածայր կարծ փայտեր, սկոտով թակել վերսհիշյալ տախտակը: Ահա՛ քիչ ավելի ազնիվ և ավելի ձայնալոր զանգակ փայտաչեն:— Տախտակի ձայնը շներին, կարծես, ուրիշ կերպ եր թվում, դոքա սկսան ավելի քարձր հաչել: Մի քանի անգամ ժամկոչը հնչեցրեց կոչնակը և ապա յեկեղեցու դռանը նստեց, բայց վոչ վոք չեկավ աղոթեցու, չերեցեցավ և քահանան: Ծիտուլը վեր կացավ, յուր փայտը

ձեռին, չները դեպի զանազան կողմ հարածելով, գյուղի վաղուց-
 րերի մեջ և տանիքները վերա սկսավ յուր պաշտօնը կատարել,
 ձայն տալով «որհնայլ և աստված, ժամ հրամայեցեք, որհնայլ
 և աստված, ժամ հրամայեցեք»: Այսպես ասելով գյուղի շուր-
 ջը առավ և գալով յեկեղեցու մտա, կրկին սկսավ թակել կոչնա-
 կը: Նա նստեց ու գլուխը դեպի գետին կախ արած, մի բալ վո-
 ղոշաց և սկսավ ցած ձայնով յերգել:

Առավոտը կյո՛ւրակի յեր լուսանում, ժամկոչը նստավ, վեր
 կացավ. բայց դեռևս ժողովուրդ չկա: Յերը վոր բոռվական ժա-
 մանակ անցավ, արևելքն ևս դուրբ առ փոքր բացվեցավ, պա-
 ռավ կանայքը և ծեր մարդիկը գավազանի ողնությամբ, անբա-
 լով ու ջթերի տակին խոսելով, կարծես աղոթելով, յեկան
 յեկեղեցին: Կես ժամից հետո տասն հոգի հաղիվ թե համարված
 եր. յեկեղեցու բանալին քահանայի մտա և, բայց նա չկա
 դեռևս: Ծերերը և պառավները յերբեմն զրույց ելին տալիս և
 յերբեմն ծուր ելին զնում յեկեղեցու սրահում, իսկ ժամկոչը
 զրոնում կանգնած, քահանայի ճանապարհին եր նայում: Վերջա-
 պես նկատեց, վոր հեռվից ահա՛ մի մարդ և գալիս, կրակի
 անձողակոթը ձեռին: Ծիտուլը իմացավ, վոր քահանան պիտո
 յե լինի, զնաց և արևորներին իմաց տվեց: Տեր-Սարգիսը ան-
 ձողակոթի լուսով զուրը բաց արեց, ամենքը մտան յեկեղեցին,
 կանթեղները վառեցին և ժամը սկսավ: Արևորները անդիւր գի-
 տեյին բոլոր ժամասացութունը: Նոցա խորթ թվեցավ, յերբ
 վոր քահանան ժամասացութունը կիսից սկսավ: Ժամը վերջա-
 ցած, ժողովուրդը հավաքվեցավ սրահի մեջ և բացվեցավ խո-
 սակցութուն զանազան նյութերի վերա: Մինը նոցանից պատ-
 մում եր վոր նորա մեծ վորդին զնացել և վորս, մյուսը — թե
 այն որ անպատճառ հարկահան (յասավուր) պիտո յե գա գյու-
 ղը, գիվանդեու համար հավեր ժողովուրդ, և այլն և այլն:
 ահա՛ այսպիսի խոսակցությամբ ելին պարագած ամենքը,
 մինչև տեր-Սարգիսը յեկեղեցուց դուրս յեկավ: Քահանան այս
 միջոցին կանթեղները հանդրեց, գրքակալները մի տեղ ժողովեց
 և գավազանը ձեռին դուրս յեկավ յեկեղեցուց: Ժողովուրդը
 վորտեք վերա կանգնեց, վողջույն տվեց քահանային, վոր յուր
 կողմից նույնպես վողջույն տվեց: Յերը վոր ամենքն ևս նստե-
 ցին շարքով, տանուտեր Հարությունը ծանր ու բարակ հարցրեց
 տեր-Սարգիսից .

— Տերտեր ջան, կարծյոք, վոր այսոր տոն պիտո յե լինի:
 «Ի՞նչ տոն պիտո յե լինի, Հարություն», հարցրեց քահա-
 նան:

— Ձեմ իմանում, տերտեր ջան, այսորյան ժամասացությու-
 նը ուրիշ կերպ թվեցավ ինձ, մյուս սովորական կյուրակներէ
 պես չեր:

«Կարծյոք, այսոր հասարակ կյուրակի յե, բայց ավելի լավ
 կլինի տոնացուցին նայել. այս ասելով, տեր-Սարգիսը կրկին
 մտավ յեկեղեցին:

— Տերտերին ի՞նչ ես նեղացնում, տանուտեր, ձայն տվեց
 դղիր Վանեսը, այսոր կյուրակի յե ահա, ով չգիտե:

«Ձայնդ կտրիր, կտորած գղալի պես կրկին մեջ ընկավ. քեզ
 քանի անգամ ասել եմ, վոր տանուտիրոջ բաների մեջ մի՛ խառն-
 վիր. դնա, կորի՛ր դյուղամեջ, կարելի յե հարկահան և յեկել
 դիվանդեուց:

Գղիր Վանեսը ծոծրակը քորելով, սուս փուս վեր կացավ
 զնաց:—

— Տոնացուցին նայեցի, վոչինչ տոն չկա, տանուտեր, ասաց
 քահանան— բայց ինչո՞ւ համար քեզ այդպես յերեվեցավ:—

«Տերտեր ջան, ի՞նչ առնեմ, ամեն կյուրակի որ ժամը միշտ
 սկզբից ելիր սկսում, այսինքն առաջ «Հայր մեր» հետո «Տեր զի
 բաղում» հետո «Առավոտ լուսո» և այլն և այլն. բայց այսոր
 ուղղակի շարականներից սկսար:—

— Դորա համար ևս հարցնում, որհնված, ինչպես չե. այս
 որ ևս սկզբից սկսա, բայց վորովհետև լուսացել եր, յես յետա-
 ցել ելի, այս պատճառով իմ տանա արդեն սկսա ժամասացու-
 թյունը և մինչև գալս շարականներին հասա:

«Յես դարձացա, պատասխանեց Հարությունը— կարծեցի թե
 տոն որ և:

— Ձե, Հարություն, այդ դարձանալու բան չե. մի՞թե այս
 առաջին անգամն և, որհնված. յես միշտ, յերբ յետանում եմ,
 ճանապարհին ժամ ասելով եմ գալիս:

«Տերտեր ջան, մի՞թե մեզք չե, յեկեղեցուց դուրս ժամ
 ասել:

— Վահ, որհնված, ի՞նչ մեզքի բան կա, կարելի յե գյու-
 ղումը չենք, այլ անտատումը, ուր յեկեղեցու հոտ ևս չկա, ու-

րեմն ի՞նչ առնենք այնտեղ: Ե՛հ, տանուտեր, այժմյան ժամանակը այդպիսի բաները ընդունում է: Աշխարհը քանի առաջ է գնում, այնքան մեծ խելք ու իմաստություն է ստանում:

«Յես մեղա ասուածո, տերտեր ջան, դու ինձ ներիր, յես սխալվեցա, ի՞նչ առնենք, աշխարհական մարդիկ ենք, քահանայական գործերը ի՞նչ մեր խելքի կերակուրն են: Այդքան իմաստություն մեզ ո՞վ է տվել:

Ապա Հարությունը և տեր-Սարգիսը լուեցին, իսկ մյուս ծերերը ձայնով սկսան խոսել:

— Յերանի իմանամ, տանուտերը ինչո՞ւ յե տերտերին ներություն տալիս. ա՛յ որհնածի վորդի, ինչ վոր ասում է, լսի՛ր, քահանայ յե, մի՞թե կարող է նա սուտ ասել, կամաց ապաց մի ծեր:—

«Այդքան վոր հասկացող լինի, այո՛ լավ է, պատասխանեց մյուս ծերը, մարդ դու, վերջդ բարի, ո՞ւմ հետ ես վիճում. յեթե գիր կարդալ իմանայիր գոնե, գլուխը քարը: Աստված սիրես, տես, վտտերը տերտերի հետ է կամենում պարզել, չի իմանում, վոր ժամանակիս տերտերները յուրյանց գրչով, թղթով ու թանաքով աշխարհս յերկնքի տեղ են դնում, յերկինքը— աշխարհիս:

— Ճշմարիտ ես ասում, յեղբայր. ժամանակը միանգամայն փոխվել է, այժմյան քահանաների հետ այլևս խոսել չի կարելի: Ահա քեզ որինակ Մոխրոտանց քաջալ Միմոնի սղար Շիրիկի Մաթոսը. կարծեմ, դու նորան լավ կճանաչես:

«Վահ, ինչպես չեմ ճանաչում. անցած տարի նա մեր ջաղացպանն էր, հետո գութանի մաճկալ դարձավ, յերկար մորուք ունեք, մի ալեբրդ անուևով ևս գյուղամ էյին կանչում նորան, կամ բուրդ:»

— Այո, իսկապես նա ինքն է, քո ասածն է, դու իհարկե լավ գիտես, վոր նա առաջ վոչինչ չգիտեր, մինչև անգամ յեզեզեցո փոքրիկ պատկերազարդ գիրքը ևս կզկզալով էր կարդում:

«Վահ, որհնած, նա յեթե բան գիտացել էր, ջաղացպան կոմ մաճկալ կդառնար, պատասխանեց մյուս ծերը:

— Չե, բանը այդ չէ, վոր նա վոչինչ չգիտեր, այլ թե աստված ինչու յե այդպիսիներին իմաստություն տալիս: Նա յերկու

ամիս տերտերի մոտ մի քանի յերգեր շարականեց, մի քանի աղոթք մաշտոցից ուսավ և մորուքն ևս շարակած գնաց ուղղակի քաղաք: Յեղ ի՞նչ ես կարծում, ի՞նչ խորհրդով:—

«Եհ, ի՞նչ խորհրդով պիտո յե գնար, յեթե վոչ, այլուր տանել ծախելու:

— Արդարև, դու ևս ճշմարիտ ես ասում, նա այլուր տաքավ, բայց չկարծես թե ծախելու. չե, այլ ընծա տալու, և ո՞ւր է գնում նա, ուղղակի կանդատորը:—

«Ի՞նչ խորհրդով է գնում կանդատորը, յեղբայր. նա ի՞նչ գիտե, վոր կամենում է գրագիր դառնալ:

— Ի՞նչ գրագիր, ի՞նչ մրագիր. գնաց թե չե, մի ամսից հետո լսեցինք թե քահանայ յե ձեռնադրվել և քառասունքի մեջ է. գրել էր յուրյանց տունը թե «փառք ասուածո, ձեռնագրվեցա, քառասունքի մեջ եմ, ինձ լավ պատիվ են տալիս, ամեն ոք ընտիր-ընտիր կերակուրներ եմ ուտում, խնդրեմ իմ համար լավ մաճառ պատրաստեք, վոր դամ թե չե, առաջին պատարագը տունեմ, ապա մի լսով ճաշ ուտեմ իմ բարեկամներիս հետ»:

«Ճշմարիտ ես ասում, վայ ինչ. ահա քեզ զարմանալի բան:

— Այդ վոչինչ է. մեծ բանը դեռևս մնում է. նրան կանդատորումը քննելու ժամանակին, հարցնում են, թե ապա շարականի յններորդ ձայնը սկիւր. քեզ ևս ինչպես հայտնի յե, շարականումը իններորդ ձայն չկա, բոլորը ութ են: Բայց նա մի վոտդ՝ առաջ է գնում, մյուսը դեպի յետ և ասում է. «Մտադ եմ, իններորդ ձայն չկա»: Տես, վորպիսի համարձակություն է:

«Փառք քեզ, աստված, մեռնեմ քո վողորմությանը, սորա համար են ասում, թե գրիչ ածողի խելքին խելք հասանել կարող չե. ով վոր հողեւորական է դառնում, նորա իմաստությունը այնպես է շտտանում, վոր սիրտը յերկու գլխանե քար է դառնում, այլ վոչ գործակալից է վախում, վո՛չ հաջորդից և վո՛չ վարդապետից, բայց ասա տեսնեմ.....»

Գեռևս այս խոսքերը ծերի բերանումն էյին, հանկարծ մի յերիտասարդ հեվալով ընկավ յեկեղեցու սրահը և շտապով պատմեց տանուտիրոջը, վոր մի հարկահան է յեկել և գզիք վանեսին ծեծում է, և բարկացած, պահանջում է տանուտերը: Հարությունի յերեսի գույնը թուավ, նա միանգամայն մոռացավ

և կիրակիին և տերտերը և ժողովուրդը, շտապով գնաց գյուղամեջ:

2.

Բոլոր ժողովուրդը ցրվեցաւ: Տեր-Սարգիսը մորուքը դրամբացնելով, դաւազանը սլտուտ տարով, գնաց յուր տուն: Նա փոխեց յուր հանդերձը կամ, լաւ ևս ասել, ինքը փոխվեցաւ, այսինքն վերնազգեստը հանեց, և մնացյալ հանդերձի դրոշակները (փեշերը) հավաքեց վարտիքի մեջ: Վեր կալավ մանգաղը, ձիու վերա հեծաւ և գնաց անդը, այն որ ձին կերակրելու համար, խոտ հնձելու: Տեղ հասած, կապեց նա ձին արախ ախումբ և ինքը խոտից մի յաւ բեռն շինելուց հետո, ծառի հովանու տակ հանդոտացաւ:

Այն միջոցին, յերբ մեր պատվելի քահանան, արձակ ողի մեջ վայելում էր մի անուշ ջուր, հանկարծ գյուղումը դղրդյուն բարձրացաւ: Մի բովականին տարիքով, մեծատուն կին փոր յերկու ամիս հիվանդ էր, սաստիկ դժվարացաւ, համարյա մերձ է մահ: Նորա վորդիքը շարած, չգիտեյին ինչ առնեն. տունը սգով լցվեցաւ: Իսկույն մարդ ուղարկեցին քահանա բերելու, փոր հիվանդը հաղորդվի, բայց նորա բախտից քահանան ծառի տակին քնած է: Ուշարկած մարդը լուր բերեց թե քահանան ձիով ուրիշ տեղ է գնացել: Հիվանդը գրեթե հոգեվարքի մեջ էր: Անճարացած, գյուղի մեջ դեպի ամեն կողմ մարդիկ ուղարկեցին, փորոնելու քահանայն, բայց փորոնողը դատարկաձեռն յետ դարձան: Բայց մի յերիտասարդ, ձիով տուն գալու ժամանակ հեռվից ճանաչեց քահանայի սպիտակ ձին. կայծակի նման հասաւ. տեսաւ, փոր արժանապատիվ քահանան քողցր քնի մեջ խորասուշյ է յեղել: Յերիտասարդը շատ ձայն տվեց, բայց քնածը չարթնացաւ. վերջապես հարկ յեղաւ որորել նորան: Քահանան մի կողմից մյուս կողմի վրա շրջվելով, սկսաւ մոմուացնել: Յերիտասարդը առաջ տարաւ յուր որորանքը. դարձյալ քահանան մյուս կողմի վերա շրջվելով, ասաց «Հրոժարիմք ի ստամայի» լայց վարթեցաւ վոչ:

— Տերտեր, փեշ կաց, Ծահագարենց Զավահիրը հոգին տալիս է, ձայնարկեց յերիտասարդը, բայց տեր-Սարգիսը քնի կպարյա դրկախառնության մեջ մին այս կողմը, մին այն կողմը

ձգվելով, մրմնջում էր «Տե՛ր, հան ի բանտ գանձն իմ». «Դու յես քահանա հավետյան ըստ կարգին Մելիքսեղեկի»: Յերկար որորվելուց հետո վերջապես դարթեցաւ մեր քահանան և աչքերը տորեկով աւաց:

«Հը... ի՞նչ է, ի՞նչ անցք կա, ձին թոկը կարել փախե՞լ է:

— Տերտեր, դարթի, Ծահագարենց Զավահիրը աներեց յեղաւ:

«Ի՞նչ, ա՛յ տղա, շարձը ասա, ասում ես ջրաղացը այրվե՞ցաւ:

— Ձե, չե, Զավահիրը մեռնում է, աւաց յերիտասարդը և կոննց վեր քաշեց:

Յերկուքն ևս ձի նստած, շտապով հասան գյուղը: Բայց մասնատուվը յեկեղեցումն էր: Մինչև ժամկոչը դառն, մասնատուվը բերեցին և մինչև քահանան գնաց, հիվանդը արդեն մեռել էր: Վորդիքը, բարեկամները և դրացիները մեռելի շուրջը պատած, լաց եյին լինում: Տեր-Սարգիսը տուն մտնելով, բաղմուխունը հեռացրեց և չհավատարով թե հիվանդը արդեն մեռած էր, կամեցաւ հաղորդել նորան: Ծատ աշխատեց, բայց հանդուցելու բերանը չկաբողացաւ բանալ: Անճարացած կամեցաւ վերջին հնարը դործ դնել. այն է, հրամայեց մի դղալ բեշել, փորի կոթով փոքր ինչ յետ քարչեց ստամները և նշխարի մասը ջրի հետ խառնելով, ամեց բերանը և հանդուցելու դուրսը բարձր բռնեց, վոր հեշտությամբ կուլ գնա:

«Ի՞նչ էս աշնում, տերտեր, ասաց ժամկոչը,— արդեն շատ ժամանակ է, վոր մեռել է:

— Ձե, դեռես չի մեռել, մարմինը տաք է, հույս կա առողջանալու, դու սոսա դոցա, փոր լաց չլինին, ըստ փորում հոգին կրարկանա ու կիախչի. նա լացը չի սիրում. այս ասելով, ալիւիչ ջուր էր անում հանդուցելու բերանը:

«Այս ի՞նչ է ասում տերտերը, ասաց ժամկոչը դեպի մյուս կողմը— «հոգին կրարկանա ու կիախչի» կարծես, դորա հոգին թեւ փոր լինի, ա՞յ նոր-նոր հրաչքներ. Զավահիրը մեռել է, հոգին դեռ կենդանի պետք է լինի, վա՞յ քեղ, խելք:

— Ծատ մի խոտիք, հիմար, բարկությամբ պատասխանեց տեր-Սարգիսը— կարելի յե, հոգու կեսը դեռես մարմնի մեջ է: Ամենեքանքը դարմացած նայում եյին քահանայի արարքի վե-

բա: Երջակա մարդերի արտասուքը սառեցավ, դեմքերը ընդու-
 եկցին վո՛չ տրտմության և վո՛չ ուրախության հայտնություն:
 Տեր-Սարգիսը շատ աշխատեց հրաշագործություն անել, բայց
 չկարողացավ: Հույսը միանգամայն կտրած, սկսավ ննջեցելու
 վերա «հողոցն հանդուցելոց» կարգալ, վորդիները մխիթարել
 և պատվիրեց, վոր թաղման պատրաստություն տեսնեն: Ինքն
 ևս, ինչպես առաջ, հանդերձը վարտիքի մեջ հավաքած, ժամկո-
 չի հետ խոսելով գնում եր դեպի յեկեղեցին:—

«Ինչո՞ւ յես տխուր Ծիտուլ, հարցրեց տեր-Սարգիսը:

— Ննջեցելու վորդիները շատ խղճալի յեն ինձ, տերտեր
 չան:

«Ե՛հ, որհնված, ո՞վ ե միշտ կենդանի մնացել, վոր մենք
 մնանք. ամենքս ևս մահու վորդիք ենք, առակն ասում ե. այսոր
 կյանք, եզուց մահ:

— Այդ այդպես ե, բայց.....

«Ծիտուլ, դու ժամկոչ ես, լավ կիմանաս, Չավահիրը ընտիր
 փողպուտ ունի, թե՛ չ: այս մտտերումս նոր հանդերձեղեն չե՞
 կարել:

— Ինչպես չե, լավ հագուստներ ունի, բայց ունի թե չու-
 ՛րի, ինձ ի՞նչ:

«Ի՞նչ ես խոսում, ա՞յ մարդ. արխալուղը քեզ կտամ կնոջդ
 համար: Կարծյոք պատվական գինի ևս ունին, չե՞, ժամահա-
 րին կուշտ կիմենք. բայց դոքա պիտո յե արծաթ ևս ունենան:

— Ունին մի քանի մանեթ արծաթ. բայց յերբ պիտո յե
 թաղենք, հարցրեց Ծիտուլը:

«Այսոր կթաղենք, քանի դեռևս որ կա, պատասխանեց քա-
 հանան:

— Յեթե այսոր թաղենք, ինձ վոչինչ չեն տալու, կսես,
 գիշերը մեռելին չես պահել յեկեղեցու մեջ:

Յեթե այդպես ե, ուրեմն եզուց կթաղենք, կասեմ, այսոր
 սուրբ Հայրապետները չեն հրամայել մեռյալ թաղել:

— Այդպես արա, տերտեր ջան, ո՞վ գիտե, յերբ դարձյալ
 կպատահի վոր մեռներ մի մարդ, այդ շատ հուշ կլինի:

«Միամիտ կացիր, իմ ձեռիս ե, ինչպես կամենամ, այնպես
 կտեսրիմնեմ: Այսպես խոսելով, մասնատուփը դրեցին յեկեղեցու
 մեջ և յուրաքանչյուրը դնաց յուր տուն:—

Վորովհետև մինչև այժմ վիպասանությանս գլխավոր հան-
 դիսակատարը տեր-Սարգիսն եր, իսկ յերկրորդականը Ծիտուլը
 ժամկոչը, վասնորո պիկորդ չեմ համարում փոքր ինչ տեղեկու-
 թյուն տալ նոցա մասին: Ծիտուլը համարյա թե յերեսուն և հինգ
 տարեկան մարդ եր, միջակ հասակով: Նորա աչքերը սյավ և
 խոր ընկած էին: Հայը ըստ մեծի մասին արծալի կուուցի նման
 կեռ քիթ ունի, բայց Ծիտուլը բացառություն եր այդ կանոնից:
 Նա կարճունչ եր (քիթը պատ յեր) այնպես, վոր քթածակերը
 ուղղահայաց էին: Եթե ունքի հետ: Վերին շուրթը սաստիկ դուրս
 ընկած, քիթ առջև մի աման եր շինում: Ծիտուլը չեր ծխում,
 բայց սորա փոխանակ քթախոտ եր քաշում: Յուրա յեղանակին,
 յերբեմն նա չեր կամենում ձեռները դրպանից հանել և քիթը
 սրբել: Ծիտուլի վերա կար մի պատառոտուն մուշտակ, վոր
 կարելի յե, կողոպուտ լիներ: Չեռների վերա յերկուպատիկ
 կեղտ կար: Յեղունդները յերկար, և յուրաքանչյուրի տակ կի-
 սաղեղի պես սյավ ցեխի դոտիներ կային:

Ծիտուլը մինչև այդ հասակը յուր կյանքը ժամկոչու-
 թյան մեջ եր անցուցել, ըստ վորում ծնողքը այդպես էին ա-
 վանդել: Նորա ծնողքը վորդիք էին ծնում, բայց նոցանից վոչ
 մինը չեր հասանում վեց տարեկանի, այլ վաղաժամանակյա մե-
 առնում եր: Նոցա ծնած էին հինգ վորդիք, և հինգն ևս այս-
 պես գնացել էին և յարհից: Ծատ էին աղաչում աստված,
 շատ տեղեր էին ուխտ գնում, շատ մատաղներ էին մորթում,
 բայց բոլորը դուր և անողուտ: Յերբ վոր Ծիտուլը դեռ մոր փո-
 րումն եր, և ահա մի գիշեր յերազ տեսավ նրա մայրը այսպես
 յերազի մեջ յերեկեցավ նորա աչքի առջև մի լայնարձակ դաշտ և
 ինքը դաշտի ծայրումը, մի փոքրիկ բլրակի վերա ծուներ դրած
 աղթում եր: Յեվ ահա դաշտի մյուս ծայրից, սև ամպի հիջից,
 դուրս յեկավ սպիտակ ձիավոր, հրեղեն նիզակը ձեռին, և ար-
 շավում եր դեպի բլրակը: Սպիտակ ձիու վտտերից հողի կտոր-
 ները դղրդվելով բարձրանում էին: Քանի ձիավորը տեսնում
 եր բլրակին, այնքան ևս նորա քամակից սև ամպը ծածկում եր
 բոլոր դաշտը, իսկ յերբ հասավ բլրակի գագաթը,
 սև ամպը բլրակի վերա մի շրջանակ կազմեց, վո-
 րի մեջտեղ գտանվում էին սպիտակ ձիավորը և Ծիտու-

լի մայրը: Սեւթուրը ամպը փոքր առ փոքր կարմիր գրակի դուշն ստացավ, փոքրի ցոլմունքը բոցեղեն ճառագայթների նման դեպի յերկինք ելին բարձրանում: Այն բոպեյին, Ծիտուլի մոր յեզուն կապվեցավ, տեսանելով այսպիսի տեսարան, և դարձուրեւիլ ձիւղորը յուր առջև կանգնած, նիզակն ևս ձեռին: Հանկարծ ասաց ձիւղորը. «Կին դու, վեր կաց, դարձիր դեպի տուն քո աղոթքը ստուծուն լսելի յեղավ, քեզ փորդի կծնալի, փորին կտանես այսինչ ուրաւանդի, և այնտեղ մատուղ կանես մի ծիտ և մի ուլ, աչքդես և աստուծո սուրբ հրամանը: Վորդուդ անունը կդնես Ծիտուլ, և յերբ փոր վեց տարեկան կդառնա, թող յեկեղեղումը ծտայե մինչև կհաճը»: Այս ասելուց հետո, խեղույն աներևութացավ ձիւղորը, աներևութացավ և այն շրջապատող ամպը: Յերագից յերբ փոր դարթնեց, տեսավ, փոր անկողնի ծածկոցը վերայից մյուս կողմն է ընկել և ձմեռան կես շիշերի ցրտագին հոգմը փչում է նորա չորս կողմը: Ահա՛, տես, թե ի՞նչ դիտվածով եր մեր ժամկոչը ստացել անունս Ծիտուլ կամ ի՞նչպես նա մինչև այդ հասակը ժամկոչ է յեղել: Ծիտուլը փոչինչ բանի հասկացողութուն չունեք: Նա կարծում եր, թե աշխարհս բազկանում է միայն այն յերկիրներէջ փոր միայն տեսել է նա: Ասում եր, աստված այն խորհրդով է միայն ստեղծել մարդիկը, փոր ուտեն, խմեն, քնեն, յեկեղեցի գնան և վերջապես մեռանին: Բնությամբ շատ հանդարտ եր, յեթե կտայիր, կանուր, յեթե չն, միանգամայն լուռ կմնար: Նա ամենեւի՞ն վաղվայն որի համար սովոր չեր մտածել, յեթե մտածեր ևս, այդ լինում եր շատ սեւեւ: Նա ժամերը համարում եր, արդյոք ցերեկը շուտով կմթնի, կամ մութը շուտով կլուսանա, փոր գնա և փողովուրդը հրավիրե դեպի ժամ:

Տեր-Սարգսի բնությանը ամենեւին հակառակ եր Ծիտուլի բնությունը: Տեր-Սարգսը կարծում եր, փոր բացի յուրանից չկա փոչ մի դիտուեն և փոչ մի լուսավորյալ մարդ: Նորա հոգին անհոգ եր. բանի դու նորա ցանկությունը ճշտությամբ կատարելի, այնքան ևս շատ կպահանջեր նա. մի խոսքով, աչքածակ մարդ եր: Նա իբևե խորամանկ և հնարագետ եր, բայց մաքի անկրթությունը արգելք եր լինում նորա ավելի բարձր և արհիւժգամանը, և տանում եր նորան դեպի խարեբայություն: Նա ցանկանում եր, փոր յուր փորը դատարկ չլինի, մարմինը մերկ

չմնա և յուր ընտանիքը կարոտութենից ազատ ու ապահով լինին, թող ուրիշները սովամահ լինեյին, ցավ չկա: Տեր-Սարգսի կարծիքով, յեթե մի հայր կամենում է, փոր յուր վորդիքը լաշ կրթություն ստանան և լավ մարդիկ դառնան, պարտակոն է միշտ հնազանդության և ծտայության մեջ պահել նորանց և, յեթե կարելի յե, դավաղանը գլխից անպակաս առնել: Տեր-Սարգսը քառասուն է յոթն տարեկան մարդ եր, յերկայն հասակով, մեծ քթով և քառանկյունի մորուքով: Նորա գրակը ներքելից նեղանում եր, լակ վերեկից լայն և տափակ եր: Բայց թող հերիքանա մեզ այս մանր-մուկ բաների ծանոթությունը և արտաքին բաների նկարագրությունը: Այժմ դարձուցանենք խոսքը մեր ճառի գլխավոր նյութի, մեր արժանապատիվ Սարգիս քահանայի վերա և քննենք նորա հոգքը և մտածությունքը յուր տան պատելի մեջ:

4.

Տեր-Սարգիսը փոքր ինչ վաստակած, թեք ընկավ յուր հին մահճակալի պերա, յերեսը դեպի յերկինքը, և զանազան ցնորքի մեջ խորասույց յեղավ: Նա ինքն յուր մեջ մտածում եր. «Շատ զարմանալի բան է, փոր ահա ամբողջ վեց ամիս անց է կացել, բայց մի հանդուրձյալ չեղավ. յերեւի, աստված գլխիս բարկացել է, կամի, փոր դոպակներս սոված կոտորվին: Թեպետ մկրտություն լինում եր, դոր որինակ արդեն պատահել էյին հինգ հատ, բայց դա այնքան շահավետ չի մարդուս. մի փոր հաց է և մի քանի շահի արծաթ, առանց դորան ևս կարելի յե կյանք վարել: Հա՛, մի ուրիշ բան է, յեթե ննջեցյալ պատահի. դա բավական մեծ շահաստացության արդյուր է: Ահա՛, դոր որինակ, Շահնազարենց Չափահիրը մեռավ, այսոր բավական ոգուտ ունիմ: Ինչքան փոքր ևս լինեյին ստանալիքս, այնուամենայնիվ հինգ մանեթի չափ մուսա ունիմ: Ինչպես ժամկոչ Ծիտուլն ասում եր, պիտո յե, փոր Չափահիրը, բացի վերայի հաղուսաներից, նոր կարածն ևս ունենա: Յեթե նորա մեծ փորդին այդ նոր հանդերձանքը չթաղցնե, շատ լավ բան կլինի: Բայց տարաբախտությունն այն է, փոր ժամկոչին ևս աբխալուդը խոստացա, այս մեքանումս չարաչար սխալվեցա: Բայց մի հնարքով կարելի յե

նորան խաբել. կասեմ, թե արխալուզը արեացուն պիտի հասանե, և արեացուն իմ վորդիս ե. ուրեմն այլ ինչ հոգալի ցալ կա: Բայց դիցուք թե բոլոր կողոպուտը ձեռիս ե, միայն դրանով մի մեծ բան դուրս գալու չեր. պիտո յե ուրիշ ոգուտ ևս դուրս քաշել Զավահիրի վորդու հոգուց: Թաղման վարձ ինչքան նկահանջեմ, վոր սովորականից փոքր ինչ շատ լինի: Սովորականը մի մանեթ ե, բայց յես մի մանեթ հիսուն կոպեկ կառնում, իսկ յեթե խելագարվին, ավելի տան, այն ևս իմ ավելորդ սուտը թող լինի:

Բացի դորաննց, խաչահամբույր ևս պիտո յե տան, բայց այստեղ հույս կա շատ արծաթ հավաքելու, ըստ վորում հանգուցյալը յեկեղեցուց դուրս բերած, պիտո յե հանդիստ դնել. այն ժամանակ, իհարկե, ինչպես սովորութիւնն կա, պիտո յե քահանան մաշտոցը դնե մեռելի սրտին: Այսպես ահա հույս կա ըստ բավականին շատ հավաքել, պատճառ, վոչ թե միայն Զավահիրի վորդիքը, աղջկունքը, այլև բարեկամները, մինչև անգամ դրացիքը պիտո յե մաշտոցի վերա արծաթ դնեն: Սորանից ավելի, կարծեմ, վոր արծաթի կողմից ուրիշ յեկամուտ չունիմ, բայց այս ճեռնուտ չե. մինչև յե՞ր սպասեմ յես, վոր լինի մի այլ ննջեցյալ: Այս որհնվածների ճակատն ևս այսպե պինդ ե, վոր ինքը մահը վախենում ե մոտենալ դոցա: Ինչպե պիտո յե վարվի վոր մի քանի շահի ավելի ոգուտ հասանի ինձ: Հա՛, գիտեմ, նոր գյուտ հնարեցի. կասեմ, թե Առաջնորդը հրամայել ե ուխտավորների յեկեղեցիքը նորոգելու համար դրամ փողովել. այս պատճառով գերեզմաններումը ևս աչքերս կփակեմ և մաշտոցը կդնեմ մեռելի սրտին, ինչ կամի, թող լինի:

Արծաթի հաշիվը վորպես և իցե ավարտեցինք. այժմ ուտելիքի վերա քննութիւնն առնենք: Ժամարարը, ի հարկե, պարտական ե յերեկոյին սաղմոս քարել հանգուցելու հոգու փրկութեան համար: Այս պատճառով ստանալու յե նա մեռելատանից մի լավ ընթրիք, մի մեծ մոմ և յերկու չափ գինի: Այս ամենը սաղմոս քարելու համար ե. բայց թե պիտո յեր ինձ ամբողջ գիշերը նստել և սաղմոս ասել. բայց ի՞նչ հոր վորդի յեմ. կարծես հայրս շատ կարգացող եր, վոր վորդին ևս յուր ծնողին արժանի գավակ լինի: Ի՞նչ հարկավոր եր զուր և անդուտ քունս կտրել և սաղմոս ասել: Տղայութեանս ժամանակին վար-

ժապետիս մոտ մի անգամ կարգացել եմ, բավական ե. վորքան շատ կարգաս, այնքան ևս համը կերթա: Յեթե այսոր այն յերիտասարդը քունս խախտած չլինեք դաշտումը, կարող եյի այս գիշեր մի քանի թերթ կարդալ սաղմոսագրքից, բայց վոր նա ավերեց իմ քաղցր քունս, դորա քենը հանելով, չե պիտո կարդալ:

Յեթե ժամկոչ Ծիտուլի խոսքին լսած և կամք տված չլինեյի՛ ննջեցյալը եզուց թաղելու, ապա այնքան ոգուտներից խապա կզրկվեյի: Ճշմարիտ ե սասած, թե յերբեմն հիմարի խոսքին լսել լավ ե, վոր ահա՛ կատարվեցալ այսոր: Յես գիտեմ, վոտ այս յերեկո Ծիտուլի համար ընթրիք և գինի կրերեն, ըստ վորում նա պիտո յե մեռելին գողուշանս յեկեղեցու մեջ: Ուրեմն ինչպես վարվեմ, վոր գինու կեսը լինի իմ բաժինս. գիտեմ, ինչպես կը վարվեմ. ահա կուզարկեմ իմ մեծ վորդիս յեկեղեցին իրբև տիրացու, վորպես թե նա ևս ունի իրավունք յեկեղեցում մնալու: Սորանից յերկու կողմում ինձ ոգուտ կգա. առաջին, վոր վորդուտ տան կերած հացը կմնա մեզ. յերկրորդ, վոր յեկեղեցումը կուտի և չի թողնելու, վոր Ծիտուլը միայն հափշտակի այնքան բարութիւնքը:

Զարմանալի բան. մեր տանն ևս ճաշ եմ ուտում, ուրիշների տանն ևս, բայց վոչ մի տեղ այնպես համով չի լինում հացը, ինչպես մեռելատանը: Չգիտեմ ինչ ե սորա պատճառը: Յեթե կերակուրը այդտեղ լավ են պատրաստում, մի՞թե ուրիշ տեղեր անխույթ են այդ մասին. յեթե նորանից ե, վոր մեռելի կարգը կատարում ենք, բայց իմ տանս ավետարան ևս կա կարճ ասեմ, այդ մի դաղտնիք ե իմ համար:

Ճշմարիտ, մեղք ե, յեթե այն ճաշից մի քանի անգամ չուտեմ: Յես Ծիտուլին խրատ կտամ, վոր նա ասե Զավահիրի մեծ վորդուն, թե տերտերը հանգուցելու սիրո համար կամենում ե մի քանի գիշեր կարգով սաղմոս ասել, վասնորո ամոթ կլինի, յեթե գոնյա ճաշու սեղան ևս չուղարկեյիք քահանային: Այսպես սով կարելի յե նոցա տանից բան դուրս քարշել, թե չե, ուրիշ ճար չկա»:

Տեր-Սարգիսը ահա՛ այսպիսի մտածմունքի մեջ եր: Միևնույն միջոցին Ծիտուլ ժամկոչն ևս յուր հոգսումն եր: Նա լավ

գիտեր, վոր Տեր-Սարգիսը նորան վոչինչ տալու չեր բոլոր յե-
կամտից, ըստ վորում այդ առաջին անգամը՝ չէ:

Արեգակն արդեն թեքվել էր արեւմտյան հորիզոնը: Բոլոր
գյուղականքը ժողոված էյին հանգուցելու մոտ և ամեն բան պատ-
րաստած, քահանային էյին սպասում: Մի քանի ժամից հետո տեր-
Սարգիսը և մի քանի տիրացուներ հավաքվեցան այնտեղ և կարգ
կատարելուց հետո հանգուցայլը բերեցին յեկեղեցի: Չավահրի
վորդիքը շարքով հետևում էյին և շատ բարձր ձայնով լաց էյին
լինում: Բայց նորա միջակ վորդին, մոր սիրելին, սաստիկ մոր-
մոքվելով արտասվում էր և ստեպ ստեպ կրկնում էր. «վա՛յ
մայր ջան, վա՛յ մայրիկ ջան, վա՛յ հոգի ջան, դու յերբ էյիր
մեռել, վոր այժմ մեռել ես, յես այնպես էյի կարծում, թե դու
դեռևս սրահի մեջ նստած, ճախարակով թիլ ես մանում»:

Յերբ վոր մթնեցավ, ննջեցայլը ժամկոչին հանձնեցին, ամե-
նեքյան գնացին յուրյանց տուները:

5.

Առաժոտուն, արեւարացին պատարագը սկսվեցավ: Այն
փայտյա տախտակը, վոր դանդակի փոխանակ կախ էր սված,
շատ ծեծելուց ծակվել էր: Սգավորները յեկեղեցու մեջ, ինչպես
սովորութունն է, հանգուցելու շուրջը պատած, կամաց ու բարակ
ձայնով լաց էյին լինում: Պատարագը յերբ վոր վերջացավ, ժա-
մարարը մի հորդորական և մխիթարական ճառ ասաց ժողովըր-
դի առաջև, վորո պատճենը ավելորդ չենք համարում դնել այս-
տեղ:

Սիրելի ժողովուրդ,

«Այս այն Չավահրին է, վոր մի քանի որ առաջ, ինքն յուր
«Վոտքով գալիս էր այս սուրբ յեկեղեցին, բայց այսօր անդա-
յացած, «դրած է դադարի մեջ և չէ կարող շարժվիլ, մինչև դուք
չբարձրացնեք: Ամեն մինը ձեզանից, թող մտածե, վոր յուրյան
ևս սպասում է այդպիսի վերջ: Ինչպես Ներսես Սորենացին ա-
սում է Աստվածաշնչի քսան և յոթներորդ գլխումը, թե մարդ,
յեթե արդար է, մահվան ժամանակը շուտ է մեռնում, ամենե-

վին չէ չարչարվում ինչպես մեղավորը: Յերեկ դուք ինքներդ
լավ տեսաք, վոր ինչպես արգար էր մեր սիրելի բույր հանդուց-
յալ Չավահրիքը և ինչպես շուտով մեռավ, այնպես, վոր վերա
չհասանելով, գդալով կարողացանք հաղորդել: Ուրեմն ամենքդ էլ
միաբերան ասացեք «աստված վողորմի ննջեցելու հոգուն»:

Այսպես վերջացրեց տեր-Սարգիսը յուր ճառը: Իսկույն ժո-
ղովրդի մեջ փնթփնթոց ընկավ: Մինը ասում էր «աստված վո-
ղորմի», մյուսը դովում էր տերտերի սրտաշարժ ճառը, յերրորդը
պարմանում էր նորա քաջ հիշողության վերա, վոր Աստվածա-
շնչի քսան և յոթներորդ գլխից պահել էր մաքում, և այլն և
այլն:—

Պատարագից հետո ննջեցայլը տարան թաղելու, ապա գնա-
ցին ամենքը հաց ուտելու մեռելատանը: Մեռելի թաղման պատ-
մուքի լուսնը արած, այժմ յես դառնանք դեպի կենդանիքը:

Տեր-Սարգիսը հաստ վորը քարշ տալով գնում էր տուն: Դեռ
տունն չհասած, նորա ութամյա աղջիկը վազելով յեկավ առաջ և
սկսավ մանկական անմեղ հարցմունք առաջարկել հորը:

— Տերտեր. ինձ ին՞չ ես բերել ժամից—հարցնում էր Աննան:

«Շաք բան եմ բերել, սիրելի աղջիկս, արի գնանք տուն,
ժայրդ տա՞նն է:

— Չե, գնաց այգին, իմ համար խնձոր բերելու. ինչ վոր
մայրս կրեր ինձ, գորանից վոչինչ տալու չեմ քեզ, տերտեր:

«Ինչու չես տալու, Աննա ջան, քո հայրը չեմ»:

— Ապա ինչու իմ համար ժամից նշխար չես բերել:

«Եզուց կրերեմ, աղջիկս. այսօր պահք (պաս) է:—

Տեր-Սարգիսը հանդատացավ յուր մահճի մեջ և ստեպ ստեպ
փչում էր բերանից «ամֆ ամֆ» յերբ վոր գվարճասեր Աննան ծի-
ծաղելով նորա մորուքը ձգում էր: Բայց մանկական գվարճալի
խաղը յերկարատե չեցավ: Մի ձիավոր, սրահի մոտ «որհնյա
տեր» ասաց և ձիուց ներքև թռավ: Աննան ցուցական մատը բե-
րանին դրած, աչքերը լայն բաց արած, անթարթ նայում էր յեկ-
վորի վերա: «Աստված որհնեսցե» Մովսես— պատասխանեց տեր-
Սարգիսը: Մովսեսը ձին կապեց սրահումը, խոտ ևս դրեց անա-
սունի առաջև, ապա յեկավ քահանայի մոտ:—

— Ի՞նչ տեղից ես գալիս, Մովսես—խոսք առաջ տարավ քա-
հանան:

«Ուղղակի մեր գյուղիցն եմ գալիս. շատ շտապով յեկա յես-
այս բողեյիս տեր-Գրիգորն ևս կգա:

— Տեր-Գրիգորը, նա ինչո՞ւ համար ե գալիս:

«Գործակալն ե ուղարկել սորան, վոր առաջ քննե, պատրաս-
տե բոլոր գործերը ախուհետե կգա ինքը գործակալը:

— Ո՞վ կգա, գործակալը:

«Այո, գործակալը:

— Լավ չլսեցի, կրկին ասա, տեսնեմ թե ով կամի գալ:

«Գործակալը կգա, փոքր ինչ ևս բարկացած ե այս մեր գա-
վառի քահանաների վերա, վոր նորան տեսության չեն գնում:

— Մովսես ջան, ասա քո հոգուն մեռնեմ, Կոնստանդին
հրաման, կամ մի ուրիշ տեղեկություն չե՞ս ստացել:

«Չգիտեմ, Կանդատորի՞ց ե թե մանդատորից, միայն սաս-
տիկ հրաման ե ստացել, բոլոր գավառը քննության տակ ձգելու
Ասում են, վանքումը ցորենը հատել ե, գյուղերիցն ևս չեն ու-
ղարկում. այս պատճառով կանդատորի անդամը բարկացել ե և
հրաման ե գրել նորան, վոր ինչքան վանքական ցորեն կա, բո-
լորը ուղարկե:—

— Ուրեմն տեր-Գրիգորը ինչպե՞ս արեց. նա բոլոր վանքակա-
ն ցորենը կերել եր:

«Մի քանի մանեթ դրեց գործակալի ձեռքը, իսկույն
մյուս որին հրամայեց գյուղացիներին, վոր նորից տան:

— Մովսես ջան, ամենների՞ց ևս արծաթ ե ընդունում, թե
յերբեմն աստված գլխին սև քար ե ձգում:

«Չե, ամենից չե ընդունում, յերբեմն այնպե՞ս նեղի մեջ ե
ձգում, վոր աստված աղատե: Եստ չար մարդ ե, առաջին գոր-
ծակալը լավ մարդ եր, պատիվ եր սիրում:

— Ա՛խ, առաջին գործակալի հատը լինելու չե: Առտուծո
գառն եր, ինչ ասեմ: Չորրինակ, ինչ վոր ծիծաղելով կղնեյիք
ձեռքը, կընդունեք, ատանց խոսելու, թեև բոլոր վանքական
ցորենը կերած լինեյիք, բայց ասա.....

«Ահա տեր-Գրիգորն ևս գալիս ե, ջրի ձորից դուրս բարձրա-
նալով, տեսնո՞ւմ ես տերտերը, կապույտ ձիու վերա յե:

— Տեսնում եմ. դու միայն ինձ ասա, Մովսես ջան, այդ
նոր գործակալի անունը ինչպե՞ս ե: Ասում են, քաղաքից նոր ե
յեկել և առաջնորդին ել շատ սիրելի մարդ ե:

— Ինչպե՞ս չե. Առաջնորդի աջո աչքն ե համարյա:

— Անունը ինչպե՞ս ե՞:

«Անունը տեր-Առաքել ե, վղին ել մի պսպղուն խաչ կա:

— Բայց ասում են գլխին սև կամիլաթկա ունի:

«Չգիտեմ, տերտեր ջան, միայն մեկ ասկառի պես բան ունի
գլխին գրած կարմիր գույնով:

— Այո, այդ ե կամիլաթկան, նորան կամիլաթկա յեն ա-
սում, ահա մեր տեր-Գրիգորն ևս այստեղ:

«Որհնյա՛, տեր-Սարգիս:

— Որհնյա, տեր-Գրիգոր:

«Հը... ի՞նչպե՞ս կաս, տեր-Սարգիս, չիրումդ պաշար ունիս,
թե չե, նոր գործակալ տեր-Առաքելը գալիս ե, զգույշ կացիր,
կաշիդ քերթելու յե:

Տեր-Սարգիս թուքը ստեցավ, յերեսի դույնը միանգա-
ժայն թռավ:

— Դե՛հ, ինչ կամենա, թող առնե, աստված նորա հեռ. մեք
հնազանդ ենք:

«Ինչ ինձ ասա, տեր-Սարգիս, սպասելու ժամանակ չե, մահ-
վան դուռն ենք հասել, միայն ցորենը պատրաստի՞ յե, թե վոչ:

— Որհնված, ո՞ւր ե, թե պատրաստի յե, մի հատ մազախ
ևս չես գտնելու տանս մեջ:

«Վա՛յ քո որիդ, իմացիր, վոր կաշիդ վերադ չե կարող
մեալ:

— Ուրեմն, ի՞նչ առնեմ, տեր-Գրիգոր ջան. վո՞ր սուրբի
ողնությունը աղաչեմ, քո հոգուն մեռնեմ, դու փորձված մարդ
ես, մանավանդ, ասում են, գործակալի ձեռը քսել ես, ասա տես-
նեմ, ինչ ճար կա այստեղ:

«Ա՛յ քահանա, ուրեմն ամենեկի՞ն ցորեն չկա. վա՞յ... վա՞յ...
քեզ մի ճար կա, թե կոզնե, ապա թե վոչ կորած ես: Գործակալը
եզուց անպատճառ գալու յե, դու վոչխար, հավ, այժ մորթիր և
մի պատվական ճաշ շինիր, քո և իմ հնարադիտությունս գործ
կղնեմ, տեսնե՞ք, կարելի՞ յե չար գազանի սիրտը կակղացնել:

— Եստ լավ ես ասում, տեր-Գրիգոր ջան, կպատրաստեմ և
յեթե այնպե՞ս առնես, վոր գործակալի աչքումը լավ յերևիմ,
յերեկյան թազած ննջեցելու նոր հանդերձանքը քեզ կընծայեմ:

«Ուրեմն լավ, դու գնա յեկեղեցին, իստակիր, պատկերները

յուրյանց տեղը դիր. յեկեղեցական զգեստները յուրյանց տեղ-
մի խոսքով բոլորը կարգի բեր, հետո արի, փոքր ընթրիք ու-
տենք, սոված եմ. մթնում եմ:

Այսպես բոլորը կատարելուց հետո, ընթրիք արեցին ու թեք
ընկան քնելու, բայց տեր-Սարգիսը մտածում էր վաղվայն որի
դալոցքը: Նա շատ աշխատեց քնել, բայց դարհուրելի պատկեր-
ներ խոտվում էին նորա քունը:

6.

Առաջնորդ արեգակը բավական բարձրացել էր, յերբ տեր-
Սարգիսը ժամը շուտով վերջացրած, յեկել էր տուն և տխուր
նստած էր: Տեր-Գրիգորն ևս մտենալով նորա մտա, հարցրեց.

— Հը... Ի՞նչ համբավ կու աշխարհիս վերա, տեր-Սարգիս,
ինչու յես տխուր, կարծես նավերդ Սև ծովումը խորասուզվել
են:

«Նհ, տեր-Գրիգոր, ինչպես չմտածեմ, քանի գործակալը
միտս է ընկնում, մարմինս դող և բռնում»:

— Որհնյալ քահանա, յես կարծեցի թե մի բան ևս ասում,
յես քեզ յերեկյան որը շատացի՞, վոր դու ճաշ չինիր, քո բանը
լավ կերթա:

«Այդ կողմից հոգս չկա, տեր-Գրիգոր հայր, յես արդեն ու-
ղարկել եմ վոչխար բերելու»:

— Աշխատիր, վոր լավը և պարարտը լինի. տերտերները
միշտ պարարտը կսիրեն:

«Նհ, որհնյալ քահանա, պարարտը ինձ ով տվեց, այսոր լսե-
ցի, վոր գայլը մի կազ վոչխար և վիրավորել, թե կազ և թե
պարարտ, այն և, նորան պիտո յե մորթենք»:

— Այդ մեզ փուլթ չե, գայլ և վիրավորել թե շուն, միայն
թե պարարտ լինի, խոսքը յուզումն է:

«Տեր-Գրիգոր, այդ բոլորը յերկրորդական բան և, միայն ա-
սա ինձ, քո հոգուն մատաղ լինիմ, գործակալի հետ ինչպես խո-
սեմ, վախում եմ, լեզուս կապվի»:

— Հող չկա, քամակումդ կանգնած կլինիմ, և յեթե տեսա-
նեմ, լեզուդ կապվում և, յես ընթացք կտամ խոսքիդ:

«Մի ալույլիսի վողորմութուն արա, տերտեր, գիտես, վոր
լավությանդ փոխարենը կհատուցանեմ»:

— Տեր-Սարգիս, տեսնում ես փո՛րքան ձիավորներ են գալիս-

ահա՛ մինը նոցանից սուաջ և վազում իմաց տալու գործակալի
զալուստը. ահա՛ մոտեցավ. դու գնա՛, տես, հյուրանոցը պատ-
րաստի՞ յե:

Տեր-Սարգիսը շտապով մտավ տուն, իսկ ձիավորը ձիու վե-
րայից ներքե թռչելով, ասաց.

«Որհնյա՛ տեր»:

— Ասոված որհնեսցե, Կարապետ, պատասխանեց տեր-Գրե-
գորը:

«Տեր-Սարգիսը ո՛ւր է, գործակալի համար իջեա՞ն և պատ-
րաստել, թե վո՛չ»:

— Ամեն բան պատրաստի և, Կարապետ, թե կամիս, մտիք
տուն, տեր Սարգիս մոտ:

Կարապետը թուրը կախած, մտրակը ձեռին հպարտաբար
մտավ տուն. տեր-Սարգիսը նստելու տեղերը պատրաստում էր:

«Որհնյա՛ տեր» ձայն տվեց Կարապետը:

Բայց տեր-Սարգիսը պարապած և մտքով չվարած, չնկատեց.
Կարապետը արհամարհանք կարծելով դեպի ինքը, ձայն տվեց
մյուս անգամ փոքր ինչ բարձր.

— Որհնյա՛ տեր:

«Ասոված որհնեսցե, Աղա Չան», իսկույն յես նայելով պա-
տասխանեց քահանան:

— Շո՛ւտ արա, տերտեր, գործակալը գալիս է:

Այս բուպելիս, Աղա Չան: Դու նորա ի՞նչն ևս:

— Յես նորա գրագիրն եմ, ձեռները կողքին դրած պատաս-
խանեց Կարապետը:

«Անունդ ի՞նչպես և, Աղա Չան»:

— Կարապետ և:

«Սուրբ Կարապետը քեզ պահապան լինի»:—

Կարապետը և տեր-Սարգիսը դուրս յեկան:

Գործակալը յուր մարդերով դրսումը կանգնած էր, իսկ գյու-
ղացիք գլխաբաց նորա ձիաները ման էլին անում: Գյուղի ամեն
տանիքի վրա հարս, աղջիկ, կին, մարդ, յերեխա ամենքն ևս ժո-
ղովված անդարձ աչքով նայում էին դեպի տեր-Սարգիս դուռը:
Գործակալ տեր-Առաքելը խոտա փարաջեն հագած, ձեռները մեջ-
քին դրած ման էր գալիս սրահի առաջ: Իսկ նորա ուղեկից մար-
դիկը գզակները վեր կալած, նորա շուրջը պատելով, շարքով

կանգնած եյին և յուրյոնց աչքերը միշտ նորա հետ եյին ման ածում :

— Այս գյուղի քահանայի անունը ի՞նչպես է, խոժոռ դեմքով հարցրեց գործակալը :

Մարդիկ սկսան միմյանց յերեսին նայել և վո՛չ մինը նոցանից չհամարձակվեցավ պատասխանել . միայն տեր-Գրիգորը մոտենալով, ասաց .

«Ծառայդ եմ, անունը տեր-Մարգիս է» :

— Ուրեմն ու՛ր է, ինչու՞ չէ յերևում :

«Այստեղ է, ծառայդ եմ, պատի այն կողմումն է կանգնած» :

Այս բողեյի տեր-Մարգիսը կանչեցին, վոր դեռ չմոտեցած, խոր գլուխ խոնարհեցրեց, հետո դողալով և շուրջը նայելով, մոտեցավ : Տեր-Գրիգորը իսկույն կանգնեց նորա քամակի կողմից :

— Ի՞նչպես ես ապրում, տեր-Մարգիս, մահճակալի վերա նստելով հարցրեց գործակալը :

«Փառք աստուծո, հայր սուրբ, պահպանել է բարի ազոյթ-քրդ» :

— Հայր սուրբ մի՛ առիթ, տերտեր ասա, դա վարդապետ չէ . ահանջումը փչեց տեր-Գրիգորը :

Քանի տարի յե, վոր ձեռնադրվել ես, շարունակեց Տեր-Առաքել գործակալը :

— Յերբ վոր հայրս մեռավ, այն ժամանակ և յես ձեռնադրվեցա :

«Ուրեմն Բրիստոսի վո՞ր թվականին» :

— Բրիստոսի պատիի որից յերկու շաբաթ առաջ :

«Ուրեմն մարտ ամսումը ձեռնադրվեցար» :

— Այո, յերբ վոր իմ միջնակ վորդիս ծնվել եր :

«Որհնյալ քահանա, ուրեմն պարզապես, տեսանեմ, վո՛ր թվին ձեռնադրվեցար, յերևի մոռացել ես» :

— Այո՛, ծառայդ եմ, մոռացել եմ . բայց մաշտոցիս մի կողմումը գրած է թխվը :

Տեր-Առաքելը ձեռը ձգեց և ծիծաղելով յերեսը յես թեքեց : Տեր-Գրիգորը հրավիրեց նորան պատրաստած տունը և բոլոր մեծամարդիկը ևս նոցա յետքից մասն տուն : Տեր-Մարգիսը մնալով, վազեց դեպի կինը և վորդիքը, վորոնք մյուս տան չեմքից նայում եյին, և ասաց .

«Տեսաք, ի՞նչպես համարձակ խոսում եյի, հույս կա, վոր բանս լավ դնա . դուք գնացեք ճաշը պատրաստելու : Գինի ունինք, թե վոչ . յեթե չկա, կանչեցեք Ծիտուլ ժամկոչին» :

Իսկույն դուրս սրձավ Ծիտուլը :

« Ծիտուլ, գնա՛ շուտով Եանհաղարենց տունը և ասա վոր գործակալը լսեց Ջավահրի մահը, շատ տրամեցավ և սարմոս քաղելու համար մի չափի գինի խնդրեց . իմանո՛ւմ ես, Ծիտուլ, մի քանի սուտ ևս դու քեզանից ավելացրու, կարելի յե բան դուրս բարչես» :

— Եստ լավ, տերտեր, շատ լավ, պատասխանեց ժամկոչը և վազեց դեպի Ե հնաղարենց տունը :

Տեր-Սարգիսին կանչեցին գործակալի մոտ և նա կանգնեց սյունի մոտ, իսկ տեր-Գրիգորը սյունի քամակում :

«Քանի՛ տուն ժողովուրդ կա այս գյուղումս», հարցրեց գործակալը :

— Հիսուն տուն են, ծառայդ եմ :

«Այդ հիսուն տան մեջ քանի՛ հողի կլինին» :

— Ութսուն և հինգ հողի կային, մի կին յերեկ մեռավ, մնաց ըը . . . ը . . . ը . . . ի՞նչքան կմնա, յերեսը թեքելով հարցրեց տեր-Գրիգորից :

«Ութսուն և չորս կմնա, մի՛ վախենար, համարձակ խոսիր» :

— Այո, ծառայդ եմ, կմնա ութսուն և չորս : Բաղբամյանց կիրակոսին շուտով յերեսա կծնվի, խոսքը առաջ տարավ տեր-Սարգիսը :

«Ունի՞ յեկեղեցին տարեկան մուտք լավական» :

— Վո՛չ, այս տարի կարկուտը բոլոր արտերը ավերեց, գյուղացիք ամենևին ցորեն չունին, վանքական ցորեն ևս շատ փոքր ժողովեցի

Այս բողեյի յերեսը շրջելով, խնդրեց տեր-Գրիգորին ոգնել նորան :

«Ուրեմն ժողոված ցորենը ի՞նչ արեցեր» խոսքը առաջ տարավ գործակալը :

— Արեղա Հովհաննեսի ձեռով ուղարկեցի Սևանա վանքը : Վանահայրը շատ խնդրել եր և մինչև անդամ կոնդակ եր ուղարկել :

«Ուրեմն գյուղացիք ամենեւին ցորեն չունին»:

— Այո՛, տեր հայր, մեծ սով է նոցա մեջ, նոքա ինքյանք կամենում եյին դալ, ընկնել ձեր վոտերը, աղաչել, վոր մինչև կալերի կասելը սպասեք. բայց յես իբրև ծխատեր քահանա հանձն առա այդ ծանր սղաշտոնը, ձեզ հայտնելու:

«Ուրեմն, կալերը շուտով օ՞ն կասելու»:

— Այո, մի քանի ամսից հետո:

«Շատ բարի, յերբ վոր կալսեն, բոլոր ցորենը ժողովիք և պատրաստիր, ըստ վորում յես գնում եմ այլ դավառ. վերադարձի ժամանակին թղթով կպահանջեմ քեզանից»:

— Հնազանդ եմ ձեր բարձր հրամանին, տեր իմ:

Գործակալը սկսավ ուրիշներէ հետ խոսել:

Տեր-Սարգիսը, տեր-Գրիգորը և Կարապետը դուրս յեկան նոցա մտաից և մյուս տանը ճաշ եյին պատրաստում:

«Աղա Կարապետ, մյուս գյուղերումը գործակալին ի՞նչպես եյին ընդունում, հարցրեց տեր-Սարգիսը»:

— Ամեն տեղ լավ եյին ընդունում, միշտ ընծա եյին բերում և ինձ և նորան:

«Ուրեմն փոքր ինչ կաշառք սիրող ե»:

— Վո՛չ, այնքան կաշառակեր չե, ինչպես առաջին վարդապետը:

«Այդ ինչ վարդապետ եր, Աղա Կարապետ»:

— Վա՞հ, մի՞թե մոռացել ես, տերտեր, այդպիսի արժանահիշատակ մարդը կարելի՞ յե մոռանալ:

«Որհնված, յուրաքանչյուր տարին նոր նոր պոպոզներ են գործակալ ընտրվում, վոր՞ մինը յես միտս սրահեմ. մին ել տեսնես, վոչնչով դալիս են, բայց ընչով գնում են և անդամնալի: Բայց անունը միտդ բեր, կարելի յե ճանաչեմ»:

Այս միջոցին մի գյուղացի ներս մտավ նոցա մոտ, և դեպի մի կողմը կանչելով Կարապետը, հարցանում եր թե կարող է արդյոք բերած ընծան գործակալին մատուցանել:

— Այդ ընծան ի՞նչ բան է, հարցրեց Կարապետը:

Գյուղացին գդակը բարձրացնելով և գլուխը խոնարհեցնելով, առաջ տարավ խոսքը.

«Աղա ջան, ի՞նչ հրամայեցիր ծառայիդ»:

— Այդ ընծան ի՞նչ բան է, հարցնում եմ:

«Այդուցը չե, ծառայդ եմ. փեթակիցն է և ես ի՞նչ է ասում ես, ես ելի՞ր... ե՞ն...»

— Յես քեզ հարցնում եմ, այդ ի՞նչ ես ընծա բերել, խոսքը առաջ տարավ Կարապետը:

«Հա՛... ա՞յդ ես հարցնում. այստեղ կա չորս դրվան մեղր, յերկու դրվան կարագ և մի գույզ գարդարուն գուլպա» հանդերձի գրոշակով (փեշով) քիթը սրբելով պատասխանեց գյուղացին:

Կարապետը տեսնելով այդ քաղցր ուտելիքը, ավելորդ համարեց գործակալին ցոլց տալ և գյուղացու ձեռքից ընդունելով յուր համար, արձակեց նորան, ասելով, թե նա ինքը կմատուցանե գործակալին:

Մինչ դեռ Կարապետը խոսում էր գյուղացու հետ, ցած ձայնով հարցրեց տեր-Սարգիսը:

— Մի՞տդ է դալի, տեր-Գրիգոր, Կարապետի ասած վարդապետը:

«Կարծյոք միտս է դալիս. նա յոթն տարի առաջ եր գործակալ»:

— Բայց թող Կարապետը դա և բանը բացատրե:

7.

Կարապետը ընծայքը տեղավորելուց հետո, կրկին յեկավ քահանաների մոտ:

«Շարունակեցեք, Աղա Կարապետ, ձայն տվեց տեր-Սարգիսը»:

— Ի՞նչ տեղ դադարեցալ խոսքը, տեր հայր:

«Վարդապետի անունը կամեյինք իմանալ»:

— Վարդան եր վարդապետի անունը, մի թոկից փոխած մարդ, թեպետ յես նորան սատակի սիրում եյի:

«Ախ, Կարապետ, միտս է, ախտոս չե՞ր, նա աստուծո որհնած մարդ եր»:

— Հա՛. քո հորն ողորմի՛, աստուծո մի որհնածը դու յես, մյուսը նա յեր, հեզնարար պատասխանեց Կարապետը. քե՞զ արդյոք պիտո յեր իմանալ նորա հանդամանքը, թե ինձ, վեր յերկու տարի նորա մոտ գրադիր եմ յեղել. յես և նա մեր քահանայնքան շահավետ գործ ենք կատարել, վորքան գլխիս մագեր կան:—

«Ախ Կարապետ ջան, մեծ մեղք եմ համարում լսել անգամ Վարդան վարդապետի ընդդեմ բան, ըստ վստում նորա պես լավ դործակալ չես պատահել և կարելի չես չպատահի ևս»:

Յես դարմանում եմ, տեր հայր, վոր դու այդպես ես խոսում:—

«Ի՞նչպես չխոսեմ, հոգիս, ահա՛ քեզ որինակ մեր տեր-Մարկոսը, վոր կարծյոք դու լավ ես ճանաչում: Ի՞նչպես ազատվեցավ նա Վարդան վարդապետի ձեռքից, բայց աստված մի՛ արասցե, վոր Տեր-Առաքելի ձեռքն եր ընկելը»:

— Այդ ի՞նչ բան ե, ասա՛ խնդրեմ, խոսքը առաջ տարավ Կարապետը:

«Մի՞թե քեզ հայտնի չէ. յերևի, դու այն ժամանակ նորա քրազիր չեսիր. թե այսպես և թե այնպես, յես ահա՛ քեզ պատմեմ. տեր-Մարկոս քահանան բախկան մեծ գյուղ ունի: Նա կոնսիստորական հարյուր մանեթ եր ժողովել հասարակութենից և բոլորը դործ եր անել յուր հարկավորության համար: Յերբ վոր դործակալ վարդապետը դալիս ե քննելու, արծաթը պատրաստի չի լինում: Տեր-Մարկոսը արդեն իմանալով վարդապետի բնությունը, մի լավ ճաշ ե պատրաստում, նոր գինու կարաս ե բացում և «գորս դու պատվիրեցիր» սորան լավ մեծարում ե: Յերբ վոր վարդապետիս կատարը տաքանում ե, ասում ե տեր-Մարկոսին, թե ինձ ավելորդ ե քո դործերը քննել, յես արդեն դիտեմ հավաստի, վոր դու շատ հավասարիմ ես Աթոռին և ճշտությամբ ես հաշիվ տեսանում. խնդրեմ, ինձ ձանձրություն չտալով ինքդ քո բոլոր հաշիվը կարգի բերես: Ահա՛, այս բոպեյիս փո՞ք քահանան չե ցնձալու, խնդալու, յերբ վոր յուր դատաստանը հանձնում են յուր կամքին: Յեթե յես լինեյի տեր-Մարկոսի տեղ, այնպես հաշիվ կրտեսնեյի, վոր Կոնսիստորը մնար ինձ պարտական, բայց նա այնքան բարեխիղճ մարդ եր, վոր գոնյա պարտք չե դրել Կոնսիստորի վերա, այլ հավասարակշիռ դուրս բերելով հաշիվը, պարտական չե կացուցել յուր անձը: Մյուս որը, յերբ վարդապետի արբեցության հետքը չքացել եյին, մի լավ շնորհակալություն և մատուցանելով, առանց նայելու ընդունում ե հաշվացուցակը: Այժմ քեզ եմ հարցնում, աղա Կարապետ, ի՞նչպես չպաշտել և չպատվել մի այդպիսի աստվածառաք մարդ»:

— Հայտնի բան ե, տեր հայր, պատասխանեց Կարապետը,

դու միայն այդ ես տեսել, կամ կարելի չես ասել, լսել, իսկ յես ամեն բան դիտեմ. նորա բոլոր գաղտնիքը սրտիս մեջ թաղույած են:

«Այդ ի՞նչ գաղտնիք են, ասա՛ խնդրեմ»:

— Զորն ասեմ, կամ զորն խոստովանիմ:

Այս միջոցին բոլորեքյան լուս եյին կացած առ ժամանակ, բայց Տեր-Գրիգորը, վոր մինչև այժմ ականջ եր դնում, ասաց

«Կարապետ աղա, կեղծավորություն չլինի, յես ևս պաշտպանում եմ Վարդան վարդապետին, բայց վա՞յ ինձ... թեպես մի անգամ քան ձայնատու մանեթներս ազահությամբ ծօցը կոխեց, նորա կարծիքով, վոր՛չ իրրև կաշառք, և դրարառ մի քանի խոսք ևս կրկնելով, չեմ խմանում, վոր դրբի խորշից թե «արժան ե մշակին վարձու յուր»:

— Յես ձեզ համաձայն եմ, տյարք, վոր նա մի քանի գործերի մեջ լավ մարդ եր. այն ե, յերբեմն կաշառք փոքր եր առնում և յերբեմն աղքատ մարդուց ամենևին չեր առնում. բայց յես ամենևին կարող չեմ մոռանալ այն անցքը, վոր պատահեց Շլամշաղին դավառումը:

«Այդ ի՞նչ անցք ե, խնդրեմ, պարզարանել» ձայն ավեցին միասին յերկու քահանայքն ևս:

— Պատմությունը յեթե դիսից չսկսանես, վերջարանությունը լավ չե դալու, ուրեմն յես ևս փիլիսոփաների պես դիսից սկսեմ: Ձեզ ինչպես հայտնի յե, դործակալը յերբ վոր ման ե դալին զանազան դավառներ, միշտ քահանաների տան ե իջևանում:

«Այո՛, այդ մեզ հայտնի յե, աղա Կարապետ, վորո որինակը այժմս իսկ տեսանում ենք»:

— Յեվ այսպես միանգամ գալով Շլամշաղին դավառը, խոսքը առաջ տարավ Կարապետը, իջևանեցինք տեր-Մաշատուր քահանայի տանը: Ուղիղ պիտո յե խոստովանել, լավ մեծարանք ստացանք այն յերեկո: Վարդապետը սաստիկ վատտակած լինելով ճանապարհի յերկարութենից, թուրքի խանի պես ձգվեցավ պատրաստած մահճի մեջ. իսկ յես, պաշտանս լցուցանելուց հետո, ձեռներս կողքիս դրած կամաց ու հանդարտ շվշվացնում եյի հյուրանոցի սրահում, վոր չլինի թե դործակալը անհանգիստ առնեյի:

«Յես ինչպես նկատում եմ, պատմութեանդ վերջը շուտով չենք լսելու, խոսակցութեանը կարեց տեր-Սարգիսը— խնդրեմ նոտենք և այնպես լսենք»:

— Տեր Հայրը լավ է ասում, նոտենք, աղա Կարապետ, մինչև վ կերակուրը կպատրաստեն, ասաց տեր-Գրիգորը:

Յերեքն ևս նոտեցին և Կարապետը առաջ տարավ յուր պատմութեան թելը:

«Մինչդեռ յերեկոյան ժամանակն եր, յես դանդաղ քայլերով դրոսնում էյի սրահում, տեսա վոր մի կին մի աման տաք ջուր, մի բաժակ աղ և մի լվացարան ձեռքին գալով դեպի սրահը, կամենում եր մտանել հյուրանոց վարդապետի մոտ: Յես խկույն հարցուփորձ անելով դադարեցուցի նորան շեմքի մեջ: Ո՞վ ես, կին դու»:

— Տերտերակինն եմ, աղա, կամենում եմ մտնել հայր սուրբի մոտ:

«Ի՞նչ դիտավորութեամբ, հարց արեցի յես և, ճշմարտն ասեմ, զարմացա, ըստ փորում իմ առաջին փորձն եր գրագիր լինել վարդապետի մոտ»:

Մեք արդեն իմանում ենք, թե տերտերակինը ի՞նչ պատճառով կամեցել է մտանել վարդապետի մոտ. ասացին քահանայքը:—

«Հայտնի բան է, այժմ յես ևս գիտեմ, վոր նա կամենում եր վարդապետի փոտները լվանալ, իսկ այն ժամանակ ինձ զարմանալի թվեցավ, բայց թող առաջ տանեմ իմ պատմութեանս: Այդ ջուրը ինչու համար է, հարցրեցի յես կնոջից»:

— Վարդապետի փոտերի վերա փոշի շատ է նստել, պիտո յե լվանալ:

Յես այս միջոցում փոքր ինչ լուս մնալով, կրկին հարցրեցի.

«Ի՞նչուք այդ այդպես է, բայց աղը ինչ խորհրդով ես բերել»:

— Հայր սուրբի փոտերը զրոնած կլինին. լվանալուց հետո պիտո յե աղ ևս ցանել:

«Խկույն վարդապետի կես ժամ առաջ ասած խոսքը միտս բերեցի, թե «իմ մոտ յեթե կին դա, արձակ մուտք տուր» յես ևս թույլ տվեցի»:

— Աղա Կարապետ, պատմութենիցդ վոչ մի տհաճութեան չե յերևում դեպի հայր սուրբը— խոսքը կտրեցին քահանայքը:— Այդ փոտնալվան մեղքնում ևս է պատահում, մանավանդ, յերբ վարդապետ է գալիս. այդ մի առանձին պատիվ է դեպի մի յեկավոր անձն:

Այո՛, այդպես է, բայց դուք ինքյանքդ պիտի խոստովանեք, վոր մի այլ մարդու, վոր յերկրի սովորութեանը տեղյակ չեր, փոքր ինչ խորթ է թվում տեսանել մի կին մարդ վոր լվանում էր վարդապետի փոտեր: Առավոտը յերբ ժամը վերջացավ, վարդապետը յեկավ յուր կացարանը: Գյուղականների բազմութեանը շրջապատեց հյուրանոցը: Վոմանք նոցանից խնդիր էյին տալիս գործակալին, վոմանք բերանացի էյին հայտնում յուրյանց վեճը կամ զանգատանքը սորա և նորա վերա և այլն և այլն... Ներեցեք ինձ տյարք, խոսքը առաջ տարավ Կարապետը— յես այս միջոցումս փոքր ինչ հնարագիտութեան գործ դրեցի, գյուղականների հասկացողութեան պղտոր ջրի մեջ ձուկն փորսալու: Գործակալից ծածուկ, իմ իսկ նյութական ոգտի համար վեճեր էյի խաղաղեցնում, հրաժարված մարդ և կին էյի միմյանց հետ հաշտեցնում, քահանաների կողմից բարեխոս էյի լինում վարդապետի մոտ. մի խոսքով, ասպարեզը ինձ եր մնացել:

Ահա այսպիսի և սոցա նման բաներով շատ արծաթի հանքեր գտա: Այս աղբյուրից փոքր ինչ ողուտ քաղցի յես, իսկ մնացյալը, մտադիր էյի, մյուս գյուղից վերադառնալու ժամանակ ժողովել:

Սույն միջոցում վարդապետն ևս նույնիսկ ճանապարհոց մահճի տակ լցնում եր արծաթի բոլորակները, իսկ սենյակի անկյունները յուզով, մեղրով, գուլպաներով և զանազան բաներով: Հայտնի բան է, վարդապետը բացահայտ կերպով չեր խնդրում, այլ նա ունի իր սեփական կերպը խնդրելու, թուրքի առակի պես, յերեսը հակառակ կողմը թեքելով «խոտածիրամ, սալ ջիրումա» չեմ կամենում, ձգիր ձոցս: Յերբ վոր բանը այսպես վերջացավ, գնացինք մյուս գյուղը, նույնպես իջևանեցինք մի քահանայի տան: Այստեղ այն որը քննութեան բացեց վարդապետը ժողովրդի և քահանաների վերա և բավական մեծ պաշար ժողովեց. միայն թե դեռևս քննութեանը չվերջացրած, մթնեց, ժողովուրդը ցրվեցավ, մնացինք յես և վար-

դասպետը: Ինձ հրամայեց ներսից սենեկի դրան մոտ կանգնել, իսկ ինքը ճրագի լուսով սկսավ համարել բոլոր սասցվածքը: Վարդապետի խնդությունը այս բուպեյիս, ճշմարիտ, չեմ կարող ձեզ նկարագրել: Յերբեմն ծիծաղում եր, յերբեմն իմ հետ զվարճախոսութունք եր առնում, յերբեմն յերգում, իսկ մանր դրամի հաշվելու ժամանակ չսխալվելու համար կամաց մոմուացնում, և գլուխը շարժում եր: Դուկ յես դրան մոտ կանգնած, յերբեմն դուրս եյի նայում, վոր վոչ վոք չմտանե, և յերբեմն վարդապետին, բայց ավելի հաճախ դեպի սա, կարմիրներ ու սպիտակներ համարողը: Յերբ վոր համարեց պրծավ, մի ուրախական ձայնով կանչեց. տո՛, Կարապետ, դայլի թոռն, արջի վորդի, դործակալի ներքին խորհրդակից, (նա միշտ յուր սրտի ուրախությունը ինձ այսպիսի բառերով եր հայտնում) մտեցի՛ր այստեղ. տեսնո՞ւմ ես, ասում եր վարդապետը, ձեռը դեպի արծաթի դեղը պարզելով— այս վոսկու սարը, արծաթի հանքը, թղթի գործարանը: Տեսնում եմ, հայր սուրբ ջան, սասցի, այստեղ մի «ջան» ևս ավելացրեցի նորա գլուխը ավելի կակուղ յուղելու համար: Հապա, վո՛րիցն ես կամենում, կարմիրներից, սպիտակներից, թե այս թղթերից: Այստեղ մի վոտանալոր ևս սասց վարդապետը:

«Տիրացվի շիլա-վլավ,
 Վարդապետի քալլա-փաչե.
 Այս յերկուսից թե վո՛րն ե լավ,
 Ճաշակառուն քաջ ճանաչե»:

Իսկույն յես սասցի, արեգակի գույնը կարմիր ե, յես կարմիր եմ սիրում: Ա՛յ դու անիրավ, խոսքը առաջ տարավ վարդապետը— լավ ընտրողության ճաշակ ես ունեցել դու: Այստեղ յերկուքյանս ևս փոքր միջոց ծիծաղեցինք, այնուհետև ավելացրեց հայր սուրբը. բարվոք ե, Կարապետ քո աղոթքը լոբի յեղավ, դու կարմիր արեգակիցդ մասն կստանաս. միայն զգուշացիր, վոչինչ տեղ բերանիցդ մի խոսք անգամ դուրս չհանես թե Եջմիածնա վանքում, թե թեմակալ յեպիսկոպոսի առաջ, վոչ իսկ կոնսիստորումը: Յես իսկույն ուրախացած սասցի, քա՛վ լիցի, հայր սուրբ ջան, յես Հուդան չեմ, միամիտ կացեք ե

լիակատար վստահութուն ունեցեք դեպի իմ հավատարմությունս:

Այսպիսաբար վերջացուցինք խոսակցությունը և վարդապետիս սրտումը վոտերը և գլուխը լվանալ տալու ցանկություն ծագեցավ:

— Ախոսս, ասում եր վարդապետը— վոր այս վոզորմելի քահանայի կինը վախճանած ե, ապա թե վո՛չ գլուխս կլվանար: Կարապետ, կարո՞ղ ես արդոք մի կին հրավիրել գլուխս լվանալու, մի քանի կուպեկ ևս խոստացրի, վո՛ր հանձն առնվին:

«Մեծ ուրախությամբ, հայր սուրբ ջան, սասցի և դուրս թոռ սենեկից: Դրսումը արդեն մութն եր, մի բարակ ամպ յերկնքի կամարը ծածկել եր, անձրևի կաթիլները մաղվում եյին յերեսիս: Յես չկամենալով նեղություն տալ քահանային, մի տղամարդ առաջնորդ ընտրեցի և գնացի մի այրի, բայց պատանի կնոջ մոտ, հայտնեցի վարդապետի խնդիրը և նյութական առաջարկությունը: Կինը մեծ ուրախությամբ հանձն առավ և գալու պատրաստություն տեսավ: Մինչդեռ յես հյուրանոցի սրահումն եյի, այն կինը բոլոր սարք ու կարգով յեկավ. իսկույն հայր սուրբին իմաց տալով ներս հրավիրեցի այն կինը և վարդապետի հրամանով յես դրսումը, սրահի մեջ զգուշանում եյի, մինչև հայր սուրբի գլուխ լվանալը: Այս միջոցիս մի փոքր անցք պատահեց, վորի պատճառը, ճշմարիտն ասեմ, չկարողացա իմանալ»:

Այս ճառերից հետո Կարապետը կամենում եր գնալ տեր-Առաքելի մոտ, բայց քահանայքը ստիպադին խնդրում եյին վերջացնել պատմությունը:

— Հառաջ տար խոսքդ, խնդրեմ, աղա Կարապետ, ասում եր յուրաքանչյուրը քահանաներից:

Ճշմարիտ եմ ասում, ձանձրացա և կարելի յե, տեր-Առաքելը բարկանա, վոր այսքան յետացա»: Քահանաները առավել ևս ստիպում եյին պատմել այն անցքը:

— Խնդրենք, վերջացրու պատմությունդ, կրկնեցին քահանայքը:

«Հավատացեք, վոր մոռացել եմ, ապա թե վո՛չ, կպատմեյի բայց...»

— Փոքր է շատե, վորքան միտդ ե մնացել, պատմիր մեզ:
 «Յերբ վոր այն կինը գլուխը լվացավ, հայտնի բան ե, ին-
 ձանից ծածուկ, յուր վարձը ստացավ և գնաց, շարունակեց Կա-
 րապետը— յես մտա վարդապետի մոտ, հանգստացուցի նորան,
 ծածկեցի և ինքս ևս հանգստացա: Յես նկատում եյի, վոր մի
 բանով գործակալի սիրտը ալեկոծվում եր. նա չեր կարողանում
 քնել և շուտ-շուտ մի կողքից մյուսի վերա յեր գլորվում: Քա-
 ոորդ ժամ անցավ, և ահա ձայն տվեց Վարդան վարդապետը:

— Կարապետ, ձիաները ո՞ւր են:

«Դրսումը կապած, խոտ են ուտում, պատասխանեցի յես:

— Նայիր, տե՛ս, կրակ կամ ծծմբափայտ կա՛:

«Այո, ծծմբափայտ կա, հայր սուրբ:

— Ուրեմն վառիր ճրագը, գնա՛, ձիանքը թամբեր և աշխա-
 տիր վոչ վոք չգարթեցնել:—

Ճշմարիտ, յես վոչինչ բան չհասկացա վարդապետի խոսքերից.
 սակայն ինքս ինձ, թե այստեղ մի փորի ցավ կա, վոր վարդա-
 պետիս նեղում ե, դուրս գնացի և մինչև ձիաների թամբելը և
 նոցա բերելը սրահի առաջև, տեսա վարդապետս, վոր մինչև
 այժմ սաստիկ քնքուցեցի կերակուր անգամ չեր կամենում
 բերանին մոտեցնել— իսկ այս րոպեյիս բոլոր պարկ ու կապոց-
 ները պատրաստած դուրս ե բերել մթնով և ինձ ե սպասում:
 Առանց ձայնի, առանց խոսքի նստեցինք ձիերի վերա: Յերեվա-
 կայեցեք ձեզ հրացանի գնդակի արագությունը ոչի մեջ, և
 կիմանաք վարդապետիս սլանալը սև ձիու վերա: Իսկ յես ա-
 ռանց իմանալու պատճառը, նորա քամակից ընկած, ձիուս կա-
 շին քերթում եյի, վոր յես չմնամ սրտաբեկ հայր սուրբից:

Ձեր գլուխը ի՞նչ ցավեցնեմ, այն գիշերը այնպես շտապե-
 ցինք, վոր թողնեով Շլամշադին դավառը, անցանք Ղարազախ
 և հասանք առավոտը լուսաբացին Բնրդիչալու դավառը, ուր
 վարդապետիս աթոռն եր: Փոքր ինչ հանգստանալուց հետո,
 վարդապետը հրամայեց ինձ, յուր գրագրին մի նամակ շարագրել
 և ուղարկել դեպի այն քահանան, վորի տանը յերկարահեր ալքը
 յերեկ եր վարդապետին: Այս նամակի մեջ ներողություն եր
 ինդրում նա, վոր Կոնստանտնուպոլիս ուղարկած հրամանը առ վար-
 դապետը հարկադրեց նորան անկատար թողնել դատաքննությու-
 նը և մի գիշերի մեջ հասանել վերոհիշյալ դավառը:

Ահա՛ այսքանս միայն արժան համարեցի մասնավորել ձեզ.
 4 ավ վոր ականջ ունի, թող լսե: Բայց ներեցեք, տյարք, վոր
 ձանձրություն պատճառեցի ձեր ականջներին իմ պատմությամբս
 և մեղանչեցի իմ հայր սուրբի դեմ. թե այսպես և թե այնպես,
 բավական լինի այսքանս: Խնդրեմ, դուք ճաշը բերեք Հյուրա-
 նոց, կարծյոք պատրաստի յե, իսկ յես շուտով կմտանեմ տեր-
 Առաքելի մոտ: Ահա այսպես վերջացրեց Կարապետը յուր վոչ
 կարճառոտ ճառը, վեր կացավ և գնաց գործակալի սենյակը:—

8.

Կերակուրները արդեն պատրաստվում եյին: Կաթնովի, փլա-
 վի պղինձները մի տեղ եյին յեփվում. մսինը մյուս տեղ: Այս-
 տեղ ամաններ եյին լվանում, այնտեղ պանիր եյին կտրատում:
 Տեր-Սարգսի ծառա Մադին ևս մսեղեն կերակրի պղնձի մոտ
 կանգնած, յերբեմն կրակը սաստկացնում եր, յերբեմն պնդձի
 միջից կերակրի փրփուրը հանում եր և պարապ ժամանակը մի
 ձեռով ծոծրակն եր ջորում, դղակը ճակատին սեղմելով, մյուս
 ձեռով բարձրացնում եր դրոշակը (փեշը), քիթը խտակելու:
 Մի խոսքով, բոլորեքյանը պարապած եյին: Յերկու քահանայքը
 գեո նստած զրույց եյին տալիս:

«Կարապետը լավ տղա պիտո յե լինի» հարցրեց տեր-Սար-
 գիսը:

— Այո՛, սրտաբաց տղա յե և արդարախոս, պատասխանեց
 տեր-Գրիգորը:

«Այսպիսի տղամարդի միջնորդությամբ միայն կարելի յե
 գործակալի մոտ պատիվ ունենալ:

— Առանց միջնորդի, դեպ ուղիղ ճանապարհով չե կարելի
 բան առաջարկել գործակալին:

«Բայց ստուգապես չիմացանք, արդյոք գործակալը կաշա-
 1 րակներնրից ե, թե դորա ներհակը»:

Այս բանիս վերա սկսանք խոսել Կարապետի հետ, բայց վար-
 դապետի պատմությունը արդելք յեղավ վերջացնելու մեր խոսքը:

— Ինձ վորքան հայտնի յե, յես կարող եմ վկայել, վոր նա
 ազատ չե այդ արատից, ըստ վորում իմ քսակն ևս բավական
 պինդ մզեց— դուրս շարժելով պատասխանեց տեր-Գրիգորը:

«Վո՛չ, անպատճառ պիտո յե իմանալ այդ, նույնիսկ Կարապետից»:

Այս միջոցում կրկին տուն մտավ Կարապետը, յուր սովորութեան պէս ձեռները կողքին դրած:

— Շտապեցեք խնդրեմ, ճաշի ժամանակ է:

«Խոլորը այժմ պատրաստի կլինի, աղա Կարապետ» պատասխանեց տեր-Սարգիսը, բայց նստիւր փոքր ինչ, քո հետ խոսելու բան ունիմ:

— Հրամայեցեք, տեր հայր:

«Կարապետ ջան, սկսածք, բայց չվերջացուցինք գործակալի բնութեան մասին, թե արդյոք սիրո՞ւմ ե ուղկանով ձուկն վորսալ»:

— Հասկանում եմ քո միտքը և պիտո յե ասել, վոր բախտի բերման բոպեյին աչքերը չե փակում:

«Այո՛, յես հասկանում եմ քո միտքը, բայց ասա՛, խնդրեմ, ամեն դյուրում տալիս եյին, թե այնպես...»

— Ամեն դյուրում տալիս եյին, բայց միշտ ընդունում եր նա. միայն մի տեղ շատ բարկացավ, ի շարկէ իմ եերկայութեամբ:

«Ինչո՛ւ համար բարկացավ, Կարապետ»:

— Մի քահանա կար, անունը մոռացել եմ, բայց կարծեմ տեր-Ղուկաս եր, վորի յեղբայրը նորա վորդու հետ միասին քաղաքումը մի ժամանակ ուսում եյին ստանում: Սույն իսկ տեր-Ղուկասը իբրև ծանոթ մարդ առանց ընծայի յեկավ նորա մոտ տեսութեան: Հետո տեր-Առաքելը ինձ ասում եր թե ինչպէս այս քահանան առանց ընծայի մոտեցավ ինձ, մի՞թե չէր կարող մի քանի դուրան մեղր, մի շէշ արաղ, կամ ինչ և իցե այլ բան բերել, գուցե չընդունեյի յես: Դիցուք, ինձանից ամաչում եր, բայց մի՞թե կարող չեր նա իմ դրադրիս պատիւ դնել:—

«Ախ, քո հոգուն մեռնեմ, Կարապետ ջան, դու ինձ շատ հաճելի յես թվում. ասա՛ քեզ մի լավ վարտիքացու ընծայեմ, ասաց տեր-Սարգիսը — յերբ վոր կվերադառնաք, ապա ևս կվարձատրեմ»:

— Շնորհակալ եմ, տերտեր ջան, աստիճած ավելի կարողութեան տա, յես քեզ կըզովեմ գործակալի առաջև:

«Ախ, քո հոգուն մեռնեմ, յես իսկ այդ կամեյի ասել. դու խելացի տղա յես, բանը իսկույն ես հասկանում»:

— Տեր-Սարգիս, այժմ իսկ պատեհ է, Կարապետին մի բան տուր, վոր գործակալին ընծայե, ձայն տվեց տեր-Գրիգորը:

«Կարապետ աղա, տեր հայրը ճշմարիտ ե ասում, ասա՛ հինգ մանեթ և կես, յերեկոյան որը թաղման վարձ եմ ստացել. կասես, թե վերադառնալու ժամանակը մեղր, կարագ և այլ բաներ ևս կպատրաստեմ»:

— Շատ բարի, տերտեր ջան, միամիտ կաց, վոր բաներդ այնպես ի գլուխ հասցնեմ, վոր ինքդ զարմանաս: Դուք հացը բերեք, յես գնամ:

Կարապետը գնաց գործակալի մոտ: Սեղանը ձգեցին, ամենքն ևս նստան ճաշելու: Աշխարհականները տեղ բռնեցին դործակալի մոտ, իսկ քահանայք զխտութեամբ նստան սեղանի մյուս ծայրում ավելի մութ տեղ:

Ճաշի վերա գործակալը գինին շատ սակավ եր գործ դնում. քահանաների սիրտը պատառվում եր, վոր չէյին կարող համարձակ խմել:

Գինին բաժանողը Կարապետն եր: Յերբ վոր գործակալը սկսում եր խոսել մոտակաների հետ, տեր-Գրիգորը աղաչում եր Կարապետին շուտով լցնել բաժակը և տեր-Առաքելի աչք ու հոնքը պահելով, դատարկում եր:—

Գործակալը նկատեց քահանաների անչափալորութեանը դեպի գինին, մի քանի խոսքերով հասկացրեց, վոր պարկեշտութեամբ գործ դնեն նորան: Միայն տեր-Գրիգորը դիպող ժամանակին չեր հրաժարվում գինուց: Վերջապես ճաշից հետո «Հայր մեր» ասելու բոպեյին, ինչպէս սովորութեան է, ամենքն ևս վեր կացան. բայց տեր-Գրիգորը կորուսանելով յուր մարմնի հավասարակշռութեանը, վեր կենալուս հանկարծ յերեսի վերա տարածվեցավ սեղանի մեջ: Գործակալը բարկացավ, կարմրեց, բայց վոչինչ չխոսեց: Յերեկոյան պահուն Միտուլը, յուր սովորութեան պէս, սկսավ յեկեղեցու տախտակը զարկել. գործակալը և քահանայք պատրաստվեցան գնալ յեկեղեցի:

Բոլոր գյուղականքը իմանալով, վոր գործակալը պիտո յէ ժամ դա, միմյանց հետևից յեկան թափվեցան յեկեղեցու տունը: Բոլորեքանք մեծ հետաքրքրությամբ կամենում էյին նայել նորան, կարծելով թե յերկնքի բարձրութենից ցած իջած, կամ յերկրի խորքից դուրս վազած մի եյակ է: Պատանի աղջիկները, վորոնց ամոթ եր ներս մտանել, դրսում կանգնած, պատուհաններից էյին նայում:

Ծիտուլը, կարծես հոգիացած, այնպես եր գոչում գյուղամիջում և ժողովուրդը յեկեղեցի հրավիրում, վոր յուրաքանչյուր մարդ ահամա ստիպված եր դնալ: Քահանայք ամենից հառաջ մտան յեկեղեցին, ընտր բաները կարգի բերեցին, միայն տեր-Գրիգորը դեռևս արբեցության մեջ լողում էր: Նա թեպետ կարողանում եր ման դալ, բայց պատից պատ եր ընկնում. ժողովուրդը յեկեղեցու մեջ անդադար սպասում եր գործակալին. և ահա՛ դուռները բացվեցան, ժողովուրդը յերկու կողմ քարշվելով, ճանապարհ բացեց: Յերկու քահանայք ի պատիվ գործակալին, մոմերը բռնած դռան մոտ կանգնել էյին առաջնորդելու նորան մինչև բեմը: Այնինչ գործակալը ներս մտալ յուր մարդերով, տեր-Գրիգորը խառնակված, կամեցալ ձեռքը համբուրել, բայց չկարողանալով յուրյան պահել, թեքվեցալ և գլխով այնպես պարկեց, վոր գործակալը նետվեցալ մյուս քահանայի վերանա յուր ձեռքի մոմով հազիվ թե չկրակեց գործակալի փառահեղ մորուքը: Բոլոր ժողովուրդը մնացել եր: Գործակալը բարկանալով հրամայեց տեր-Գրիգորին կանգնել դռան մոտ առանց փխրոյի: Տեր-Սարգիսը բացի յուր վորդիներից հրավիրել եր և նորանց, վորոնք իմանում էին վոքը ի շատե կարգալ: Գործակալը ժամը որհնեց: Յերկու դասից ևս սկսալ ժամասացությունը: Յերբ վոր «Սուրբ ես տեր» սկսան յերգել, տեր-Գրիգորը առանց փխրոյի յեկալ ու կանգնեց դասումը: Բոլոր ժողովուրդը փոքր բռնած ծիծաղում եր: Գործակալը կրկին անգամ հրամայեց նորան կանգնել դռան մոտ և սաղմոս քաղել: Տիրացուները յերկու դասից ևս այնպես էյին յերգում շարականը, վոր լսողը կարծում եր թե սայլերի կարավան է ճանա-

պարհ գնում: Գործակալին հրավիրեցին ավետարան կարդայ, բայց նա հրաժարվեցալ, տեր-Սարգիսը, ճարը կտրած, սկսալ ինքը կարդալ: Բայց մի այնպիսի ահով ու դողով մոտեցալ ավետարանին, վոր կարծես նորան պիտո յե կուլ տար: Վերջապես սկսալ կարդալ, բայց վա՛յ այն կարգալուն: Նորա տարաբախտութենից ևս ավետարանի ընթերցվածը բալական յերկար եր: Նա յերբ սխալվում եր, իսկույն ձեռը դնելով բերանին հազում եր. յերբեմն, հետևյալ բառերը չկարողանալով իսկույն ջոկել, մի քանի անգամ հետգհետե հազում եր և յաչքերը բևեռում եր դեպի ավետարանը, կամ աղաներին առում եր, մոմերը մոտ, կամ հեռու բռնեցեր:

Ավետարանի ընթերցվածից տեղ-տեղ ավելորդ չեր համարում բաց թողնել և մի անից դեպի մյուսը թռչել: Ահա ժամը վերջացալ: Գործակալը գնաց յուր կացարանը, իսկ մարդիկ յեկեղեցու մոտ ծառերի տակ նստելով, զրույց էյին տալիս:

«Տեսա՞ք, սիրելիք, գործակալը ինչպես բարկացալ»:

Վա՛յ տեր-Գրիգորին, տնով ու տեղով կկորչի:—

— Ե՞հ, ի՞նչ ես խոսում, որհնված, պատասխանեց մյուսը, եզուց կամ մյուս որ կտեսնես վոր փխրոնը կրկին ուսերին ժամ է ասում: Տո՛, յեղբայր, վա՛յ մեզ, թե չե, դոցա բանը լավ կերթա: Դոքա սատանան թամբած կտանեն ջուրը և ծարալ յես կրերեն: Դոքա յուրյանց խելքովն ու գրչովն յուրյանց բանը գլուխ կրերեն, խելքով ևս չլինի, մի այլ բանով կխաբեն գործակալին:

«Ի՞նչ բանով կարող են խաբել, յեղբայր, և մի՞թե գործակալին կարելի յե խաբել»:

Տո, յեղբայր, յես և դու չենք կարող խաբել, թե չե, նոցա համար շատ հեշտ բան է: Առաջին գործակալը մտքումդ ե՞:

«Վո՞րը, վարդապետ, վոր Սևանից եր յեկել»:

— Այո՛, վարդապետը: Նա ինչ բաներ չարեց այստեղ: Մեր տեր-Սարգիսին փխրոնից զրկեց, այո՛ ասում եր, թե կամի նորա մորուքը վերացնել և նորան աքսորել, բայց մյուս որը փահա փխրոնը ուսերին ձգած ժամ է ասում: Այդ բալական չե՛. յերբ վարդապետը գնաց Սևանա անապատը, մի որհնության թուղթ կամ կոնդակ ևս ուղարկեց: Սորանից կարող ես յեղրափակել, թե դոքա ի՞նչ խելքի տեր մարդիկ են:—

Արեգակը մայր եր մտել, բոլոր մարդիկ դեպի յուրյանց
տները ելին ցրվում: Տների հերթերից կրակի ծուխը դուրս
գալով դեպի ընդարձակ ողը, բոցի գուլյն եր ստացել:

10.

Գործակալը փարաջեն հանած, գիշերային գդակը ծածկած,
ձեռները քամակին դրած, հանդարտ ման եր գալիս սենյակում:
Կարապետը գդակը ձեռին, ներս մտավ:

«Հրամայեցի՞ր արդյոք ձիերին ջուր տալ» հարցրեց տեր-
Առաքելը:

— Այո՛ ջուր ևս, դարի՛ ևս տվեցի, պատասխանեց Կարա-
պետը:

«Գարին ո՞վ տվեց, դու գնեցի՞ր, թե տեր-Սարգիսը տվեց»:

— Աստված մի՛ արասցե, մեր ձիերը գնած գարի չեն ու-
տում:

«Ինչո՞ւ չեն ուտում, դառն ե»:

— Վոչ, նոքա ձրի գարին շատ են սիրում, մանավանդ վոր
գործակալի ձիու կողքերը ձրի գարով են հաստացած:

«Ձրի բաներով գործակալի կողքերն ևս են հաստացած, ո՛ւր
մնաց նորա ձիունը,— Ժպտալով պատասխանեց տեր-Առաքելը»:

— Ճշմարիտ եք հրամայում, տեր հայր. ձրի բանը կարծես
մեղրոտ լինի, այնպես քաղցր է:

«Հը՞... խոսքդ ի՞նչ է, մեր տղա, չլինի թե քահանայքը
ծոցիդ ձեռք են մոտեցրել»:—

— Վո՛չ, քավ լիցի:

«Ճշմարիտ ասա՛, Կարապետ, քահանաներից վոչինչ չե՞ս
քերել»:

— Վո՛չ, տեր հայր, թե քարից բան կքերվի, նույնպես և
նոցանից:

«Ճշմարիտ ասա, դիցուք թե քո խոստովանահայրն եմ, ինձ
մանրամասնարար խոստովանվիր»:—

— Ի՞նչ խոստովանեմ, տեր հայր, յերբ բան չեմ իմանում:

«Տեր-Գրիգորը փելոնի մասին վոչինչ չե՞ խնդրել քեզանից
կամ վոչինչ չե՞ տվել»:

— Դուք ինքներդ, տեր հայր, խճացաք, այլևս չե հարկա-
վոր իմ ասելը. Ժպտալով պատասխանեց Կարապետը:

«Կարապետ, վո՞րքան տվեց, ուղիղ խոստովանիր, խոսքը
հառաջ տարավ տեր-Առաքելը, նորա ուսին զարկելով»:

— Շատ փոքր տվեց, տերտեր ջան, ուսերեն վոր կսսեն
նա վողկա:

«Վո՞րքան. մի քանի մանեթ գոնյա տվեց»:

— Մեղա աստուժո՛, տեր հայր, վեց նիկոլայի գրնդան մա-
նեթ:

«Ուրեմն իմ մասին վոչինչ չասաց, կամ վոչինչ չխոստա-
ցավ, կամ քեզ չխնդրեց, վոր ինձ աղաչես, նորա փելոնը կրկին
յետ դարձնել»:

— Խնդրեց, տերտեր ջան, ու շատ աղաչեց, վոր դուք, յե-
թե կարելի յե...:

«Ուրեմն ի՞նչ պատճառով ինքը չկամեցավ դալ մոտս, կա-
րելի յե ներեյի նորան»:

— Ինքը սաստիկ վախենում եր գալ ձեզ մոտ, միայն ինձ
ասաց. յեթե գործակալը աստուժո վողորմությամբ փելոնս ինձ
չնորհե, տասն և հինգ մանեթ արծաթ կտամ:

«Ձե, չե կարելի, ասա՛ վոր ամենևին չե կարելի»:

— Տերտեր ջան, կարգիդ մատաղ լինիմ, ինձ սևերես մի՛
թողեք, ներեցե՛ք նորան. աղաչելով խնդրում եր Կարապետը:

«Ձե, չե կարելի, յես կաշառակեր չեմ, յես արդար դա-
տավոր եմ, ասաց վճուարար և յերեսը թեքեց»:

— Տերտեր ջան, խոսքը հառաջ ձեց Կարապետը, վերև
աստված, ներքև դուք, իմ խնդիրս անկատար մի՛ թողեք. իմ
կյանքիս մեջ այս մի խնդիրս եմ առաջարկում:

«Որհնվածի վորդի, ի՞նչ ևս նեղացնում ինձ: Առաջինը, վոր
յես կաշառակեր չեմ, յերկրորդ, յեթե յես տասնևհինգ մանեթ ըն-
դունեմ, թեպետ մեղք չե, ըստ վորում հոգևորը հոգևորից ու-
տե, վոչինչ վնաս չունի, բայց մեղանչել և այն, տասն և հինգ
մանեթի համար. առակը ասում է «պաս ուտեմ պաս, և այն ևս
թանով սպաս»:

— Տերտեր ջան, տեր-Գրիգորը աղքատ մարդ է, ուրիշ բան
ևս կրնձայե, դոր որինակ ցորեն, յուղ, պանիր, մեղր և այլն
և այլն:—

«Ա՛խ, ինչ անեմ, Կարապետ, յեթե դու չե՛յիր խնդրել, յես նորան ամենևին ներելու չեյի, բայց...»:

— Վո՛չինչ, տերտեր ջան, ի՛նչ տեղ հույս կա շատ ստանալու, այնտեղ յես ինքս եմ խնդրում ձեզ, լավ մղել: Զոր որինակ ձեր միտն է Զողազ դյուղի Հարություն քահանան, կամ Ճալա դյուղի տեր-Հակոբը, վորոնց վերա ծիծաղելի վոտանավորներն ևս շարադրված կան:

«Այդ ի՛նչ վոտանավորներ են, սպա միտքս բե՛ր»:

— Զողազու տեր-Հարությունի վերա վոր միշտ խեղդում եք ձայնը կոկորդում և շատ բռներ արտասանում եր իբրև ա՛... ա՛... ա՛... շարադրված է այսպիսի վոտանավոր:

«Տեր-Հարությունն ի Զողազ,
«Այլիբն» առյալ ի բողազ,
Աստ անդ առնե վաղեվազ,
Խեղդե ըզնա հանապազ»:

Իսկ տեր-Հակոբի վերա, վոր մի հողված կարգալու ժամանակ սկզբի և վերջի բառը միայն կարելի յեր լսել— խոսքը ձգեց Կարապետը— շարադրված է այս վոտանավոր:

«Տեր-Հակոբն ի Ճալա միշտ,
Հընթերցմանե կրե վիշտ,
Թե ուկն դնես նմա ճիշտ,
Լսես միայն «այժմ և միշտ»:

Այստեղ տեր-Առաքելը և Կարապետը բավական ծիծաղեցին, միմյանց յերեսին նայելով, հետո հավելացրեց գործակալը:

«Լավ, բավական է, ասա՛ տեր-Գրիգորին, վոր այսուհետե որինավոր կենա և ում ի՛նչ խոստանում է, անշուշտ կատարե. այս է ահա՛ քրիստոնեյի պարտականությունը»:

— Շատ շնորհակալ եմ, տերտեր ջան, ուրախ ձայնով պատասխանեց Կարապետը և դուրս թռավ տեր-Գրիգորի մոտ:

Ընթրիքը բերեցին, ամենքն ևս շարքով՝ նստեցին սեղանի շուրջը, բայց տեր-Գրիգորը հասարակության մեջ ներկա չե: Նա այնպես ուրախ է, վոր կարծում է թե յերկու կանգուն գեանից բարձր եր ման գալիս: Նա ամենևին չէ յերևում գոր-

ծակալի առաջև, այլ կերակուրը բերելով մինչև սենյակի դուռը, տալիս է Կարապետին և ինքը յես է դառնում մյուս կերակուրը բերելու:

Ընթրիքը ահա՛ վերջացավ, սեղանը ժողովեցին. գործակալի համար մահիճ պատրասեցին և նա հանդատացավ քնելու:

II

Մյուս որ ժամից հետո գործակալը պատրաստվեցավ մի այլ դյուղ գնալու: Բոլոր տանիքներին վերա յերևում եր մերկ յերեսաների, սպիտամորուք ալեորների և այլ տեսակ մարդերի բազմություն, վոր սպասում եր անհամբերությամբ թե գործակալը յե՞րբ արդյոք ձիու վերա կնստե: Տեր-Սարգիսը դյուղի տարածությունը չափում եր գլխի վանեսի հետ միասին, վոր տանուտիրոջ հրամանին հնազանդվելով քարչ եր գալիս: Նոքա տանուտիրոջ հրամանին հնազանդվելով քարչ եր գալիս: Նոքա յերկուսով լավ ձի եյին վորոնում գործակալի ճանապարհորդության համար մինչև մոտակա դյուղը, ըստ վորում նա ավելորդ եր համարում նստել յուր սեփական ձիու վերա: Տեր-Առաքելը ճանապարհի հանդերձը հագած, անց ու դարձ եր առնում ժողովրդի բազմության մեջ, սրահի առաջև, ծառերի տակ:

« Ո՞ւր է տեր-Սարգիսը, ինչո՞ւ ուշացավ »:

— Զի ճաշելու յե գնացել, շուտով կգա, ծառայդ եմ. պատասխանեց տանուտերը:

Փոքր ինչ հետո յերևեցան նոքա: Գլխի վանեսը ձին քարչում եր, իսկ տեր-Սարգիսը գավազանով յետքից մղում եր և ինքն յուր հետ խոսում. «Ա՛յ ձի, շուտ-շուտ գնա, քեզ գործակալի համար եմ տանում: Յերանի՛, ճանապարհին կատաղես և նորան գետին ձգես և կտոր-կտոր առնես, վոր մյուս անգամ նորա զարհուրելի յերեսը չտեսնեմ: Տանուտերը գզրի ձեռից առավ ձին և մոտեցրեց գործակալին: Սմենքն ևս ձիու վերա նստեցին: Իսկ գործակալի սեփական ձին թոկով կապած Կարապետի ձիու թամբից, ազատ գնում եր նորա քամակից:—

«Տեր-Սարգիս» ձիու վերա նստած ձայն տվեց տեր-Առաքելը:

— Հրամայեցեք աղա. ը՞... ը՞... ը՞... տերտեր ջան-վրդովված պատասխանեց տեր-Սարգիսը:

«Յես ահա գնում եմ և շուտով գալու յեմ ձեր կողմերը: Քեզ և ջեզ, տեր-Գրիգոր, հրամայում եմ վերահասու լինել ՆՂմիածնի վերաբերյալ բաներին. գոր որինակ պողի ցուրենը ժողովել. սրբադրամը ճշտությամբ պահպանել. աշխատեցեք, վանքական յուղը խտակ լինի, մի քանի Փուռնտով սովորականից ավելի լինի և ալը պակաս, վոր կշռումը չծանրանա: Այս խոսքերից հետո թուով գործակալը և նորա հետեից բոլոր ուղեկիցները:—

— Անդառնալի գնաս, ասում էր տեր-Գրիգորը, վոտդ կոտքի, վոր մյուս անգամ մեր կողմերը չտեսնես:

«Գնալդ լինի, գալդ չլինի. աստված գլխիդ մի տավակ քար ձգե, տակից չկարենաս դուրս գալ. ասում էր տեր-Սարգիսը»:

— Լսեցի՞ր, տեր-Գրիգոր, ասում էր. յուղ հավաքեցեք, մի քանի Փուռնտով ավելի, աղն ևս սակավ լինի: Յերեւի, ախորժ ճաշակ ունի, ավելորդ Փուռնտերը յուր համար վեր կախնուբայց սատանան չե կարող ինձ խաբել, շարունակեց տեր-Մարգիսը— ասում եմ, վոր սատանան ինքը չե կարող ինձ խաբել, ո՛ւր մնաց մի գործակալ, մի բռնակալ: Այնքան փոքր յուղ տամ նորան, վոր վո՛չ թե ավելորդը վեր կախնու յուր համար, այլև պակասը լցուցանե: Ճշմարիտ է, թեպետ խելքով ու գիտությամբ նա մեղանից դերադանց է. բայց մենք ևս նորանից պակաս չենք. դատանան կտանենք ջուրը և ծարավի յետ կրերենք:

«Թո՛ղ ասե նա, ինչքան կամի, պատասխանեց տեր-Գրիգորը— մենք մեր սրտի կամեցածը կանենք, թո՛ղ դորա պես քսան գործակալներ հրամայեն: Ո՞վ կարող է մեզ վախեցնել: Վարդապետը, վոր յուր գլխի սև պոպոզով ամենի փորը կամենում էր պատառել, մեզ զարհուրելի չե, ուր մնաց մի լոկ քահանա, մի տեր-Առաքել, վոր կամենում է յուր կամիլաթկայով մեզ զարմացնել: Նորա պատիժը այն էր, վոր փիլոնոս առավ ինձանից, ուրիշ վոչինչ: Բայց իմ պատիժս ավելի սաստիկ էր, վոր տասն և հինգ մանեթով և սուտ-սուտ խոստմունքով կրկին յետ ստացա: Թող նա շուտ-շուտ փիլոնոս վեր առնու և յես տասը մանեթով յետ առնում, տեսնենք, վերջապես ո՞վ կձանձրանա»:

— Բավական է, նորա վերա մի՛ խոսիք, թե աստված կսիրե՞ս, արի մի կուշտ փորով հաց ուտենք:

Նստեցին մեր յերկու սրտակից բարեկամները և կուշտ ճա-

չեցին, գինին խմելով ու գործակալի կենացը կարճ որեր խնդրելով: Մյուս որը, յերբ վոր քահանայք ճաշում էյին և տեր-Գրիգորը կամեր ճանապարհ ընկնել դեպի յուր գյուղը, հանկարծ մտավ մի գյուղացի, ձեռին մի նամակ:

«Որհնեցե՛ք, տյարք»:

— Աստված որհնեսցե, ձայն տվեցին քահանայքը:

Տեր-Գրիգորը առավ նամակը և նայեց: Նա յերկար ժամանակ նայելով, գլուխը շարժում էր. մյուս քահանան նույնպես անդադար նայում էր և հարկադրում էր նորան կարդալ:—

«Ի՞նչ է գրած, տեր-Գրիգոր, բա՛րձր կարգա, իմանանք, ո՛վ է գրողը կամ վորի՛ վերա յե գրածը»:

— Կարծես, հայերեն չլինի գրածը, ա՛յլ կերպ է յերևում աչքիս, պատասխանեց տեր-Գրիգորը— յես կարծեմ ուուսերեն կամ մի այլ լեզվով պիտո յե գրած լինի. ըստ վորում գրելու բուպելին գրիչը թղթի վերայից չե բարձրացել:

«Ինձ տուր, յես կարդամ, յես տասներկու լեզու գիտեմ»:

Առավ նամակը, աչքերը բեռեւց և գլուխը շարժելով հառաջ գնաց, բայց չե, յեղբայր, դժվար է գրած: Այս և տառս, կարծես կղզած պառավ կին լինի, իսկ մյուս տառը ք, յերեւի թուրքերեն է, գործակալի քթի պես կեռ: Բայց դու ոգնիր, տեր-Սարգիս— կարելի յե հայերեն կարդանք:

Յերկուքն ևս աշխատում էյին կարդալ: Նամակի հասցեն այժ էր.

«Նորին արժանապատուության տեր Սարգսի,

Գարգարյանց.

Հուշտ հարկավոր»:

— Բացիր, տեսնենք, կարելի յե մեջը հեշտ լինի գրած: Տեր-Գրիգորը բացեց: Բայց յերկուքն ևս չկարողանալով կարդալ, դանազան դատողություններ էյին առնում: Մինը ասում էր. առանց կարդալու իմացա, վոր այսինչ գյուղում հիվանդ կա, պիտո յե հաղորդել, կամ հանգուցյալ է պատահել, պիտո յե թաղել: Իսկ մյուսը— թե պսակ կամ մկրտություն կա կատարելու: Յուրյանց կարծիքը ստուգելու համար, կանչեցին Սաչատուրյանց Մարկոսի վորդին վոր ուսումնարանումը փոքր ի շատե կարդալ ուսել էր, և տվեցին նորան նամակը: Նա սկսավ

կարգալ, թեպետ և կզկզալով: Նամակի պարունակութիւնը այս եր.

«Պատվելի տեր Սարգիս քահանայի Գարդարյանց:

«Լիվյալ ի նախկին գործակալացն զքրտնաշան աշխատանս Ձեր ի բարեխաղութիւն յեկեղեցվո և ի պաշտպանութիւն քրիստոսապաշտ ժողովրդեանդ հուղղափառ հալատոս, նաև զՆերմեռանդութիւն Ձեր առ սուրբ Աթոռն Եջմիածնի, մեծահուշս եմք, թե դուք հայածհետե ևս քան զևս ունիք առավելապես արիանալ ի պաշտաման Ձերում, վորով դաշխեք զմեզ առ Ձեզ միշտ բարեհաճ»:

Այլև խնդրեմ կրկնապատկել զհալատարմութիւն Ձեր առ սուրբ Աթոռն և արիութեամբ հոգ տանել առ ի բազմացուցանել զուղնաքյա մտյուրդ զինչս համազգական նախամեծար Աթոռս արարատյան մայր յեկեղեցվո սրբո կաթուղիկե Եջմիածնի»:

Ի Փաշա-քյանդ Վասն Ձեր աղոթարար 186..... ամի գործակալ Առաքել քահանայ 3 ն մայիսի: Ծողոքորթյանց:

Կարգալուց հետո քահանայքը աչքերը միմյանց վերա պշուցել էին, իսկ Մարկոսի վորդին նամակը ձեռին, անթարթ նայում էր դեպի նոքա:—

«Ի՞նչ հասկացար այդ նամակից, հարցրեց տեր-Գրիգորը»:

— Ճշմարիտ, վոչինչ չհասկացա:

«Բայց յես մի քանի բառերի իմաստը հասկացա»:

— Վո՞ր բառերի:

«Ապա իմացի՛ր— խոսքը հառաջ տարալ տեր-Գրիգորը— դու պարծենում եյիր, վոր տասներկու լեզու գիտես, ուրեմն իմացիր, թե մարդ ես»:

— Յես ևս մի քանի բառեր հասկացա, բայց ի՞նչ ոգուտ, նամակի միտքը գորանով չե կարելի հասկանալ: Ահա, գոր որինախ, յեկեղեցի, ժողովուրդ, Եջմիածին և այլն: Դիցուք թե գրել է ժողովրդին յեկեղեցու մեջ քարոզել, ուրեմն Եջմիածին բառը ի՞նչ է շինում այստեղ, կամ թե Եջմիածնի համար է խոսում, ժողովուրդը այստեղ ի՞նչ գործ ունի: Միով բանիվ, այդ նամակը առանց մեկնութեան հասկանալ կարելի չէ:

«Բայց յես, տեր-Սարգիս հայր, գործակալի նամակի մի բա-

ռից իմացա ամբողջ պարունակութիւնը և նորա միտքը. ահա՛ քեզ պատմեմ: Դու լսեցիր, վոր գործակալը զնալու բոպեյին, հրամայեց վանքական յուղը ժողովել և աղը սակալ ամել յուղի վերա:

«Արդարև լսեցի և մտքուս է:

— Նույնպես լսեցիր վերոհիշյալ բառը «դուղնաքյա», յես այդ բառիցը նորա բոլոր միտքը հասկացա: Այդ բառը իմ կարծիքովս հայերենն չէ, այլ թուրքերենն է և դուրս է դալի «դուզ» բառիցս, վոր նշանակում է աղ, ուրեմն այժմ հասկացա՞ր: Տեր-Սարգիսը գլուխը կախած, աչքերը դեպի գետին, յերկու ձեռնեքը միմյանց կից արած, կատարը շարժելով պատասխանեց:

— Բալ լիցի, վո՛չինչ բան չհասկացա:

«Ձարմանալի մարդ ես, ամենևին հեռատեսութիւն չունիս, տրանջելով պատասխանեց տեր-Գրիգորը»,— դուղնաքյա, վոր գրել է, նշանակում է. վանքական յուղը ժողովել և ասել ժողովրդին, վոր աղը սակալ ամեն, ուրեմն հասկացար, գոնյա այս անգամ: Որհնված, իրր քահանա յես, ունիս սեփական բանականութիւն: Վա՛յ ինձ, վա՛յ... մինչև հացը չծամեն չմանբացնեն և բերանդ չղնեն, դու կուլ տալ չե՛ս կարող: Ի՞նչ ես լուել, հասկացա՞ր, թե չէ:

— Իսկ քո ասածը պիտո յե լինի, տեր-Գրիգոր, այլ այս կողմ այն կողմ մի՛ ընկնիր. արդեն լավ ես հասկացել, ուսերին կամաց դարկելով, պատասխանեց տեր-Սարգիսը. յես ևս մի բան ասեմ, նամակի մեջ գրածը «կաթուղիկե Եջմիածնի» իմ կարծիքովս նշանակում է, Եջմիածնի Կաթուղիկոսը դալիս է:—

«Դու ևս ճշմարիտ ես ասում, այդպես ևս կարելի յե հասկանալ:

Յերկար խոսակցութիւնից հետո տեր-Գրիգորը ձին հեծալ և հրաժարական վողջույն տալով, ճանապարհ ընկալ դեպի յուր գյուղը:

Լավ վարժապետութիւն եր առնում տեր-Սարգիսը:

Նա ունեւր տասն և մի հաս աշակերտ գյուղացիներից: Մի անգամ, յերբ վոր տեր-Սարգիսը մահճակալի վերա յուր սովորութեան պես հանդստացած էր, գյուղի քեղխուղաներից մինը յուր տասներկու տարեկան վորդու ձեռը բռնած, բերեց նորա

մոտ: Տերտեր ջան, ասաց քեզխուզան—ահա՛ բերել եմ իմ միակ վորդին: Սորան քեզ եմ հանձնում, իսկ քեզ—աստուծուն, խնրդրեմ անտես չառնես, և սորան չզրկես այդ քո խորիմաստ գիտութենից: Այսուհետև սորան քեզ եմ տալի. սորա միսը քեզ, իսկ վոսկրը ինձ, ասաց քեզխուզան և գնաց: Տեր-Սարգիսը մեծ հոգեբանությամբ ընդունեց յերեխան: Յեւ ի՞նչ պատճառով չեք ընդունելու, երբ վոր նյութական ոգուտ ուներ: Նորա տան և մի աշակերտները մահճակալի շուրջը պատած, զանազան գլորյանք բռնած կարգում եյին:—Իսկ նա ինքը նստած, յուր սև դավազանը ձեռում բռնած, լսում էր: Աշակերտները մի քանիքը այրբենարան եյին կարգում, մի քանիքը սաղմոս և մյուսերը ժամադիրք: Միայն մինը, վոր բավական ժամանակ այնտեղ էր, կարգում էր Ավետարան: Յեւ այդ արդեն ցույց էր տալիս, վոր աշակերտը մեծ հառաջադիմություն է ցույց տվել և հասել է վերջապես յուր վարժապետի գիտության սահմանին: Ըստ վորում նոցա համար ավետարանից այն կողմը մութ է, մարդ է, չե՛ նկատում: Աստված չառնե, յեթե մի այբուբեն կարդացող աշակերտ վանկերով չկարդա, կամ կարդալու ժամանակ մատը շփե թերթին, այնուհետև կտեսանես, վոր դավազանի հարվածից յերեխայի գլխի վերա մի ուռույց վեր կացավ: Միանգամ աշակերտներից մինը վարժապետի հրամանով ձին տարավ ջրելու: Աշակերտին հրամայած չէր ձիու վերա նստել. բայց նա յերբ վոր անհրեուծացավ քահանայի աչքից, ընդդեմ նորա հրամանին հեծավ ձին: Այս անցքը յերբ վոր իմացավ տեր-Սարգիսը, սաստիկ պատիժներ կարգեց վորոքմելի աշակերտի համար: Նա հրամայեց մյուս աշակերտներին յերկար ու բարակ ճիպոտներ կտրատել և աղյուսներ մանրացնել: Յերբ վոր ամենայն բան պատրաստի յեր, հրամայեց պարտավոր աշակերտի վարտիքի մեջ ծունկերի տակ ածել աղյուսի մանր կտորտանքը և չոքել ավելի խոշոր աղյուսների վերա: Այնու աշակերտներին տիրել էր զարհուրանքը, նոցա մարմնից վոլոռն վոլոռն քրտինք էր կաթում:

Նոքա մի աչքով նայում եյին գրին, մյուսով պատժած ընկերին: Յերկու ժամից հետո տեր-Սարգիսը հրամայեց բերել պատրաստած ճիպոտները և աշակերտը կանգնեցնել:—

Հասավ զարհուրելի բոպեն, աշակերտի մարմինը ահ ու դո-

ղի մեջ էր: Տեր-Սարգիսը հրամայեց մի աշակերտի վեր առնուը ճիպոտը և ծեծել հանցավորի ձեռների մեջ:

Առաջին հարվածից, աջ ձեռի մեջ մի բարակ և յերկար դոսի կերպարովեցավ նախ կարմիր գունով և ապա կապուտ: Զարկը ստացած, թշվառ աշակերտը կծկվելով ձեռը ամփոփեց ծոցի մեջ: Անխիղճ քահանան սպաննալով հրամայում էր մյուս ձեռը պարզել: Մոռացել էք, ասում էր նա գոռալով, վոր ձեր յուրաքանչյուրիդ հայրը ձեր միսը ինձ է հանձնել վոսկրը յուրյան և պահել: Վորոքմելին ճարը կտրած, ձախ ձեռն ևս պարզեց: Նորան զարկող ընկերակիցը զթալով, փոքր ինչ թույլ դարկեց: Այս միջոցին տեր-Սարգիսը կատաղեցավ և հրամայեց մյուս աշակերտին առնուը դալար փայտը և յերբ սա՛ ևս դողալով մի անդամում չկարողացավ զիպեցնել և յերկրորդ անգամն ևս թույլ դարկեց, նա բարկացավ, այնուհետև ինքը վեր կալավ ճիպոտը: Յերեքն ևս կարգով կանգնեցրեց, հետո սկսավ ձեռների մեջ ծեծել: Աղճալի աշակերտները շարաթ մի անգամ հագիվ թե գրե յերես եյին տեսանում: Ամենայն ոք կտեսանեցիր, վոր փայտը չալակած միմյանց քամակից դալիս են մոտակա անտառից վոջ թե ծնողների տուն, այլ ուղղակի յուրյանց անիրավ վարժապետի տունը: Յերբ վոր տեր-Սարգիսը տանը չէր լինում, վորդին էր բռնում հոր տեղը: Նա յուր հոր նման անդուծ կերպով էր վարվում աշակերտների հետ: Դեռևս մի անգամ չկրկնած յուրյանց դասերը, յերեքն ուղարկում էր դոմը քերելու, յերեքն յերկոյի համար փայտ կոտորելու, յերեքն— ուսով դարման բերելու ձիերի համար և յերկուսն ուղարկում էր ջրաղացից ալյուր բերելու նույնպես չալակով:—

Աշակերտները յերեկոյին, յերբ վոր յուրյանց տուններն եյին գնում, պատում եյին ծնողներին քահանայի ընթացքը նոցա հետ: Բայց ծնողը միևնույն խոսքն եյին կրկնում «ձեր միսը տերտերինն է, վոսկրը մերը»: Այս ցավալի դրությունը աշակերտների, որեոր առավել վատթարանում էր. այնուհետև նոքա անփութ աննելով թե քահանայի սպանալիքը և թե ծնողների կամքը, մի մի սկսան փախչել քահանայի մոտից: Նոքա ցեղեկով այդիններումն և անտաններումն եյին թախառում փախըստական կերպով, իսկ զիչերով չոր խոտերի դեղերի տակն եյին

քուն լինում, վոր ազատվին այնպիսի բռնակալի ձեռք: Յերե-
խաների ծնողքը, յերբ առան, վոր յուրյանց վորդերը չըջնուլի
մարդերի պես որերը անտառների մեջ են անգուցանում, խապին
վերջապես «բա՛վական ե, վորդի ջան, ինչքան սովորեցիր: Այժմ
արի, մեր խոզերն արածացրու»: Այսպես, վորք ժամանակից հե-
տե, տեր-Սարգսի մոտ վո՛չ մի աշակերտ չմնաց: Գյուղի յերե-
խաների վերա ահ ու սարսափ եր դալիս, յերբ վոր տեսնում էյին
քահանան վորեկիցե տեղում: Գիշերները յերբ վոր յերեխայք յուր-
յանց լացով անհանդիսա էյին առնում ծնողքը, սոքա կամենալով
լրեցնել, ահ էյին ձգում նոցա վերա, ասելով. «Լո՛ւս կաց, տեր-
տերը դալիս ե»: զեռահաս մանուկները քահանայի ահից պահե-
էյին պահում, վո՛ր չիցե թե ծնողների ասածի պես տերտերը
կտրե նոցա ահանջը:

13.

Ահա՛ բոլոր արտերը հնձեցին: Գյուղացիք կտրած հասկերը:
սայլերի վերա բարձած, ամառնային ջերմ յեղանակին բերեցին և
կալերի չորս կողմը մեծամեծ դեղեր կանգնեցրին: Մի քանի ու-
րից հետո յուրաքանչյուր տուն սկսով կալը կասել և դեռևս
չորրորդ որն եր կասելու, վոր տեր-Սարգիսը մեծ վորդու հետ
սկսով պաղաքարենը ժողովել: Միտուլը ևս մի մաղախ ուսին
ձգած քարչ եր դալիս նոցա հետեից: Տեր-Սարգիսը զալագա-
նով չնրի հետ պատերազմելով, հասավ ահա՛ Ղուկասեց Գրի-
գորի կալը: Պատանի հարսները և աղջիկները ամոթուց մի
կողմ փախան, յերեխայքը վաղեցին յուրյանց մոր դողը, իսկ
Գրիգորը քահանայի հառաջ դուրս յեկավ:

— Բարի վողջո՛ւն, Գրիգոր, ասաց տեր Սարգիսը:—

«Որհնայ՛, տերտեր ջան»:

— Ասոված որհնեսցե:

«Հրամայեցեք, տերտեր ջան, չմաքի տակ փոքր ինչ նըս-
տենք»:

— Հը... ի՞նչպես ես Գրիգոր, այս տարի արտերդ լա՛վ
են արդյոք. դեղերդ, ինչպես յերևում ե, բավական բարձր են:

«Փառք աստուծո՛ս, տերտեր, արտերս այս տարի այնքան
լավ են, վոր մեզ կկերակրեն»:

— Չե, այդ բովանկան չե, վոր միայն կերակրեն ձեզ. պիտո

յե գտնեցա՛ մի քանի հարյուր չափ ավելորդ ցորեն ունենաս,
վոր առատութուն լինի:

«Ե՛հ... ո՛ւր ե, տերտեր ջան, այդքանը. ահա չորս որ և
կատու՛մ եմ, յերեսուն չափ ցորեն հազիվ թե ստացել եմ»:—

— Վո՛չի՛նչ, ասոված վողորմած ե, մյուս կասելովդ շատ
կատանաս:

«Շնորհակալ եմ, տերտեր ջան, ասածդ ասոված թո՛ղ կա-
տարե՛ք»:—

— Պարոն Գրիգոր, յուրաքանչյուր տարի վո՞րքան պողա-
ցորեն էյիր տալիս, ծանր ու բարակ հարցրեց տեր-Սարգիսը:

«Մի՞ թե քեզ հայտնի չե՛, տերտեր»:

— Ինձ հայտնի չե, միայն կամենում եմ քեզանից ևս իմանալ,
թե անցյալ, կամ յերրորդ տարին վո՞րքան ես տվել:

«Պաղացորեն անցյալ տարի տվել եմ տասն և հինգ խան. իսկ
յեթե աստուծո՛ս վողորմությամբ սուրբ վարդապետները այս տարի
պակասեցրել են, ավելի լավ»:

— Ե՛հ... որհնովածի վորդի, ինչո՛ւ համար եմ հարցանում, յե-
թե պակասեցրել են: Իրտես, Գրիգոր ջան, վոր յես իմ ժողո-
վորդը իմ գլխիցս առավել եմ սիրում. բայց ի՞նչ առնես, մի-
ւնույն ժամանակ պիտո յե մեր սուրբ հայրերն ևս պահպանել և
նոցա հրամանը կատարել, վոր նոքա վասն մեր աղոթք առնեն:

«Ի՞նչ ե, տերտեր ջան, չիցե թե դործակալը պողացորենը
ավելացրել ե»:

— Ինչպե՞ս չե՛, որհնոված. վորքան աշխատեցի, չեղավ
չպակասեցրեց:—

«Ուրեմն ի՞նչքան ավելացրեց այն որհնոված դործակալը»:

— Շատ փոքր, Գրիգոր ջան, հինգ խան միայն:

«Տեր հայր, թեպետ շատ վնաս ե ինձ տարին քսան խան
ցորեն տալ վանքին, բայց ի՞նչ պիտո յե առնել, յեթե սուրբ
վարդապետները հրամայել են, մեք ևս կհնազանդվինք»:

— ձջճարիտ ե, Գրիգոր ջան, շատ ցավում եմ, բայց ի՞նչ
առնեմ, Հար չկա, դու լավ գիտես, վոր մեք ժամանակի վար-
դապետները միանգամայն այլ բնություն ունին: Ասոված մի՛
արացե՛, յեթե նոքս մինի վերա բարկանան, կամ մինը անխն,
այն մարդը իսկույն կմեռանի, մի խոսքով. ո՛ճի գլխին յեթե
թքեն, ո՛ճը կսատակի:—

«Յես այդ լավ գիտեմ, տերտեր ջան, մեռնիմ նոցա սուրբ կարգին: Յեթե նոքա չլինին, մենք յերկու փարա չարժենք, ըստ վորում նոքա յեն մեր գլխի տերը, մեզ պահպանողը, սասանայի ձեռքից ազատողը: Արքայության բանալին նոցա ձեռքին է, կամ մենան մեզ դրախտը կտանեն, կամենան— դժոխքը: Յեթե նոքա չլինին, մեր հոգին դժոխքի անշեջ կրակի մեջ կայրվեր: Ասալամ մի՛ արասցե, վոր մի որ պակասե մեր գլխից նոցա աղոթքը: Նոցա դործը գիշեր ցերեկ կոշտ մազեղեն զգեստով, կոպիտ քարերի վերա ծնկաչոք աղոթելն է մեր համար, իսկ մեր դործը, նորանց պահպանելն է: Ների՛ր ինձ, տերտեր ջան, յեթե այսպես չե՛»:

— Այդպես է պարոն Գրիգոր, բայց.....

«Տերտեր ջան, ասա՛ ինդրեմ, այս ցորենը վար ժողովում էք, բոլորը ուղղակի եղմիածին եք ուղարկում, թե դուք ևս ողուս ունիք»:

— Վա՛յ... վա՛յ... վա՛յ... դու վո՛չ մեռնիս, Գրիգոր ջան. այնքան քո թշնամին չչահվի, վորքան յես. ի՞նչ ես խոսում, ա՛յ մարդ, դու ասովամ՝ աղաչի՛ր, վոր ավելորդ ցորեն ևս չպահանջեն, թե չե՛, ինձ հարկավոր չե՛ նոցա ողուտը: Գիտե՞ս արդյոք, քանի սևադուխ վարդապետներ կան դոնյա եղմիածնում:

«Քանի՛ կլինին, տերտեր ջան, կարծյոք, շատ են. ըստ վորում ամեն տարի այնքան ցորեն է ժողովվում. բայց, ասում են, դեռևս հերիքանում չե՛:

— Անցյալ տարի հարյուր հիսուն եյին, բայց այժմ կարելի չի, քանով ավելի լինին: Ահա՛ մոտիկ ժամանակա քաջալ Սարգիսը վոր իմ հոր հետ հորթեր եր արածեցնում, հառաջ վարդապետ ձեռնադրվեցավ և ապա դանազան յերկրներ նվիրակ դնալով, յես յեկավ և իսկույն յեպիծկոպոս դարձավ: Վզին մի այնպիսի խաչ ունի, վոր պատկերդ մեջը կտեսանես:

«Դորա հակառակ, պիտո յե հարյուր հիսունից փոքր լինին և վո՛չ ավելի, ըստ վորում մինչև այսօր մի քանիսը մեռած կլինին»:

— Չե, Գրիգոր ջան, իդուր ես այդպես կարծում, նոցա թիվ որեցոր շատանում է և կարծես մահն ևս նոցանից վախենալով, չե համարձակվում մոտենալ նոցա:

«Ի՞նչ է պատճառը այդ որհնվածների այդպես շտտանալուն»:

— Սերելի, այժմյան վարդապետութունը այնքան հեշտ ու

հարձաք քան է, վոր մինչև անգամ տվարածները և խոզարածները, յեթե միքանի այբուբեն դիտեն, շտտպում են վարդապետ դառնալ: Անկին քահանաները ևս վարդապետությամբ են կամենում մխիթարվիլ:

«Ի՞նչ հեշտ քան է վարդապետութունը, վոր խոզարածները և տախտածներն ևս ցանկանում են դորան»:

— Որհնվածի փորդի, յերեխայի պես ես խոսում: Ո՞վ չե կամենալու ձրի հանդերձ հազնել, ամեն որ պատրաստի հաց ուտել, առանձին ոթեւանում բնակել, վոչինչ բանի վերա չմտածել և վոչինչ քանով չպարապել: Գիտե՞ս, ի՞նչ արժե լավ ճաշ ուտել և քարակ ձեղով ասամները խաակելով, յերբեմն զգուտալով, մահճակալի վերա պարզվիլ և փորը ձեռքով կոկել:—

«Ինչո՞ւ համար են փորը ձեռքով կոկում, տերտեր, հարցրեց Գրիգորը»:

— Նորա համար, վոր նկատեն, արդյոք դոտիկը պնդացել է թե չե՛, կամ այն որի կերակուրները ի՞նչ ներգործութուն են առաջացուցել նորա պորտի վերա, կամ թե դեռևս դատարկ տեղ կա ընթրիքը տեղավորելու. և այլն և այլն: Չանազան կերպով հարելի յե մեկնել այդ բանը:

«Տերտեր ջան, միայն ուտո՞ւմ են, նստում և աղոթք անում. այլ ուրիշ բանով չե՞ն պարապում»:

— Այսինքն, մի քանիսը պարապած են զանազան բաներով, իսկ մյուսները ուտում, խմում և քնում են, բայց նոցա արժանավորութունն այն է, վոր միշտ ամենայն յերեկո և առավոտ յեկեղեցի յեն դնում և բոլոր հայ քրիստոնյա աղբի համար աղոթում են. այս պատճառով ասում են նոցա «Հայր սուրբ»:

«Ուրեմն առաջինները ինչո՞վ են պարապում. հարցրեց Գրիգորը»:

— Նոքա դանազան պարապմունք ունին: Մինը նոցանից եղմիածնի ցորենի շտեմարանի ղլխավորն է, մյուսը վանքական վոչբաբների, խողբի, կովերի, հնդկահավերի և այլ անասունների պահապանների վերակացուն է. յերբորդը այդու պահապան է կամ այգեպան, չորրորդը ուխտավորների սենյակների վերակացու: Ահա՛ այսպիսի և սոցա նման պարապմունքով են զբաղված մեր սուրբ հայրերը:

«Աւրեմն նորա ուսումնասիրութեամբ և մատենագրութեամբ դործունեյա չեն, ինչպես մեր յերանելի առաջին վարդապետները»:

— Բա՛վական էր, յեթե նոցա շարադրանքը կարգաւորէ մեք չենք կամենում նոցա սեփական գրավոր աշխատութեանը թո՛ղ յուրյանց գրածը յուրյանց դիտին դիտչի:

«Տերտեր ջան, վարդապետութեանը դու աշխատես հեշտացնում ես, վոր, յեթե իմանայի մի քանի տառեր խաղել. յես ևս վարդապետ կդառնայի. պատասխանեց Գրիգորը—ախտոս միայն, իմ հայրը ինձ ուսման չե՛ տվել»:

— Բայց այսպես դրուցելով, ժամանակը կորցրեցինք, Գրիգոր: Նորա մեզ փոչինչ չեն տարու: Մեզ պիտո յե մշակի պես աշխատել, ցորեն ժողովել և նոցա փորը հաստացնել: Աւրեմն, սիրելի, ասոված երհնե քեզ, բե՛ր, չախի՛ր, վորքան ևս վատ լինին, այնուամենայնիվ մեր սուրբ վարդապետներն են: Թուրքք առածն ասում է. «դուրթ ու, դուշ ու, գենա բըզմ սան» գա՛յլ յեղիր, թոչո՛ւն յեղիր, այնուամենայնիվ մերն ես:—

Ծիտուլը մաղախը բացեց և Ղուկասեանց Գրիգորը քսան խանցորեն չափեց և գլակը վեր առած կանգնեց: Տեր-Մարգիսը մի պահպանիչ ասելով, ձեռք դրեց Գրիգորի գլխին և որհնեց: Ծիտուլը մաղախը դժվարութեամբ շարակեց և գնաց, իսկ տեր-Մարգիսը յուր վորդու հետ խոսելով, գնում էր նորա քամակից:

«Այս տարի ըստ բախականին ավելորդ ցորեն կունենանք. յուրաքանչյուր տանից յեթե հինգ խան ավելորդ ժողովենք, ո՛ւր կհասնի գումարը»:

— Մի քանի տուն, կարծեմ, հինգ խան չեն տարու, ըստ վարում չքավոր են, պատասխանեց վորդին:

«Նոցանից կարելի յե յերկու կամ յերեք խան աւելու, այնպես, վոր առանց ավելորդի թող չլինի, այլև վանքական ցորենից ևս մի քանի խան վեր կառնուեք: Հույս ունիմ, վոր կալի միջի չորս մեծ հորը, սրահի ամբարը և վեց հորը լցնենք միայն ձմեռան պիտուլքի համար»:

Տեր-Մարգիսը այսպիսի ավելորդով բոլոր գյուղացիներին ևս ժողովեց վանքական ցորենը, և, ավելորդը յուրյան սեփական

նելով, մնացածը առանձին տեղ ածեց մինչև գործակալ տեր-Սարգելի դալը:—

14.

Միանդամայն տեր-Մարգիսը մեջքը վրա պարկած էր: Աննա դուստրը, նորա մոտ նստած, յուր սովորութեան պես ձգձգում էր նորա մորուքի մաղերը, բայց տեր-Մարգիսը յուր մտածմունքի մեջ խորատույց էր յեղած: «Զարմանալի բան է, ասում էր նա ինքն յուր մեջ—վոր մեր հողեվորականներին փորը, կարծես, առանձին կազմվածք ունի, ամենևին աննման մյուս մարդեք փորին: Յերանի՛ թե բժիշկ լինեյի, իսկույն վերահասութեան կը գործեյի այդ գաղանիքին: Գյուղացիք լավ առակ են ասում՝ Սարու ձոր, տերտերի փորը»: Թեպետ անխորժ էր ինձ լսել մի այդպիսի խոսք և կամեյի ասողի բերանը ճեղքել իսկույն, բայց, յեթե արդար աչքով նայենք, առակը շատ հարմար է ասած: Զարմանալի բան է, ճշմարիտ, վոր քահանան մի առանձին ույժ կամ ավելի ուղիղ ասել, մարմնի առողջութեան է ստանում, յերբ ուտում է հարսանիքի սեղան, կամ մեռելահաց և կամ մկրտութեան հաշ: Այս բանին վերա մտածել եմ, մտածում եմ և պիտո յե մտածեմ, բայց դժվարանում եմ վճռել այս խնդիրը: Յեթե ասեմ, դորս պատճառն այն է, վոր կերակուրը ձրի յե. բայց ձրի մեք վայելում ենք բարեկամի և արգականի ասան ևս, բայց հացկերութեանը չունի այն ճաշակը: Յեթե ասեմ, այդ մի առանձին շնորհք է, աստուծուց տված հողեվորականներին միայն, այդ ևս կատարյալ փիլիսոփայութեան կդառնա, վորից իմ հակացողութեանը շատ ստոր է: Բայց ինչքան դժվարիմաց փիլիսոփայութեան ևս լինի, այնուամենայնիվ իմ կարճ խելքոյս կարող եմ ասել, վոր ասովածային ձիրք է շնորհած մեզ միայն: Յեթե քահանան դոնյա ամիսը մի անգամ մկրտութեան շունենա, ինչ քահանա յե: Հույս ունիմ, վոր շուտով մի բախտավոր մկրտութեան ունենամ, ըստ վորում Խալիփեանց հարսը շուտով վորդի կծնի: Յե՛վ ահա կտեսնես, Ծիտուլը ուսերը թափ տալով, բեխերի տակ ծիծաղելով կզա, թե որհնե՛ր տե՛ր: Յես մարդու տեղ չդնելով նորան, լեզվիս նեղութեան չեմ տալու և չեմ ասելու, աստ-

ված որհնեցե, այլ ձեռով կխաչակնքեմ: Հետո իմ հիմար Ծի-
տուլը յուր սովորութեան պէս առաջ կտանի խոսքը, թե տերտեր,
ականջարոնուկ ի՞նչ ես տալիս, իսկ յես կասեմ հը... ի՞նչ է,
յերեւի ձեր կազ վոչխարը դայլը խեղդել է, կամ են՞ում ես մատաղ
առնել: Խելացնոր Ծիտուլը ծիծաղելով քթախտը քիթն ածելով,
կպատասխանե «չէ՛, չէ՛, տերտեր ջան, այս, կամ այն հարսը
ծնել է»: Տեր Սարգիսը այսպիսի քաղցր հույսեր հղանում էր
յուր մտքում, և ահա՛ Ծիտուլը դավազանը ձեռին, յեկավ նորա
մոտ:

— Որհնյա՛, տեր-Սարգիս հայր:

Տեր-Սարգիսը ցուցական մատով խաչակնքեց առանց մի
խոսք դուրս հանելու բերանից:

«Ականջարոնուկ ի՞նչ ես տալիս, տերտեր»:

— Հը... ի՞նչ համբավ կա աշխարհիս յերեսին, նստելով
հարցրեց տեր-Սարգիսը:

«Վոչի՛նչ համբավ չկա, բացի նորանից, վոր մինը վեր է
կենում մյուսը գլորվում է»:

— Ուրեմն այժմ գլորվե՞լ է, թե վեր է կացել:

«Թեպետ յերկուսից ևս ոգուտ ունիս, տերտեր ջան, թե
գլորված լինի, թե վեր կացած, բայց...»

Ասա՛, խոսքդ վերջացրու, անհամբերութեամբ ասաց տեր-
Սարգիսը:—

Խալիփենց հարսը վորդի յե ծնել այսոր առավոտ:

— Փառք աստուծո՛. բայց տե՛ս, Ծիտուլ, աստուծո վողոր-
մությունը, յես այժմ իսկ նորա վերա եյի մտածում և քեզ հի-
շեցի թե վոչ, դու իսկույն Ռուսեթու մկան պես դուրս վազե-
ցիր: Առակը ասում է.

«Մարդո անունը հիշի՛ր,

Յե՛վ շորը ձգի՛ր»:

Միով բանիվ, Խալիփենց հարսը ծնել է վորդի:

«Այո՛, տեր հայր, ծնել է, գնանք, տունը փարատենք»:

— Ուրեմն դու գնա՛, շուրջառը և մաշտոցը բեր յեկեղեցուց
և յես իսկույն կգամ:

Ծիտուլը գնաց: Տեր Սարգիսը վեր կացավ, հանդերձը հա-
գավ և մտածելով կամաց կամաց գնում էր դեպի Խալիփենց

տունը: «Յերեկյան յերեկոյին աջո ականջս խաղում էր: Յե՛վ-
րեմ-վերդին բացեցի, գրած էր «յեթե ականջն խաղա, բարի լուր
չվիցես»: Դիչերս յերազում տեսա վոր ծառից մի հասած տանձ
ցած ընկավ ուղղակի կատարիս վերա: Յե՛վրեմ-վերդին ասում էր
«որն բարի յե, յերագն ի բարին կատարի»: Յե՛վ ճշմարիտ, այսոր
կատարվեցավ բոլորը: Տեր-Սարգիսը յեկավ Խալիփենց տունը:
Մի պառավ կին դուրս յեկավ նորա հառաջ, շներից ազատելու:

«Բարի վողջույն, մայր իմ, ասաց յուր սովորութեան պէս
տեր-Սարգիսը»:

— Որհնյա՛, տերտեր ջան, տնքալով պատասխանեց պառավը
և քահանայի աջը համբուրեց:

«Նորածինը հե՞ շտ աղատվեցավ թե վոչ, հարցրեց քահանան»:

— Այո՛, տերտեր ջան, ձեր աղոթքի գորութեամբ հեշտ ա-
ղատվեցավ:

«Հայտնի բան է հեշտ կաղատվեր, ըստ վորում ամբողջ գի-
շերը ծունը դրած աղոթում էյի և սաղմոս էյի քաղում նորածնի
համար»:

— Ծնորհակալ ենք, տերտեր ջան, պաշտում պատարաղի
հաստա՛տ մնաս:

Այսպես խոսելով մտան տուն: Ծիտուլը շուրջառը յերբ բա-
ցեց, յերկու մուկն դուրս վազեցին, իսկ մաշտոցի վերա փշեկուց
մի փոշեղեն թեթե ամպ բարձրացավ: Քահանան շարական ա-
սելով, մի գլուխ ավետարան կարդալով տունը փարատեց: Հե-
տո շուրջառը և մաշտոցը Ծիտուլի ձեռով ուղարկեց յեկեղեցի,
իսկ ինքը նստեց կրակի մոտ և պառավի հետ սկսավ գրույց տալ:

«Ուրեմն յերեխան յե՛րբ պիտո յե մկրտել, ծանր ու բարակ
հարցրեց տեր-Սարգիսը:

— Այդ ձեզանից է կախված, տերտեր ջան, մեք վոչինչ բա-
նի հասկացողություն չունինք, ոամիկ ժողովուրդ ենք:

«Այդ աղպես է, բայց իմ կարծիքով, ութ որից հետո պի-
տո յե մկրտել, ինչպես սովորական կարգը պահանջում է: Իսկ
յեթե կա վորեկից արգելք, մեք կարող ենք յերկու կամ յերեք
որով յես ձգել:

— Ի՞նչ արգելք պիտո յե լինի, հարցրեց պառավը:

«Մի՞թե փոքր արգելք կան, գոր որինակ ուտելիքի կողմից
կարելի յե պատրաստութեան չունիք. կամ գինու պակասություն

կա, կամ թե սղասում եք նորածնունդ յերեխայի հորը :

Յեթե յերկու կամ յերեք որով յես ձգենք մկրտությունը՝ մեղք չե՛, բայց յեթե որինալոր ճաշ չլինի պատրաստած, յերեխան յերկարակցաց չե լինելու :

— Ինչպես քո կամքն ե, այնպես արա : Աստուծո այդպիսի խորին խորհուրդները մեզ հայտնի չեն : Ձեզինք կարծում անգամ, թե այդպիսի բաներից յերեխան յերկարակցաց լինելու յե :—

«Հայտնի բան ե, ի՞նչ տեղից ձեզ հայտնի կլինին այդպիսի խորին խորհուրդները. դորանց խմանալու համար, կյանք ե՛ն մաշում մարդիկ, տարիներով ուսում են առնում, վոր փոքր է՝ շատ ծանոթանան նոցա. և այդպիսի ուսյալ անձինք շատ սաղավ են աշխարհիս վերա. նոցա թվումը կամ և յես» :

Փոքր բուսթենից հետո խոսքը հառաջ տարալ պառալը :

— Ուրեմն, տերտեր ջան, ի՞նչպես կհրամայեք. յերեխան յե՛րը կարելի յե մկրտել :

«Յերբ վոր նորա հայրը դա : Կարծյոք, նա չուտով դալու յե» :

— Այո՛, նա գնացել ե մի որական ճանապարհ, սայլով վառունդ, ձմերուկ և սեխ բերելու :

«Ռոքա սրտից մտտիկ պտուղներ են, մկրտության ճաշին կարելի յե ուտել» :

— Ինչպես կամենաք, կարող եք այնպես առնել. ձեզ մեր հողին անգամ չենք խնայելու :

«Շատ ուրախ եմ և շնորհակալ. յես հավատտի գիտեմ, վոր իմ ժողովուրդս ինձ սիրում ե և մեծարում. հայտնի բան ե, իմ արժանավորությունս ե պատճառ այդ պատվի և սիրո :

Տեր-Սարգիսը ուրախությամբ ընդունեց ծերունի կնոջ մատուցած արագի բաժակը և մոտեցնելով բերանին, մոռացավ, վոր մանուկի ծնունդը չեր որհնել, կրկին յես քարչեց և որհնարանեց այսպես. «Աստված շնորհավոր առնե, յերկարակցաց մանուկ լինի. Գրիստոսը նորան յուր ծնողներին պարգևե, բախտավոր ժառանգ լինի, աղոթատեր առ աստված և առատաձեռն առ հոգևորականները» : Այս միջոցումը ձախտ ձեռք պարգեց դեպի կուրծքը, իսկ պառալը յուրաքանչյուր բառից հետո դուրսը շարժելով քթի տակ խոսում եր «փառաց կենաս, տերտեր

ջան, պաշտում պատարագի հաստա՛տ մնաս» : Այս ե ահա՛ դուրսը կանների սովորական շնորհակալությունը :

Տեր-Սարգիսը բաժակը դատարկեց, հետո աչքերը փակեց, շրթունքը միմյանց կից արեց և բախական ժամանակ սկսավ դուրսը թափ անլ : Այս արդեն նշան եր, վեր արողը քաջ ներդործել ե նորա վերա : Վերջապես դուրս յեկավ և գնաց յուր տուն :

15.

Տեր-Սարգիսը ութ որ համարյա մանուկի մկրտության վերա յեր մտածում և ահա անցավ ութերորդ օրը, անցավ իններորդը ևս, բայց դեռ չկա նորածնի հայրը և վերջապես տաններորդ որում Ծիտուլը մի ուրախական ժպտումն յերեսին յեկավ տեր-Սարգիսի մոտ :

— Որհնյա՛, հայր սուրբ, դուրսը խոնարհեցնելով ասաց Ծիտուլը ձեռները կուրծքի վերա :

«Յես վարդապետ չեմ, հայր սուրբ մի՛ ասիր :

— Իմ համար վարդապետ ևս ես, յեպիսկոպոս ևս, մեծ ևս :

Տեր-Սարգիսը սէրամարգի թևեր ստացավ, կարծելով թե Ծիտուլի գովասանքը ուներ ինչևիցե կշիռ. իսկ ինքը ևս նրա դուրսը սկսավ յուղել :

— Յեթե այդպես ե, ազա Ծիտուլ, ահա՛ յես քեզ կսովորեցնեմ, թե ինչպես պիտո յե վարդապետին վողջունել :

— Պատրաստ եմ լսելու, սրբազան տեր, ձեր տերունական պատվերը, ուրախական ձայնով պատասխանեց Ծիտուլը :

«Յեթե քահանայի վողջունես, ասա՛, որիմա՛, տե՛ր, իսկ յեթե վարդապետի, ասա՛, աստված ոգևակամ, հայր սուրբ, և նա կպատասխանե «աստված պահապան» :

— Լսեցի ասածդ, տեր հայր, իսկ յեթե յեպիսկոպոս կամ նորանից ավելի մեծ լինի, ի՞նչպես վողջունեմ :

Այստեղ տեր-Սարգիսը չեր իմանում ի՞նչ պատասխանե, շատ վորում ինքն ևս չգիտեր. ճարը կտրած ասաց, դու կյանքումդ մի յեպիսկոպոսի անգամ պատահելու չես, ի՞նչ հարկավոր ե քեզ իմանալ. վորքան շատ բան իմանաս, այնքան շուտ

կծերանաս: Ծիտուլը մնաց անխոս, անձայն կանգնած, հետո շարունակեց քահանան.

«Ինչպես նկատում եմ, այսօր առանց հայտնի նպատակի չես յեկել իմ մոտ, Ծիտուլ է ժամկոչ:—

— Արդարև այդպես է:

«Ուրեմն ի՞նչ համբավ ունիս աշխարհիցը:

— Տերտեր ջան, այս գիշեր լսեցի՞ր արդյոք սայլերի խօսի՞մանդանձ ձայնը:

«Քա՛յվ լիցի, այդ ի՞նչ սայլեր ելին»:

«Ուալիփենց Գարբիելը, նորածնի հայրը, այս գիշեր յերեք ասօղիս սայլ բեռնած ձմերուկներով, վարունդներով, սեխերով և աստուծո այլ առատ աուրքերով, յերգելով յեկավ յուր տուն:

«Մի՞թե յեկավ Գարբիելը:

— Այո՛ յեկավ, ծանր շալակով և առատ պաշարով:

«Ուրեմն այսօր կարող ենք մկրտել մանուկը. մինչև որս Գարբիելին եյի սպասում, սովորականից անա յերկու որ անցել է:

Մի կարճատև լուռութուն յերկուսի մեջ: Ծիտուլը յուր քթի խոտափոշին նորոգում էր, իսկ տեր-Սարգիսը բերանը բանալով իրրև մի մեծ դարպասի դուռներ, հորանջում էր:—

«Գնա՛ Ուալիփենց Գարբիելի մոտ, Ծիտուլ, և ասա՛, կարե՛լի՞ յե արդյոք այսօր մկրտել մանուկը. յեթե նա համաձայնի դու կանգնի՛ր այն բարձր տեղը և վոտով գետնից փոշի բարձրացրու, յես արդեն կիմանամ, վոր խնդիրս կատարվել է, և հետո զնա՛ յեկեղեցի, բոլոր բաները կարգի բեր, այժազանը խտակիր, մինչև յես կգամ:

Ծիտուլը յերկու ձեռքը կուրծքին դրած, մի խոր գլուխ տալուց հետո ճանապարհ բնկավ գեպի Ուալիփենց տունը: Նա Գարբիելի հետ հարցուփորձ անելուց հետո՝ նորանից հավանութուն ստացավ մանուկը այն որը մկրտելու: Ծիտուլը դուրս գալով այն բարձր տեղը և տեր-Սարգսի տված պատվերին համաձայն վոտով փոշի բարձրացրեց և ինքը գնաց յեկեղեցի:

Քահանան իսկույն հասկացավ գործի եյությունը և մի քանի բուպեյից հետո մորուքը տմբացնելով, գավազանը պտույտ տալով գնում էր գեպի յեկեղեցին: Այստեղ այժևորդ ենք համարում հիշել ճանապարհի մեջ շրջապատ շների վարմունքը ար-

ժանապատիվ քահանայի հետ և նորա նոցա տված խորհուրդը, վոր նոքա հաշեն դորձակալի վերա, յերբ սա կրկին անգամ կվերադառնար Վարդաբուրբ գյուղը: Մինչև Ծիտուլը մոմոացնելով այժազանը խտակեց, մինչև քահանան յեկեղեցի հաստով, մի հասունակ կին, վորին վերոհիշյալ գյուղումը «տասմայր» են անվանում, և կնքահայրը մանուկը դանազան շորերում փաթեթած բերեցին յեկեղեցի: Յերկու տղամարդ ևս տաք ջրով լիք մաննեը ուսերին դրած հետևում եյին նոցա:

Բոլորեքյանքը ժողովեցան յեկեղեցու սրահը: Ծիտուլը «ալելուիա» ասելով շուրջաուր ձգեց քահանայի ուսերի վերա, վոր արդեն մկրտության կարգը կատարում էր: Իսկ ինքը, տասմայրը յուր տեղ կանգնեցրեց մանուկը ձեռին և կնքահայրը ևս յուր տեղ կանգնեցնելով, ականջումը փչեց «Յ՛յ, պարո՛ւն, խոզերդ ո՛ւմ ևս հանձնել, վոր դու յեկել ևս կնքահայր լինելու, կամ ծոցումդ բան ունի՞ս ժամկոչի համար»:

Արդարև կնքահայրը խողարած էր, վոր չնայելով յուր հոր համոզմանցը հազիվ հաղ հանձն առավ խոզերը թողնել և կնքահայր դառնալ, պտտճառ բերելով, վոր յերբեք չե յեղած և այժմ ևս կարող չե լինելու: Տեր-Սարգիսը յերկու բուպեյի մեջ բալական անցավ: Ծատ կարելի յե, վոր մի քանի աղոթք այժևորդ համարելով թողած լիներ, այդ թող ինձ և ձեզ միայն հայտնի լինի: Յերեք անգամ «Ի քեզ անկա յես հարդանդե հորովայնե մոր իմո, դու յես աստված իմ» ասելով և կնքահայրը յերեք անգամ ծուներ կրկնել տալով, մանուկը տվեց նորա գիրկը և շարական յերգելով մյտան յեկեղեցու մեջ, մի-մի անգամ շեմքի քարը համբուրելով:—

Ծիտուլը, իրրև մի առույգ պատանի, չեչտակի կամ այս կողմն էր թռչում կամ այն. մի բուպեյում տաք ջրով լցրեց ասօղանը: Տեր-Սարգիսը մերկ յերեխայի ձեռներից բռնեց և յերեք անգամ այժազանի ջրումը խորասուզելով ասաց. «Հանուն հոր և վորդո և հոգւույն սրբո, ամեն»: Այս միջոցին մանուկը սկսավ լաց լինել, քահանան ասում էր «մի՛ լար, վորդի ջան, քեզ լողացնում եմ տաք ջրում, կարելի յե այս առաջին և վերջին լողանալը լինի»: Մի քանի աղոթք ևս կարդալուց հետո, տեր-Սարգիսը մանուկը առնելով յուր գիրկը բարձրացավ բեմի վերա, այնտեղ հազորդեց նորան և հետո կանգնեց բեմի մեջ

տեղը, և կանչեց կնքահայրը: Ծիտուլը կնքահոր ձեռքը բռնած կանգնեցրեց նորան բեմի առաջ քահանայի դեմ:—

— Կնքահայր. ձայն տվեց տեր-Սարգիսը, մանուկը կռների վերա:

«Հրամայեցեք տերտեր, պատասխանեց կնքահայրը Ծիտուլի ողնականությամբ»:

— Ասա՛ «բուրվառ»:

«Բուրվառ, կրկնեց կնքահայրը:

— Վոսկին տո՛ւր, սանը ա՛ռ, շարունակեց քահանան:

Կնքահայրը մնաց դեռ ու դեն նայելով: Չեր իմանում ի՛նչ պատասխան տա: Ծիտուլը նույնպես հարցանում էր թե կնքահոր հայրը արդյոք վո՛չինչ չե՞ տվել նորան, քահանային տալու: Կնքահայրը յերբ նեղացավ, մի կատաղի բարկությամբ և վայրենի ձայնով պատասխանեց.

«Տվեցե՛ք ինձ յերեխան յուր մորը հանձնելու. թե չե, այս բույեյիս կթողնեմ ու կգնամ: Ծատ հասկանում եմ թե ի՞նչ է կնունքը: Ա՛յ տերտեր, ասում եմ, տո՛ւր յերեխան, թե չե, իսկույն տերտերին և տերտերակնոջը միմյանց կխառնեմ: Ինձ ո՞վ տվեց վոսկի, վոր դու ուզում ես: Այդ իմ հոր գործն է: Իմ գործս խոզեր արածացնելն է: Վո՛չ ձեր վոսկին է ինձ հարկավոր, վո՛չ արծաթը և վո՛չ ձեր կնունքը. այդ բոլորը իմ մյուս կողմն եմ անցնում»: Տեր-Սարգիսը յերբ լսեց խոզարած կնքահոր առատ խոսքերը, լուռ ու մունջ յերեխան նորան հանձնելով ցած իջավ բեմից. մնացյալ աղոթքներն ևս վերջացնելով կատարեց մկրտության կարգը:

Յեկեղեցու դռոնները կապեցին: Տեր-Սարգիսը կիսամաշ շուրջառը ուսերին ձգած, խաչը ձեռին, կնքահայրը մանուկը կռների վերա, իսկ Ծիտուլը կրակով լիք բուրվառը ձեռքին, մի քանի հատիկ խունկ ևս մեջը ծուխ արձակելով— բոլորեքյանը կամաց զրույց տալով գիմում եյին դեպի Խալիփենց Գարրիելի տունը:

Ճանապարհին ով պատահում էր, գողակը վերցնում էր և յերեսին խաչ հանում: Պառավ կանայքը «բախտավոր լինի» ասելով, նույնպես յերեսներին խաչ եյին հանում: Քահանայի վորդին և

միևնույն ժամանակը տիրացուն, վոր մինչև այն բույեն ներկա չէր, այժմ դալով միացավ նոցա հետ և իբրև տիրացու, առավ բուրվառը Ծիտուլի ձեռքից: Յերբ վոր մտտեցան Գարրիելի տանը, սկսեցին յերգել շարականը «Արեգական արդարության ծագմանը արուսյակ և այլն»: Գարրիելը դուրս յեկավ հանդիսակատարների առաջ և յերեսին խաչ հանելով ճանապարհորդեց դեպի տուն: Տան աջ կողմում հանգստանում էր նորածին մանկան մայրը, ձախ կողմումը սիռած էյին խալիչաներ հացկերության համար: Իսկ մեջտեղը գտանվում էր կրակատեղը, ուր կարգով շարված էյին կերակուրների պղինձները: Յեվ ահա՛ բոլորը կանգնած են մանկան մոր առաջև: Քահանան սովետարանը վերջացրեց. տիրացուն բուրվառը միմիայն պտույտ էր տալիս չնայելով, վոր ծխի մի նշան անգամ չէր յերևում: Յերբ վերջին հայրմերը սկսվեց, կնքահայրը յուրաքանչյուր ձեռում մի-մի վառած մոմ Ծիտուլի հրամանը կատարելով մոտեցրուց յերեխան դեպի նորա մայրը, վար այն բույեյին, ինչպես սովորություն է, կնքահոր վոտերը համբուրեց և յերեխան ստացավ:

Կնքահայրը միանգամայն հիացած էր մնացել, վոր յուր կուպտացած և ցխապատ վոտերը այժմուս համբուրման առարկա էյին դարձել այլոց համար: Տեր-Սարգիսը ուսերից ձգելով շուրջառը, նստեց խալիչու մեջտեղ, յերեսը դեպի կերակուրների պղինձները, տիրացուն ևս նորա մոտ. իսկ Ծիտուլը և կնքահայրը խալիչի յուրաքանչյուր ծայրումը: Այս միջոցում ժողովվեցան և մի քանի հրավիրված մարդիկ, վորոնք նույնպես նստեցին տերտերի հետ մի կարգում:

Ներկա դանվող կանայքը միմյանց ձեռքից հափշտակելով համբուրում էյին յերեխայի ճակատը, իմանալով վոր կա այնտեղ մի մեռնոնխաչ: Վերջապես սուվորան ձգեցին, կերակուրները բերեցին, բայց Գարրիելը դեռևս կանգնած, մարդերին ընդունում էր և կամ նստացնում: Քահանան հացը որհնեց, ամենքը ևս սկսան ձեռները պարզել դեպի առաջիկա կերակուրները: Գարրիելը գլխաբաց մի չափ ձեռին գինի յեր բաժանում: Ամենից առաջ, իբրև նախագահ, տեր-Սարգիսը բաժակը առավ ձեռը և սկսավ որհնել.

«Ծնորհավոր լինի, պ. Գարրիել, աստված քեզ պարգևե, յերկարակյաց լինի, բարի հիշատակ լինի, իմ դարսը հասնի,

ծնողացը մխիթարիչ լինի. աստված տա, մյուս տարի ևս արժանի լինինք մեք և դուք այսպիսի հանդիսակատարության, քո սուրբան միշտ ձրած մնա, քո գինու չափը լիքը դրած կենա, սիրող ուրախ լինի. աստված առողջություն տա մանկան մորը, դուք ևս այլրիք, պարոն հրավիրյալք»:

Բոլորեքյանքը գլուխ ավեցին և կրկնեցին.

«Թո՛ղ պահպանեն մեզ ձեր բարի ազոթքը»:

— Արժանյաց, ամենայն սրբոց, գլուխ խոնարհեցնելով պատասխանեց քահանան և բաժակը դատարկեց: Նորանից հետո նույն բաժակը ստացավ տիրացուն: Նա ևս մոքք ինչ որհնելով բերանի մեջ ավեց: Ապա կարգը անցավ մյուս մարդերի մոտ, վորոնք նեղություն տալով յուրյանց պուռներին, կրկնում էին միայն այս խոսքերը. «Ինչ վոր տերտերը ասաց, աստված լսող և կատարող լինի»: Վերջապես բախտավոր բաժակը հասավ Ծիռուլին: Նա դուռնը յերկարեցնելով, մտի կտորը կուլ տվեց և ապա կրկնեց մարդերի ասած խոսքերը, հավելացնելով միայն, թե աստված կնքահորն ևս խելք ու միտք տա: Ոմեյու ժամանակը, բաժակը նորա քթի հետ մի կամար կապեց և գինու մի մասը ևս թափվեց վերին պուռը, արդեն մեզ հայտնի ամանի մեջ, խառնվեցավ այն սևադույն նյութի հետ և նախահիշյալ մեքենայարանությանը մասնակից յեղավ: Յերկրորդ անգամ, վոր բաժակը ստացավ քահանան, այլևս չկրկնեց վերոհիշյալ աղոթքը, այլ բավականացավ ասելով, թե քրիստոսի սուրբ աղավինն լինի պահպան նորածին մանկանը: Յերր Վոր ամենի կատարները տաքացան, մարդերից մինը, վորոնք ըստ մեծի մասին ծերեր էին, հարց առաջարկեց քահանային:

«Տերտեր ջան, բարկություն չլինի ձեզ մի խնդիր բացատրելու»:

— Քավ լիցի, յես միշտ պատրաստ եմ մութն բաները պարզաբանել վորոնց աշխարհականների միտքը հասանել չե կարող:

«Շնորհակալ եմ, տերտեր ջան:

Ամենքն ևս լուռ ու մունջ ականջ էին դնում, աչքերը չեռտակի ուղղած դեպի քահանան:

— Այդ ի՞նչ աղավինի յե, տերտեր ջան, շարունակեց ծերը: Մթթե չեք իմանում, վոր քրիստոսի վերա մի աղավինի լիջավ:

— Ո՞ւր կամ ինչպե՞ս էջավ:

«Միտս ե, վոր իմ վարժապետս ինձ պատմում էր, շարունակեց տեր-Սարգիսը— թե քրիստոս յերբ շողի սաստիկութենից լողանում էր Հորդանան գետումը, սաստիկ սովեց: Աշակերտները գետի ափը նստած էին նույնպես սոված: Հայտնի բան է, քրիստոս իբրև աստված կարող էր խկույն հաց ստեղծել, բայց յուր հրաշագործությունները աշակերտներին ցույց տալու համար, նայեց դեպի յերկինքը և աղոթեց: Աստուծո հրամանով խկույն ամպի միջից մի աղավինի դուրս թռավ ուղղակի դեպի քրիստոս և սկսավ նորա գլխի շուրջը պտույտ դալ: Քրիստոսը յերբ ձեռը հանեց ջրից, խկույն աղավինն նստեց նորա վերա: Քրիստոս ասաց, անմեղ և խոնարհ թռչուն, յես քեզ չկամիմ կերակուր առնել ինձ և իմ աշակերտներին, գնա՛, թռի՛ր, և քո աղդը թո՛ղ բնակվի իմ տանս: Աղավինն կրկին թռավ ու կորավ ամպի մեջ: Այս միջոցումը աշակերտները զարմացած ու ապշած էին մնացել գետափումը: Ահա՛ այս է քրիստոսի աղավինը»:

— Ուրեմն քրիստոսի տունը վորն է, ուր կենում են աղավինիքը, հարցրեց ծերը:

«Որհնված, այդ հարցմունքը ամենևին կարոտ չե բացատրության. ուր վոր մի յեկեղեցի կամ մի վանք կա, այնտեղ և քրիստոսի տունն է. նկատած կլինիք, վոր միշտ այդպիսի վանքերի և յեկեղեցու պատերի մեջ, կտուրների վերա և կամարների տակ միշտ հարյուրավոր աղավիններ են բնակվում և շատանում»:

— Արդարև այդպես է, հիացմամբ պատասխանեց ծերը և լուեց:

Քահանան սկսավ գինի խմել և հաց ուտել, բայց մինը Ծիռուլի մոտ նստողներից ցած ձայնով խոսում էր ժամկոչի հետ.

«Ա՛յ մարդ, Ծիռուլ, այս որհնված քահանան զարմանալի դիտության տեր է, կարծես աշխարհիս բոլոր բաները դորան հայտնի լինին:

Ծիռուլը բերանը լիքը ունենալով, գլխի շարժողությամբ հավանություն տվեց նորա կարծյացը. իսկ կուլ աալուց հետո պատասխանեց.

— Ի՞նչ ես ասում, վոր թե միայն աշխարհիս բաների, այլև յերկնքի բաների վերա ևս տեղեկություն ունի. դժոխքը և արքա-

յուրթյունը նորա առաջն բաց են: Մանավանդ թե յերազը ի՞նչպես է մեկնում, ո՞չ իմ աստված....

«Յերևի փիլիսոփաների գրչանք շատ է կարգացել:

— Տո՛, ասես մի գիրք անգամ թողած լինի առանց կարգալու, քա՛վ լիցի: Մի գիրք ունի անունը Յեփրեմ-վերդի, ինչ կամիս, նորա մեջը կա, յերազի մեկնություններ, յուրաքանչյուր որի չարն ու բարին, արեգակ, լուսին, աստղ, ծով, յերկինք, վո՞րն ասեմ, միով բանիվ ամեն բան, թե հայ ես, հասկացի՛ր:

«Դո՞քա ազգով են այդպես գիտուն, դորա պապն ևս կարծյոք իմաստուն մարդ եր:

— Այդպես է: Սա մի փոքր գիրք ունի, վոր ինձ ցույց տալով պատմեց, թե աշխարհիս ծայրումը մի պղնձյա քաղաք է յեղել, վորի տները պղնձյա, դռները, ճանապարհները, կամուրջները, գետերը, կարծյոք ջուրը և մարդիկը նույնպես պղնձյա և մինչև անգամ քաղաքի շրջապատ պարիսպը նույնիսկ պղնձյա: Աշխարհումս վոչ մի մարդ չէ կարողացել մտանել այն քաղաքի մեջ. ամենքը պղինձ դառնալիս են յեղել. բայց տեր-Սարգսի պապը արծակ համարձակ դնում է, ման է դալիս բոլոր տեղերը քաղաքի մեջ, հետո դալով ծովի ափ, բռնում է սատանաները և ածում է կժերի մեջ և բերանը կնքելով ձգում է ծովի մեջ: Ահա՛ այս բոլոր բաները նա գրում է մի առանձին գրքի մեջ և անվանում է «պղնձյա քաղաք»:

Հացը վերջացավ, քահանան վերջին հայր մեքը ասաց և ամենքը վեր կացան:—

Տեր-Սարգիսը դուրս գալու ժամանակին մի պահպանիչ ևս կարգաց Գարբիելի գլխին, հետո ավելացրեց թե հարկավոր է հաշիվ տեսանել, միայն թե յե՞րը կկամենար Գարբիելը:

Գարբիելը խոստացավ դալ քահանայի մոտ հետևյալ որը:

Յե՛վ ահա քահանան դուրս յեկավ և նորա հետևից բոլոր ժարդիկը: Ծիտուլը իսկույն մոտեցավ նորան:

«Հը՞... Ծիտուլ, մի քանի որվա համար փորումդ պաշար վերառած ես, թե չէ՛, գաղտնարար հարցրեց տեր-Սարգիսը:

— Տերտեր ջան, մի՞թե յես բանականություն ու խելք չուսիմ այդպիսի բաներում: Յես իմ հաշիվս լավ գիտեմ:

«Յես ևս ընդունակ եմ այդ բաների մեջ, փորս ահա թմբուկ է դարձել:

— Վնաս չկա, տեք հայր, ցանկանաս ևս, թմբուկդ պատրուվելու չէ՛, ըստ վորում մաշկեղեն գոտիդ հաստ ու լայն է:

«Արդարև այդպես է. յես մի քանի անգամ նկատել եմ, վոր քաղաքի հաստափոր քահանայքը միշտ լայն գոտի յեն կապում, «սհա՛ գոր որինակ տեր-Սրապիտնը»:

— Մի՞թե շատ մեծ փոր ունի նա:

«Ո՞չ... ո՞չ... ո՞չ... աստված հեռու տանե, գոմեչը քեզ որինակ:

— Պատճառը ինչ է այդքան մեծանալու:

«Պատճառը այն է, վոր ժամահացի կամ քելեխի ժամանակ առաջին կարգումը նստած, ավելի ընտիր և ավելի պարբար բախիներն է ուտում: Յերը հատնում է յուր բաժինը, գոռում է, «Տո՛, տիրացո՛ւ, կամ Մարկոս կամ Կիրակոս, կանճին դեսը ձգե՛»: Իսկույն փոխանակ մի կանճու, մի վոչխարի ամբողջ կեսը յեված, շինած կարծես մեքենայով դալիս է նորա առաջը կանգնում: Յերևակայի՛ր քեզ մի քանի որ կարգով այս կերպ ճաշելը: Հայտնի բան է, վոր ահամա կամոք փորի կաշին կձգվի, կհավասարվի մի գոմչի թափանի:

— Յերևի, ճանապարհորդ շա՛տ է պատահում դեպի մյուս աշխարհը, ծիծաղելով հարցրեց Ծիտուլը:

«Իհարկե, յեղրայր, այնտեղ քաղաք է, ասհաբին բազմություն կա, յուրաքանչյուր որ գոնյա մի քանի հանգուցյալ է պատահում: Մեր գյուղը չէ, վոր մարդ բարձր քարի դադաթին պուպուզ առնե և ախանջ դնե թե ու՞ր արդյոք մի սգի ձայն կլսե: Յերբեմն ևս հոր կամ մոր ծեծելուց վորդու ձայնը լսում ես, կարծում ես թե ահա մարդ զլորվեց դեպի գերեզման, բայց մոտենալով, տեսնում ես, վոր ամենքը կարգով նստած հաց են վայելում: Բախտիդ վերա թքելով, իսկույն յերեսդ դարձնում ես:

— Յերեվակայիլ չեմ կարող, թե հաստափոր քահանան ի՞նչ չնորճք պիտո յե ունենա:

«Տո՛, Ծիտուլ, հաստափոր քահանայքը մեծ պատիվ ունեն այժմյան ժամանակս: Նոցանից ուտում, գիտություն չեն պահանջում, այլ յեթե փորը հաստ է, ամենի գլխի վերա տեղ ու-

նին: Այդ ևս մի ձիրք է: Յերբեմն, կամ, կարելի չէ ասել, միշտ նոցա տալիս են այնպիսի պաշտոն, վոր վոչինչ չառնեն, այլ սաղի ու չնորհի համար նստեն ու փորը դուրս ձգեն: Որինակի համար ասա վերոհիշյալ տեր-Սրապիտոնը, թեպետ դու չես տեսել նորան, բայց յես մի քանի անգամ քաղաք դնալով տեսել եմ այնտեղ: Արդարեւ նա չունի ուսում, գիտութիւն, բայց թեմակալ յեպիսկոպոսը Կոնստանտնուպոլիսի առաջին անգամ է շինել նորան: Այլք ասում է յին, վոր գիտութեան կողմից նա արժանի չէ անգամ լինելու, բայց յեպիսկոպոսը պնդում էր թէ նորա բարձր հասակը, փառահեղ մորուքը և, վոր գլխավորն է, հաստ փորը արժանի յեն կացուցանում այդ պաշտոնին:

— Տերտեր ջան, դու նորան տեսած ես Կանդապոլումը:

«Վա՞հ... վա՛հ... վոր հանկարծ մտա, տեսա մի մեծ աթոռի վերա նստած է նա, աչքերը մեծ մեծ, քիթը յերկար, մի կազ լայնութեամբ մաշկեղեն գոտին կապած, խառա փարաջան հաղած, այնպես հաստ, վոր տեսնողը կարծում էր թէ յերեք մարդ են միջանց հետ կապած:

Այսպես խոսելով յեկան տեր-Սարգսի առն:

Քահանան յուր սովորութեան պես մահճակալի վերա պահեց յերեսը դեպի յերկինք: Հետո ձեռը փորին քսելով և ո՞՞... ո՞՞... առնելով ասաց, այժմ կատարյալ վարդապետ եմ, հայտնի բան է փորիս կողմից:

Մի կարճատև լուսթյունից հետո ձայն տվեց տեր-Սարգսի:

— Ծիտո՛ւլ, մոտեցի՛ր ինձ:

Իսկույն դեպի քիթը պաշար ուղարկելով, մոտեցավ նա:

«Այստեղ է խոնարհ ծառայը»:

— Գնա՛ աշտրվա չորան կնքահորը ասա՛, վոր վաղը դա է հաշիվ տեսանե իմ հետ:

«Նա չորան չեր, այլ խոզարած էր:

— Միևնույն է, չորան և խոզարած մի մեքենայի ներդուրծութեան բերք են:

Ծիտուլը քթի տակ մոմոացնելով հեռացավ, իսկ տեր-Սարգսիը հանգիստ պահած մտածում էր.—

«Վաղը կգան իմ մոտ Խալիփենց Գարբիելը և կնքահայրը: Գարբիելը կարծյոք կարողութիւն ունի. մկրտութեան վարձ դուրս յերեք մանեթ կտա. տուն փարատելուն թեպետ վոչինչ չեն»:

տալի, բայց յես իբրև վողորմած մարդ միայն տասն հատ ձրմերուկ, տասն սեխ կառնում: Տիրացվի, այսինքն վորդուս Բամար գոնաբացեք կատանամ: Թեպետ այս պատահում է հարսանիքի ժամանակ. այն է, մինչև հարսի ու փեսայի գալը խերացուն ներսից դուր չէ բացում, մինչև դրամ չէ ստանում, բայց վոչինչ վնաս չկա: Ո՞վ է հարցանողը, հարսանիք է թե մկրտութիւն: Այդ յերկու հանգեսի հարաբերութիւնը միմյանց հետ շատ մոտ է: Յեթև լինում է հարսանիք, հետեվանքը պիտո յէ լինի մկրտութիւն: Ծիտուլի վերա ավելորդ է մտածել, ըստ վողրում նա այնպիսի սատանայի ճուտ է, վոր ասանց ինձ ևս յուր քանը գլուխ բերել կարող է: Ուրեմն Գարբիելին մի կողմ դնենք, ձեռք բերենք այժմ կնքահայրը: Նա նույնպես կարողութիւն ունի: Իբրև կնքահայր նա պիտո յէ գոնյա յերկու կամ յերեք մանեթ փող տա. կասեմ, ըստ վորում անբան վորդին էր հոր փոխանակ, վասնորո մի խող ևս պարտական է ընծայել, վերջու խողարած լինելը պատճառ բերելով: Այստեղ Ծիտուլը նույնպես կարող է յուր գլխի հողար տեսանել»: Բավական յերկար մտածելուց հետո յերկու անգամ այնպես փռչտաց, վոր բոլոր մարմնի մեջ մի թեթևութիւն զգաց, հետո յերեսին խաչ հանեց:

«Առողջութիւն, տեր հայր, փռչտալը հաջող լինի»:

Տեր-Սարգիսը անսպասելի կերպով այս ձայնը լսելով իսկույն վեր թռավ:

— Ա՛յ դու անիրավ Ծիտուլ, փոքր մնաց լեզիս պատասեյիբ ահից, ինչո՞ւ աղպես ծածուկ նս մոտենում:

«Վոչինչ տերտեր ջան, հրաժարիմք ի սատանայի ասա՛, լեզիք չի պատասովելու, հեղնորեն պատասխանեց Ծիտուլը:

— Բավական է, ինչ բանի համար ուղարկեցի քեզ, քորա վերա է խոսի՛ր:

«Գնացի կնքահոր մոտ, տեսա, Խալիփենց Գարբիելն ևս այնտեղ է, իսկույն կարծեցի, վոր քո հաշիվ վերա յեն խոսում, հետո յերկուքն ևս ասացին թե վաղը կգան:

— Եստ բարի, այժմ դնա՛ քո տունը:

«Շուտով գնալու յեմ ահա՛, միայն ասա՛, խնդրեմ, փռչտալուց բոպեյին ի՞նչ բանի վերա եյիբ մտածում:

Քեզ ի՞նչ հարկավոր է իմանալ, հիմար փիլիսոփա:

«Խնդրեմ, յեթե կարելի յե, ասե՛ս, մեղմորեն հարցրեց Միտուլը:

— Յես մտածում եյի մկրտութենից ստանալիք արծաթի վերա:

«Յես ևս նույնիսկ արծաթի վերա եյի մտածում, բայց բարձր յե թե չար»:

— Հայտնի բան է բարի յե, ըստ վորում ջուխտ փոշտացի:

Կան միքանի սնոտխապաշտ մարդիկ, վորոնք փոշտալուն և մարմնի զանազան մասանց շարժմունքին, աչքի, հոնքի, ձեռքի, ախանջի և այլն— տալիս են զանազան կերպի մեկնություններ և զանազան կերպ նախագուշակություններ դարոյ ժամանակներում: Տեր-Սարգիսը և Միտուլը պատկանում եյին այդպիսի մարդերի կարգին:

Յերեկոյան մութը արդեն տարածվում էր: Գյուղի կենդանացնող ձայնը փոքր առ փոքր դադարում էր: Միտուլը բարի դէշեր մաղթելով տեր-Սարգսին, դնաց յուր տուն:

18.

Ժամկոչ Միտուլը միշտ մտանում էր ամենայն տուն, ամենայն տեղը, ամեն գերդաստունի մեջ, բոլոր բաները խմանում, հուսահատների ցավին խոսքերով ցավակից լինում, ուրախներին ուրախակից լինում, մարդերին պատիվ տալու համար քթախոտի ամանը մոտեցնում էր նոցա, ինքն ևս քարշում էր, փոշտում էր և յերեսին խաչ էր հանում. իսկ ուրիշներին փոշտալու ժամանակ առողջություն էր ցանկանում: Գյուղի ամենաչնչին համբալն անդամ հառաջ նա կիմանար:

Նորան հայտնի եյին թե այսինչ մարդու աղջիկն ում են մարդու տալի, վոր դյուղում և յե՛րբ կնշանեն կամ հարսանիք կանեն, կամ թե այսինչ նորապսակ հարսերը պիտո յե յերեսա՞ծնեն, իսկ ծնած յերեսան աղջիկ է թե տղա, կամ յե՛րբ պիտո յե մկրտել: Իմանալով այս բոբորը, Միտուլը արագ սուրհանդակի պես մանրամասնաբար հասցնում էր տեր-Սարգսի ախանջը: Մի անգամ, յերբ տեր Սարգիսը յերեկոյան ժամասացությունը ավարտելով Միտուլի հետ գալիս էր դեպի յուր տուն, ասաց.

«Միտուլ, Ռուսեթու մկան պես դու մտանում ես դյուղի բոլոր անկյունները, ասա՛ տեսնեմ ի՞նչ համբալ կա:

— Քո Միտուլը սաղ լինի, թե չե, համբալ շատ կստանաս: «Յերևի նոր համբալ կա, վոր այդպես ծանր ու բարակ ես խոսում»:

— Քո որհնությունը լինի իմ վերա, թե չե, համբալ բավական կա:

«Ուրեմն ասա՛, ի՞նչ համբալ կա»:

— Յեթե Միտուլից ասաված յերկար կյանք պարգևե, հայտնի բան է կասե:

«Ո՛հ... որհնվածի վորդի, սիրոս արաքացրեցիր, համբուրությունս հատով, ասա՛ ինչ բան դիտես, բարկացած պատասխանեց տեր-Սարգիսը:

Մի՛ բարկանար, տերտեր ջան, վորքան շատ բարկանաս, այնքան շուտով կձերանաս. ժամագրքի մեջ ասում են «Յեվ վոր համբերեսցե, իսպանախ կերիցե» համբուրությունը կյանք է:

«Հիմա՛ր, ինչ բան չես հասկանում, բերանիցդ մի՛ դուրս թողնիր»:

— Չե, տերտեր ջան, սուրբ աջդ վկա, վոր համբալ դիտեմ:

«Յես նորա համար եմ ասում, վոր որինակը սխալ է»:

— «Մի՞թե սխալ է, ուրեմն ներիր ինձ, տերտեր ջան, յես հնազանդ եմ և պատրաստ եմ ձեր ուղղածը լսելու, դուրսը խոնարհեցնելով և ձեռը կուրծքին դրած, պատասխանեց Միտուլը:

«Առաջին, այդ որինակը Մաշտոցի մեջ է. յերկրորդ, իսպառ նա կեցցե և վո՛չ իսպանախ կամ լորի, ինչպես քեզ պես հիմարն է ասում»:

— Յես մեղա աստուծո, տերտեր ջան, յես...

«Թո՛ղ այդպիսի ծաղրածությունները, միայն ասա ի՞նչ նոր համբալ ես լսել»:

— Տեր հայր, մի՞թե չես իմանում իմ համբալները ինչ կլինին. հայտնի բան է կամ հարսանիք կլինի, կամ մկրտություն կամ նշանդրեք կամ թաղումն, վորոնց մի՛նը մյուսից լավ և ոգտակար իմ և քո համար:

«Ուրեմն դոցանից վո՞րն է այժմ կատարվելու:

— Թաղում չե լինելու, ըստ վորում տնաքանդները չեն մեռանում. մկրտություն ևս չի լինելու, վորովհետև նոր են պատրաստում. ուրեմն մնաց մի՛նը, այսինքն հարսանիք, վոր չունի

նշանակյալ ժամանակ, այլ յերբեմն շուտ և լինում, յերբեմն ուշ. և յերբեմն ամենևին չքանում և:

«Քո համբավը ուրեմն հարսանիք և:

— Այո՛, տե՛ր, առավոտը մի քանի ձիավորներ մտտիկ գլուղից յեկան Ծոնորենց Պետրոս աղի տունը: Յես իսկույն յերեսս չլվացած, այնտեղ տուն պրծա և իմացա, վոր աղի աղջիկը ուզում են նշանել և մի քանի որից հետո հարսանիք առնել: Սաստիկ ուրախացած կամեյի դալ քեզ իմացումն տալ, բայց աղեն ասեց, վոր նշանդրեքը վաղը պիտո յե լինի:

«Արդարև ասածդ ուղիղ և, յես ևս առավոտը մի քանի ձիավորներ տեսա Պետրոս աղի դռանը, պատասխանեց տեր-Սարգիսը»:

— Ի՛սկ այդ և, քո ասածն և:

«Ուրեմն վաղը ինձ կկանչեն նշանդրեքը որհնելու. այդ շատ լավ բան և, բայց պիտո յե ասած, վոր նոքա հարո՞ւստ են. չէ՞, Ծիտուլ»:

— Ո՞հ... ո՞հ... ո՞հ... Արքայութեան մեջ ինչ վոր կա, նոցա տանը կարելի յե գտանել: Նոցա հազուստից կարելի յե իմանալ թե ի՞նչպիսի կարողութիւն ունին: Այնն մինը Պետրոս աղի վորդիներէից մի մի սպիտակ կոթով դաշնակ ունի իշի ականջի պես կախած գոտիկից: Կոշիկների վերա հինգ դագ կանաչ ու կարմիր թել կա և այնպես սիրով են, վոր չորս վորդիքը ևս միայն մի սպիտակ շուխով են կառավարվում:

«Գինի կարծյոք շատ ունին, հարցրեց տեր-Սարգիսը»:

— Ինչպես չե. մի սենյակ միայն գինու կարասներով և լիք:

«Այդ լավ և, այդ մեզ մխիթարութիւն և: Սաղմոն մարգարեն ասում և «գինին դալալան և ձերոց» յեթե գինի կա, կնշանակե հարուստ են»:

— Այդ կողմից միամիտ մնացիր, տերտեր ջան. յես այսօր առավոտ այնտեղ թե նորեկներին և թե Պետրոս աղին ասացի, վոր մեր տերտերին պատիվ տան. նոքա իսկույն համաձայնեցան:

«Շատ լավ ես արել, Ծիտուլ, դոնարացեքից ստացածս քեզ կրնձայեմ»:

— Ծնորհակալ եմ, տերտեր ջան, աշխատիր գրամ շատ պուկել նոցանից, մտնավանդ նորեկներից. նոր նոր հնարներ մտա-

ծիր, այդ հազվագյուտ աղբյուր և, կարծյոք այլևս շատ լինելու չե հարսանիք:

«Յես այժմ կգնամ տուն և այս գիշեր հնարներ կմտածեմ, նոցանից բան քերելու, և դու ինչպես մինչև այսօր, նույնպես և այժմ կլինիս իմ գործին»:

— Պատրաստ եմ, տե՛ր. հույս ունիմ վոր ինձ ևս անտես չես առնելու, ահա՛ ժամանակ և տուն դնալու, աջդ տո՛ւր, համբուրեմ և գնամ:

Ծիտուլը քահանայի աջը համբուրելով հեռացավ նորա մտտից: Տեր-Սարգիսը մնաց միայնակ ու համարյա՛ մոտեցել էր յուր տանը: «Այս լավ բան և, մտածում էր նա, այս գիշերվա յերազս և Յեկիմեղեյի ասածը իսկ կատարվեցավ: Ծիտուլը մեծ հուսով դնաց, իրր դոնարացեքից ստացվածքը նորան կտամ. բայց թե սատանան ինձանից բան կստանա, նա ևս նույնպես: Այդպիսի խոստմունքներ նա շատ և լսել: Միայն պիտո յե այնպես աշխատել, վոր այդպիսի հարուստ հարսանիքից ոգուտ շատ լինի ինձ»:

Առավոտը կիրակի յեր լուսանում: Տեր-Սարգիսը ժամը սկիսեց: Ծերերը և պառավ կանայքը յուրյանց սովորութեան պես, դավապանի ողնութեամբ, տնքալով յեկան յեկեղեցին: Ծիտուլը, համարյա՛ մի տեղ չէր կանգնում հանգիստ. յերբեմն մտնում էր ժամ, կամ այս մոմն էր վառում կամ այն հանգչնում, կամ թե մոտենալով շարականին կամ ճաշոց գրքին, փչում էր և փոշի բարձրացնում: «Տեսե՛ք, տեսե՛ք, մի թիղ փոշի յե նստած այս գրքերի վերա: Աստված մի արասցե, յեթե յես չլինիմ, միանգամայն կիչանան սոքա: Ամբողջ տարի վոր անց կենա, տեր-Սարգիսը չի նայելու մինչև գործակալի դալուստը: Արհնավածի վորդի, կարելի յե, մկները կերել են կամ անձրևը թաց և արել: Ամեն մի շապիկ, փիլոն, շուրջառ թափ տալիս քսան մուկն են փախչում միջից: Յերբ վոր մի վարդապետ կամ գործակալ և դալիս, այս գրքանքը ուրախանում են, ըստ վորում տեր-Սարգիսը ավելորդ և համարում սոցա գործ ածել այլ ժամանակ. բայց վոր մի վարդապետ կամ գործակալ յեկավ, իսկույն ասում և, տո Ծիտուլ, դնա՛, զգեստը թափ տուր, գըր-

յանքը խտակիր· իմանում ե, վոր մկները ճուտեր են հա-
նել և ծիտերը ձկեր դրել զգեստի մեջ: Միանգամ գոր-
ծակալը ժամ յեկավ, ման յեկանք, այս անկյուն թռանք,
այն անկյունը ընկանք, չկարացինք ճաշոց գիրքը գտնել: վերջա-
պես ածուխի տակին գտանք, մրումը սկացած:

Մի անգամ ևս շուրջառը կորավ: Շատ ման գալուց հետո
գոմի մեջ գտանք: Սորա պատճառը նույնպես տեր-Սարգիսն էր:
Նա վոչխարի երին, վոր մատաղ եյին բերել, փաթթել էր շուր-
ջառի մեջ և դրել յեկեղեցու սրահումը: Միով բանիվ, յեթե յես
չլինիմ, այս յեկեղեցին մինչև այժմ քանդված կլիներ»: Այսպես
մոռացնելով Միտուլը գրյանքը խտակեց, հետո դուրս գալով
մի բարձր ածեց յուր տախտակե դանդակները և ապա յեկեղեցու
մօտից սկսավ դռալով, գոչելով «որհնալ է աստված, ժամ
հրամայեցեք» ման դալ գյուղի մեջ: Նա իմանալով, վոր Ծոնո-
րենց Պետրոսի աղջիկը նշանելու համար շատ հյուրեր են յեկել,
կանգնեց նորա տան դեմը և մի քանի անգամ հազարուց և ձայնը
խտակելուց հետո այնպես գոռաց, վոր բոլոր շները դուրս վա-
զելով, նորա շուրջը պատեցին, բայց այս հանգամանքը ամենե-
վին արդեւը չեղավ նորա հառաջադիմությանը: Նա և՛ս առավել
բարձր էր գոռում, մինչև բոլոր հյուրերը ակամա կամօք հանձ-
նառու յեղան գնալու ժամ: Տեր-Սարգիսը ավետարան կարդալու
ժամանակ նկատեց մի քանի անծանոթ մարդիկ, իսկույն իմացավ,
վոր սոքա նորեկները պիտո յե լինելին: Ժամը վերջացնելուց հե-
տո տեր-Սարգիսը մի գիրք ձեռին «պահպանի՛չ» կարդաց նորեկ-
ների գլխին: Հյուրերը տեսանելով այս պատիվը քահանայի կող-
մից, մի-մի մանեթ փող ընծայեցին: Տեր-Սարգիսը շատ ուրա-
խացավ, կատարված տեսանելով յուր դիտավորությունը և փո-
ղը ստանալու ժամանակ, ամենի գլուխը համբուրեց: Բոլորե-
քյանքը դուրս յեկան և յեկեղեցու մոտ կանգնեցին: Քահանան և
Միտուլը մնալով յեկեղեցու մեջ, միմյանց հետ խոսում էյին:

«Տեսա՞ր, Միտուլ, ինչպես աստուծո որհնած մարդիկ էյին
այս նորեկները»:

— Թեպես յես չեմ իմանում, բայց կարծյոք վոր լավ մարդիկ
են:

«Շատ աստվածապաշտ և առատաձեռն մարդիկ են»:

— Կարծյոք ոչհահամբուր յովեցին քեզ, հարցրեց Միտուլը:

«Այո՛ տվեցին, բայց շատ սակավ»:

— Վո՞րքան տվեցին, տերտեր ջան:

«Մի-մի արատի և վո՛չ ավելի»:

— Տեր հայր, նոքա թուղթ տվեցին, մի՞թե մի մի արասա-
նոց թուղթ կա:

«Այո՛ կա, այդ նոր դրամ ե»:

Միտուլը գնաց կանթեղները հանդնելու: Քահանան փիլոնե
ուսերից դեն ձգեց և դուրս գալով մտածում էր: «Այս շատ հա-
ջողակ վորս ե, չե պիտո բաց թողնել, յես փոքր ինչ ընդգեմ կը-
կենամ և կասեմ այսոր տոն ե, չե՛ կարելի հարսնախոսությունք
որհնել, կարելի յե մի քանի մանեթ ավելի տան»:

Բոլոր ժողովուրդը վրտաքի վերա կանգնեց, յերբ յերեւցավ
քահանան:

— Նստեցե՛ք, խնդրեմ, ձայն տվեց տեր-Սարգիսը և ինքը
նստեց: Նորա հետևից նստեցին և մյուսները:

«Տեր հայր, ներեցեք իմ համարձակությանս խոսել ձեր հեա
առանձին, յեթե կարելի յե, ասաց նորեկներից մինը»:

— Հրամայեցեք, խնդրեմ, աղա, ժպտալով պատասխանեց
տեր-Սարգիսը:

Հյուրերը, Պետրոսը և քահանան ժողովրդից հրաժարվելով
կամաց քայլով դիմում էյին դեպի Ծոնորենց տունը:

«Ինչպես ձեզ հայտնի յե, տեր հայր, շարունակեց նորեկը,
յերեկ մեք յեկանք Պետրոս աղի աղջիկը նշանելու. բոլոր բաները
պատրաստի յեն, մնում ե միայն ձեր արժանապատվության կա-
մաց համաձայնությունը»:

Տեր-Սարգիս ուրախությունը առաւել սաստկացավ, յերբ
նկատեց վոց բոլոր բանը յուրյանից ե կախվա՞, յեթե կամենա,
կարող ե քանդել կամ չինել: Նա յուր մտադրությունը ավելի
խիստ հաստատեց:

— Ինչ վոր ինձանից ունի կախումն, յես պատրաստ եմ,
շուտով կատարումն սալ, յեթե չկա վո՛չինչ արդեւը:

«Կարծյոք, վոչինչ արդեւը չկա, յեթե դուք համաձայնե-
ցե՛ք»:

— Ի՞նչ ե ձեր խնդիրը, հայտնեցեք պարզապես, ասաց քա-
հանան:

«Ոնդրում ենք միաբերան, վոր այսոր կատարեք նշանի որհ-

նության կարգը, ըստ վորում մ'ը շտապում ենք, այսոր պիտո յե մեզ դուրս գալ այս դյուղից»:

Նոցա շտապելը ավելի հաջողութուն ավեց տեր-Սարգսին յուր մտադրությունը կատարելու:

— Եստ բարի յե'ք հրամայում, աղա, միայն այսոր չե կաքելի որհնել:

«Վա՞յ... քո կարգիդ մեռնեմ, չե մի' ասեք»:

— Եստ ցափում եմ, բայց վոչինչ չեմ կարող անել:

«Տեր հայր, ի սեր աստուծո համաձայնեցեք, մեզ հափիտյան պարտական կկացուցանեք»:

— Սիրելիք, պատասխանեց տեր-Սարգիսը, դուք լավ իմացեք, վոր յես ձեզ շատ սիրում եմ, և յեթե հնար լիներ, ձեր խնդիրը անկատար չեյի թողնելու: Բայց միևնույն ժամանակը յես չեմ կարող սուրբ հայրապետների ընդդեմ վարվել:

Նոքա յերբ յսեցին հայրապետ բառը, իսկույն յերեսներին խաչ հանեցին:

«Տեր հայր, պատճառը ի՞նչ է, վոր հրաժարում եք մեր խնդիրը, հուսահատված հարցրեց նորեկը»:

— Պատճառը այն է, վոր այսոր Անտոն ճգնավորի տոնն է, նշանադրության կարգը չե կարելի կատարել: Յեթե կամենաք, կարող ենք նայել տոնացուցին:

Հյուրերը և Պետրոսը միասին շատ ազաջեցին տեր-Սարգսին, բայց վո'չ մի կերպով չկարողացան համոզել նորան:

«Ուրեմն ի՞նչպես կլինի, տերտեր, ի՞նչ ճար կա մեզ, մենք դործի տեր մարդիկ ենք, ժամանակ չունինք սպասելու»:

— Գլուխս կտրեցե՛ք, ձեզ պարզե և, բայց յես ձեր խնդիրը կատարել չեմ կարող, վճռական կերպով պատասխանեց քահանան:

«Ուրեմն ի՞նչ ճար կա, կամ յե՞րբ կարելի յե որհնել»:

— Յերկու շաբաթից հետո միայն կարելի յե այդ բանդ: Անցյալ տարի ևս նույնպես Գրիգոր Լուսավորչի տոնին պատահեցավ հարսնախոսութուն: Յես վոչ մի կերպով չեյի կարող հանձն առնուլ նշանը որհնել, յեթե հարսնքատերը չեր ընծայել յեկեղեցուն քսան մանեթ:

Նոքա սկսան միմյանց յերեսի նայել, յերբ յսեցին քահանայի խոսքերը: Պետրոս ազեն իմացավ, վոր յեկեղեցին քահանայի ծոցն է: Յեկեղեցուն արծաթ տալ—կնշանակե քահանայի

ծոցը լցնել: Նա չչնջեց յուր հյուրի ախանջը, թե քահանայի բերանը պիտո յե փակել:

«Ինչո՞վ փակենք, խնամի, ցած ձայնով հարցրեց հյուրը»:

— Մի քանի մանեթ պիտո յե տալ, ապա թե վոչ, դա մեր բոլոր ձեռնարկությունը կխափանե:

«Ահա տուչ հասանք, այնտեղ յուրյան սևացնենք ինչքան կամենում է: Ո՞հ... ո՞հ... ո՞հ... աստված ազատե ժամանակիս քահանաներից: Տնաքանդները շար հրեշտակներ լինին, կարծես կտաս, շատ բարի, չես տալ, հոգիդ կհանեն: Ծափ չկա, պիտո յե լուռ մնալ»:

Ահա ամենքն ևս մտանելով Ծոնորենց Պետրոսի տունը, կարգով նստեցին:

— Արա՛ղ բերե՛ք, Մարտիրոս, Գրիգոր, ձայն տվեցին ամեն կողմից: Իսկույն յերեւեցան արաղի շիշերը:

«Հրամայեցեք բաժակը, տեր հայր»:

— Եստ շնորհակալ եմ, շնորհավոր հարսանիք լինի, աստված նորանշաններին միասին ծերացնե:

«Շնորհակալ ենք, տերտեր ջան, ասելով, մի մի բաժակ արաղ խմեցին»:

Հյուրերից մինը քահանայի աջը համբուրելով տասն և հինգ մանեթը դրեց ձեռքի մեջ:

— Բավականացեք առաջիմ այդքանով, ասաց հյուրը քահանային:

«Վոչ, ամենևին չեմ կարող, դուք իմանում եք, վոր հոգիս անդամ չեմ խնայելու ձեզ, բայց այդքանովդ յես չեմ կարող...»:

— Տեր հայր, ի սեր աստուծո բավանհանացեք, ըստ վորում առանց պատրաստության ենք յեկել: Հարսանիքի ժամանակը ավելի կտանք:

«Սիրելի, խնդրեմ ժլատություն չառնել, ըստ վորում այդ վո'չ թե իմ համար է, այլ...»:

— Այդ մեզ քաջ հայտնի յե, պատասխանեց հյուրը, բայց խնդրում ենք միաբերան բավականանալ այդքանով:

«Վա՞յ... վա՞յ... վա՞յ, մի՛ ասեք այդպէս, ասդա թե վոչ, Անտոն ճգնաւորը գերեզմանումը կշարժվի»:

Միով բանիվ տեր-Սարգիսը չհանգստացավ, մինչև չառավ ամբողջ քսան մանեթը: Նա մնաս բարև ասելով դուրս յեկավ, շուրջաւոր հանելու վրայից և այլ պատրաստութիւն տեսանելու:

— Աստված պատժե քեզ, դու անիրավ քահանա: Տեսնու՞մ եք ի՞նչ չարահոգին ե: Աստված վո՞րտեղից պատահեցրեց մեզ գորան: Տա՛ տա՛, տա՛, աստված ազատե այժմյան քահանաների ձեռքից, թե չե, դայլի պես հում-հում կուտեն: Ասես մի խղճմտանքի նշույլ լինի դոցա մեջ. քավ լիցի: Յես կարծում եյի, թե աշխարհիս վերա վատ քահանա միայն մեր տեր-Բարսեղն է, բայց նորանից վատթարն ևս յեղել է: Թե դոցա դատաստանը ինձ տային, բոլորին միմյանցից կկապելի և ծովի տակ կխեղդեյի. բայց ի՞նչ անեմ, դոքա յուրյանց թղթով ու թանաքով մեզ կապիկի պես խողացնում են: Ա՛խ, տեր-Սարգիս, թե մեր անտառումը ճանկս կընկնես, հեռու ամեն վարդապետից ու պոպոզից, մարմնիդ մեծ կտորը ախանջդ կթողնեմ. բայց ախոսս վոր.....

«Բավական ե, բավական ե, խնամի, ձայն տվեց Մանորենց Պետրոսը— այժմյան քահանաների հետ խոսել չե կարելի: Յեթե փոքր ինչ ընդգեմ կացար, հինգ փութ անե՞ք կածեն գլխիդ:

Տեր-Սարգիսը Միտուլին ուղարկեց շուրջաւոր բերելու և քնքը գանաղան պատվերը տվեց կնոջը:

— Այսոր կերակուր մի՛ պատրաստիր, ասում էր նա. յես ասա՛ գնում եմ նշան որհնելու, մեծ վորդիս ևս իբրև տիրացու իմ հետ կգա. մեք այնտեղ կճաշենք: Մյուս վորդիքս նույնպես տանը չեն, գնացել են վորս սպանելու: Դիցու՞ք, նոքա վորսի մտով կկերակրվին, կմնաս դու և աղջիկդ: Դու իբրև քահանայի կին, իրավունք ունիս նշանելու ժամանակ ներկա գտանովի և այնտեղ ճաշել, բայց վորովհետև աղջիկդ տանը կմնա, յես կասեմ Միտուլին, վոր Պետրոսի տանից ճաշ բերե ձեզ յերկուսիդ համար:

Այս կերպ անորինելուց հետո, կրկին գնաց Մանորենց տունը:

Մանորենց Պետրոսի աղջիկը նշանելուց մի քանի ամիս անցավ, դեռևս հարսանիք չկա: Տեր-Սարգիս համբերութիւնը հատել էր: Նորան ընդեն ժամ էր թվում, ժամը—որ և որը—ամիս: Միտուլը նույնպես անհամբերութեամբ սպասում էր հարսանիքի որին: Թե ցերեկով, թե գիշերով մտանում էր Մանորենց տուն, նստում էր, ըթխտտ էր առաջարկում, ինքն ևս գործածում, հարց ու փորձ էր առնում, ալյուրի քանակութիւնը, գինու կարասների թիւը, հարսանիքի համար մորթվելու կովերի և յեղերի ճարպութիւնը իմանալով, ճշտիվ հասցնում էր տեր-Սարգիսի ախանջը:

Բոլոր գյուղացիք մի քանի որ սակավացրել էյին յուրյանց ուտելիքը, այնլի ընդարձակ տեղ պատրաստելու յուրյանց անհագ փորերի մեջ: Իսկ հարսանիքից հառաջ ամբողջ յերկու որ կարգով ծոմ էյին պահում: Վերջապես մի գիշեր, գյուղի ծայրում փողի (գուռնայի) և աղմկի ձայն բարձրացավ: Չգաստ գյուղացիք մի-մի շորով ծածկած յուրյանց մերկ անդամքը, դուրս թափելով գիշերային տեղաշորից, մազերը ցրված ու խճուճված, աչքերը բաց ու խփիկ առնելով հառաջ վագեցին դեպի աղմուկը: Մի քանիսը շտապելուց չկարացին ծածկելու շոր դառնել, այլ վերմակներում փաթթված, բորիկ վտտներով դուրս թափվեցան: Գիշերային ցուրտը բավական սաստիկ լինելով նեղացնում էր այս մեր հառաջագնաց հյուրընկալներին: Բայց այս սրտադող ընդայնիս ո՞ւր էր արդո՞ք մեր արժանապատիվ քահանան, մեր սիրելի տեր-Սարգիսը: Նա յուր մահճակալի վերա խորասուզված խոր քնի մեջ փաթառվում էր յերեկյան խամ գինու ներդո՞՞թութենից. նա պատվիրել էր կնոջը դարթեցնել, յեթե մի բան պատահեր, ըստ վորում նա կասկածում էր, չլինի թե հարսանիքը գիշերով մտանն գյուղը: Բայց կնոջ յերկարատև որորելուց հանկարծ զարթեց. շարժելով տեղի մեջ նստած սկսավ աչքերը տրորել և գանաղան ցնորական բաներ խոսել, ինչպես առհասարակ առնում են վոմանք անձինք, քնից նոր զարթնելով:

Ճանապարհը դեպի Մանորենց տունը անցնում էր տեր-Սարգիսի դռան իսկ առաջովը: Փողերի, նորեկների ու գյուղա-

ցոց աղմկի ձայները ավելի մոտենում էին և սաստկանում : Քահանան ուղբին դարով և ժամանակ չկորցնելով յուր պատուոված փարաջան ուսերի վերա ձգեց, գիշերային հոգա-
 փախներով, սպիտակ վարտիքով, շապիկով և նույնպես խճուճ-
 ված մազերով դուրս յեկավ ճանապարհի մոտ : Նա սաստիկ
 շտապելուց յուր փարաջան վեր ի վայր եր ծածկել և ըստ կո-
 րում աստառը սպիտակ եր, քահանան, կարծես, մի պատանած
 դեակ լիներ : Քամին փչելով փարաջու փեշերը տարուբերում
 էր : Հյուրերը չիմանալով քահանայի ներկա դտանվիլը, միան-
 դամայն առանց բարև տալու էին անցնում : Մինչև անգամ մի
 ձիավոր մոտից անցանելու ժամանակ կարծելով թե Չաղաց-
 պանն է կանգնածը, ծիծաղելով սուսց յուր ընկերին : «Տո՛,
 կաչատու՛ր, տե՛ս տե՛ս, Չաղացպանն ևս յեկել է մեզ նա-
 յելու : Տե՛ս ի՛նչպես է թաթախված ալյուրի մեջ, մորուքի վե-
 րա կարծես մի չափ ալյուր լինի ցանած, տո հիմա՛ր, քեզ ինչ
 վայել տեսարան է այստեղ : Քո հարսնքատունը քո Չաղացն է,
 նորահարսը— քո յերկարապոչ կատուն, փողի ձայնը— յերկանա-
 քարի շխշխալը, իսկ պարեկողներդ— Չաղացիդ բաղմաթիվ ճար-
 պիկ մկները» :

Տեր-Սարգիսը թեպետ լսեց այս խոսակցությունը, բայց
 լուռ մնալով մտադիր յեղավ առաջնորդ լսողադրամը սովո-
 րականից շատ առնելով վրեժը հանել նոցանից : Հյուրերը իջն-
 վանեցին Ծոնորենց տանը : Մերկանդամ գյուղացիք ցրտից
 դողալով կրկին մտան տուն : Քահանան ուրախութենից թռչկո-
 տելով մտավ վերմակի տակ : Արշալույսը դեռ չբացված, Ծի-
 տուլը յեկավ արձանի պես կանգնեց տեր-Սարգսի մահճակալի
 առաջն : Նա տեսավ, քահանան դեռ քնած է, մարմինը մինչև
 վիզը ծածկած վերմակով, յերեսը բաց և դեպի յերկինքը : Ծիտու-
 րը առ ժամանակ մնացել եր կանգնած, բայց հանկարծ բե-
 րանը թզաչափ բանալով և լիակատար հորանջելով մի
 այնպիսի անսովոր ձայն արձակեց, վոր քահանան մյուս կողքի
 վերա շուրջ յեկավ : Տեր-Սարգիսը առհասարակ սիրում էր
 լուսաբացի քաղցր քունը, և յեթե վողինչ արգելք չլիներ, նա
 պատրաստ էր մնալ անկողնում : Ծիտուլը այժմ ևս չհամար-
 ձակվեցավ զարթեցնել, բայց դժբախտաբար մի այնպես սաստիկ
 փոշոտաց, վոր քթի մութ տեղերից և բերանի անկյուններից դուրս

յեկած հեղուկ նյութերը ցայտելով քահանայի մորուքը և յե-
 րեսը միանգամայն այտկանեցին : Ծիտուլը սրտախոտաբ յեղած,
 պճեղները ծայրերի վերա մյուս կողմով հեռացավ, կորավ նո-
 րա յերեսից : Տեր-Սարգիսը զարթեց և յերկու ձեռը յերեսին
 քսելով սուսց «փառք քեզ, աստված, փառք քո վողորմությա-
 նը, վոր դու քո անհատ բարությամբդ ցանում ես յերեսիս վե-
 րա առաջնորդան ցող, ծանուցանելով, վոր լուսանում է արգեն,
 և ժամանակ է գալ, քեզ աղոթք մատուցանել քո սուրբ տա-
 ճարի մեջ : Տեր-Սարգիսը յերեսին խաչ հանելով, վեր կացավ
 մահճից, սկսավ լվացվիլ և շորերը հագնել : Ծիտուլը այս մի-
 ջոցումը շտապեց յեկեղեցու տախտակը զարկել, վոր քահանան
 չկասկածե, թե նա յուր մոտ է յեղել և յերեսի վերա շաղ է
 ցանել : Քահանան յերբ լսեց տախտակի ձայնը, սուսց ինքն յուր-
 յան «Հիմարանաս դու, Ծիտո՛ւլ, վոր բոլորովին ցնորվել ես :
 Մի ասող լինի, թե քեզ ով սուսց այսոր տախտակ զարկել և
 ժողովուրդը յեկեղեցի հրավիրել : Ո՞վ է տեսել յերեքշարթի որը
 ժամ ստել : Շարաթի մեջ յերեք որ «հինգշարթի, շարաթ և կի-
 րակի» ժամ ենք ասում, բախկան է : Այն հիմարին քանի՛ ան-
 դամ ստել եմ, վոր նա յուր գլխից բաներ չհնարե. քահանան
 յե՞ս եմ արդյոք, թե նա. յեթե նա յե, ուրեմն թող փիլոնը
 ծածկե և ժամ ստե, յեթե յես եմ, ի՛նչպես չե ուրեմն ինձ
 հնարանդ :

Տեր-Սարգիսը հանկարծ մտաբերեց, վոր այն որ հյուրերը
 կան, հարսանիք պիտո յե լինի, ճակատին խիեց և սուսց. ախ,
 հիմարանա Ծիտուլը, վոր ինձ ևս հիմարեցրեց : Յես կարծեցի
 թե վոչինչ բան չկա, բայց այսոր հյուրեր և հարսանիք ունինք :
 Վա՞յ... վա՞յ... վա՞յ... ի՛նչպես մոռացած էյի. այն տղան
 և հիմար Ծիտուլը յեթե չլինի, ճշմարիտ, յես շատ անգամ
 կսխալվիմ : Յես ի՛նչպես շուտով մոռացա հարսանիքը, այդպիսի
 որհնյալ աղբյուրը արծաթի, յերբ չորս ժամ հառաջ գիշերա
 ներկա էյի գտնվում : Ուրեմն շտապեմ, գնամ յեկեղեցի, կա-
 րելի յե հյուրերը դան ժամ :

Արեգակի ծագելու հետ տարածվեցալ փողերի ձայնը բոլոր գյուղի մեջ: Փողահարները սրահի տանիքի վերա կանգնած, յերեսները այս կողմ, այն կողմ թեքելով փչում էին: Ծոնորենց Պետրոսի տունը լիք էր մի ուրախական աղմկով: Շատ մանուկ տղամարդեր ուրախութենից ծառայում էին նորա տանը: Մինը նոցանից սիայա էր կոտրատում, մյուսը ջուր բերում մոտակա աղբյուրից, յերրորդը ամաններ լվանում, կամ պղինձների տակին կրակ վառում և այլն, և այլն: Իսկ մանուկ հարսները և աղջկուհիքը յուրյանց ասն ծածկոցների վերա արձանացած, ուղղած ունեյին յուրյանց աչքերը գեպի Ծոնորենց տունը: Միով բանիվ, Պետրոսի աղջկա հարսանիքն էր:

Ժամասացութունը արդեն սկսված էր, բայց ժողովրդի հոտ անգամ չէր գալիս յեկեղեցու մեջ: Բոլոր գյուղացիք պարապած էին մի հարսանիքով: Յեկեղեցին միանգամայն մոռացել էին: Ծիսուլը յեկեղեցու մեջ այս կողմ, այն կողմ թռչելով և յուր պաշտոնը կատարելով քթի տակ փնթփնթացնում էր: Այսոր ամենքն ևս խոռովել են յեկեղեցուց: Ասես, մի ճանճ գոնյա բղղացնում է՞, քով լիցի: Բայց վոր մի մատաղ կամ մեռեյաճաչ լինի, ո՞հ ո՞հ ո՞հ, աստված ազատե, յեկեղեցումը ասեղ վայր ձգելու տեղ չէ լինում: Իսկ այժմ, վոր այդ աղբյուրը Ծոնորենց տանն է, յեկեղեցին դատարկ է մնացել: Բայց մեր տեր-Սարգիսը ինչ հմուտ մարդ է յեղել: Յուր բանը, ինչպես ասում են, յեփած ու հալած է ճանաչում: Նայի՛ր, նայի՛ր, տե՛ս ինչպես է ժամ ասում, տասն բոպե չկա, վոր ժամը սկսավ և ահա իսկույն կվերջացնե. ի՞նչ անեմ, հոգևոր մարդ է, հեռը համարձակ խոսել չէ կարելի: Յեվ ժողովուրդը չէ լինում, ժամասացության մեջ շատ բան ավելորդ համարելով թողնում է: Չոր որինակ այսոր չտեսա, վոր մի շարական էր յերգել կամ ավետարանի յերեսին էր նայել: Մեր յեկեղեցումը միայն յերեք կանթեղ կան: Առաջինի վառելու ժամանակ, նա ժամը որհնում է, և մինչև իմ յերրորդի վառելը նա վերջին հայր մերը ասում է: Յեթե ասեմ, տերտեր ջան, ինչո՞ւ բոլորը չես ասում. յուր

ասվաբության պես, իսկույն մի սրբի կամ ճգնավորի կամ մի վարդապետի պոչ կրոնե, կասե, այսինչ ճգնավորը այսպես է հրամայել: Դե՞հ, ինչ կարող ես առնել, նորա չափ գիտություն չունիս, վոր պատասխանես: Փառք ասուածո, աշխարհուածո ևս աշխարհ ճգնավորներ կան, վոր աղաւիլից շատ են, թութակից աւալել: Հին ժամանակներումը որհնվածները մի բան չունեյին: Ով կղնար մի անտառ, մի զողավոր քարի մեջ ծուկը կղնեք, իսկույն ճգնավոր կղառնար: Ասում ևս են իրր թե նոքա հաց չեն ուտում, այլ ասածուց որը մի նշխարք էին աստնում: Բայց իմ հոր պատմածից միտս է, վոր վաղ ժամանակ, մի մարդ կամենում էր ճգնվել: Նա զողանում է յերեսուն հաց և կորչում է ատանց վորմինի իմաց առնելու: Նա թե աղութում է, թե չէ, ինձ հայտնի չէ, միայն հացը յերբ հատնում է, անատից գիշերով դուրս է կալի մոտակա արտի ծայրը և սկսում է հասկը քաղել և վոտերով արտը ջարդել: Արտատերը մի քանի անգամ նկատելով կարծում է թե արջն է պատճառը: Հրացանը ուսին, մի գիշեր թաք է կենում արտի մեջ արջը սպանելու: Կես գիշերին տեսանում է, վոր մի մարդ յեկավ և սկսավ հասկերը քաղել և արտը ջարդել: Արտատերը յերեսին խաչ հանելով և զարմանալով մոտենում է նորան և ասում է, ո՞վ ես դու: Ճգնավորը նստած մնալով, չէ պատասխանում, բայց արտատերը շարունակում է.

- «Ո՞վ ես դու»:
- Լաի՛ր անպիտան, պատասխանում է ճգնավորը:
- «Ո՞վ ես դու, կանգնի՛ր վոաքիդ վերա»:
- Լաւս կաց, աստանա:
- «Մարդ ես, թե գաղան, ասա՛, տեսանեմ ո՞վ ես, մոտենալով հարցնում է արտատերը»:
- Լեզուդ..... կպապանձվի.....:
- «Ասա՛ տեսանեմ, ի՞նչ մարդ ես»:
- Լուս, կպատժվիս, մատը ցույց տալով սպանում է

ճգնավորը: Այս միջոցին վոր հրացանի ծայրով մի քանի հարված է ասանում ճգնավորը, վա՞յ վա՞յ կանչելով, կամենում է փախչել, բայց արտատերը կոները կապելով, բերում է դուղը, յուր կնոջ մոտ, իրբև մի փախտտական հյուր: Ահա ինչպես ճգնավորներ էյին լինում հառաջ: Յեթե յես լինեյի այն ժամա-

նակ, յես եւ ճգնաւոր կղանայի: Վա՞հ, միևնույն չե՞ անտա-
ռումը աղոթել թե յեկեղեցումը»:

Այսպես եր ահա մտածում ժամկոչ Ծիտուլը: Քահանան
ժամասացութենից հետո յեկալ Ծոնորենց տունը նորահարսի
հանդերձը որհնելու: Կետրի ժամանակ բոլոր պատրաստու-
թյունը հողալով, նորահարսին տարան պատկերու: Փողահար-
ները ածելով դանդաղ դնում էյին ամենից առաջ, իսկ նոցա
հետեից հարսը և փեսան շրջապատված ծնողներով, յեղբայր-
ներով, ազգականներով և բոլոր յուրյանց բարեկամներով: Ա-
մենից վերջը— գյուղացիքը: Մտան ահա յեկեղեցու մեջ:

Այստեղ ավելորդ համարեցի նկարագրել պսակի խորհրդի
կատարումը, վոր մեր ընթերցողների յուրաքանչյուրին հայտնի
յէ: Հանդեսը վերջացալ: Հարսն ու փեսան պսակներով զար-
դարված դուրս յեկան յեկեղեցուց բոլոր ժողովրդի հետ: Փո-
ղահարները սկսեցին ածել: Քահանան Ծոնորենց Պետրոսի Հեռ
խոսելով, ամենից հառաջ գնում էյին դեպի հարսնբառուներ:
Սոցա քամակից փողահարները, հետո նորապսակները յուրյանց
ընկերներով և հետո ժողովուրդը: Այս կողմի հայերը յուրյանց
սովորութեան պես, յեկեղեցուց դեպի տուն դալու ժամանակը
հառաջ բերեցին մի-մի թեթև նախաճաշիկ, այն է ձվադեղ, իս-
դող, խնձոր, յուղից շինած զանազան ուտելիք, գինի, արագ և
այլն և այլն. և առաջարկեցին նորափեսային և նորան շրջապա-
տող մանուկներին: Յանկացողները սոցանից կարողանում էյին
մի-մի կտոր դեպի բերանը ուղարկել: Ծիտուլը այս կողմ և այն
կողմ թռչելով և յերբեմն հարսի փեշերը կոխտտելով ձեռքը
հասցնում եր բերած նախաճաշիկին, թեպետ կամենում էյին
նորանից հեռացնել. և հինգ մատի ոգնութեամբ, յուղը կաթն-
նելով դեպի մորուքը, լցնում եր բերանը:

«Ատամներդ վեր թափին, փորդ պատառվի, Ծիտուլ, վոր
չկարողանաս ուտել, լսվում եր ամեն կողմից»:

— Ինչ կամենաք, ասացեք, յես իմ փորս լալ կլցնեմ, թեև
դուք մինչև յերեկո բղավեք: Տեր-Մարգարիտի փոխանակ ևս պիտո
յէ ուտեմ:

Հասան տուն: Փողահարները հանդարտեցին: Ամենքը սկսե-
ցին հանգստանալ: Արեգակը մայր մտալ: Մութը տարածվե-
ցալ: Կերակուրները պատրաստի գրած էյին կրակի մոտ: Տան

մեջ սփռած էյին ոթոցներ հյուրերի նստելու համար: Փողահար-
ները սրահի մեջ սկսեցին հրավիրական փող փչել: Մի քանի
յուպեճից հետո բոլոր տունը գյուղացիներով լցվեցալ: Ամենքը
ևս նստեցին ընթրիք վայելելու: Այստեղ ևս ավելորդ համարեցի
նկարագրել հրավիրյալների ուտելու հանդամանքները, վորոնք
արժանի յեն ուշադրութեան: Միայն այսքան կարող եմ ասել,
վար մինչև ութ տուն գյուղացի մարդ մի քանի կարգ նստած
էյին: Յարաքանչյուր կարգ ուներ յուրյան համար գինու մատա-
կարար: Ավելի ընտիր կարգի ճակատումը նստած եր տեր-
Մարգարիտը, ալ կողմում նորափեսայի հայրը և ձախ կողմում
Ծոնորենց Պետրոսը: Նորափեսան շրջակա յերիտասարդներով
նստած եր առանձին շինած բարձր տեղ: Յեվ ահա քահանան
յուր կարգի մատակարարից առնելով բաժակը բացեց բերանը:
«Ատմամբ հարսանիքը շնորհավոր առնե, հարսն ու փեսան միա-
տին ծչին, կանաչեն, ծաղկին, պտուղ տան, միասին ծերանան,
քախտաւոր լինին, բարի ժառանգ լինին: Աստված քրիստոնէյից
հաստատութիւն տա, հոգևորականաց բազմութիւն, թագա-
վորաց առողջութիւն և ժողովրդին հարստութիւն, ամեն»:
Այս կացեք, ձայներդ կտրեցեք, ախանջ դրեք, դեռ մի
խմեք, տերտերը որհնում է, ամեն կողմից ձայներ էյին արձակ-
վում: Քահանան վերջացուց թե չէ, իսկույն բոլորեցանքը
միմյանց առաջ կտրելով աղաղակում էյին «ամեն, տեր աստ-
ված, ամեն. տերտերը ինչ վոր ասաց, աստված լսող և կատա-
րող լինի: Հրավիրյալները այնքան կերան, վոր շատերի դո-
տին յերկու, յերեք կտոր յեղալ: Փորերի մեջ մի դատարկ տեղ
չմնաց: Գինի գործածելուն թիւլ և համար չկար:

Ընթրիքը վերջացալ: Մարգարիտը ցրվեցան միմյանց վերա
ընկերելով, միմյանց բոթելով, միմյանց գգակ կրակը ձգելով,
միմյանց շորերը պատտտելով: Տեր-Մարգարիտը վոտքի վերա հա-
ղիվ եր կանգնում: Հանկարծ կերակուրի մեջ թրջած մի վոչխա-
քի մորթի, շեմ իմանում վոր կողմից, շեշտակի նետվեցալ
քահանայի յերեսին, այնպես վոր սա քամակի վերա գետնա-
տարած յեղալ: Նորա յերեսը, մորուքը, գլխի մազերը և բոլոր
չարքերը յուղում և ջրում տապակված էյին, ըստ վորում այն
մորթիին լալ եր թրջած:

Մի քանիսը, տեսարանը ավելի գեղեցկացնելու համար,

չափերով գինին շուռ ավեցին տերտերի գլխին: Հանկարծ Ծիսուլը, վորի խելքը դեռ գլխի մեջ էր, աղաղակելով մտեցավ «վա՞յ ինձ, տերտեր ջան, այդ ի՞նչ է պտտահել քեզ, այդ ի՞նչ դրուժյան մեջ ես. քո սուրբ ավիդ մեռնիմ, քո ոծած ճակատիդ մատաղ գնամ: Ա՞յ անիրավներ, մի այլ մարդ չգտաք, հետը խողալու: Վա՞յ ինձ... վա՞յ... վա՞յ... տերտերակինը գլխովիդ պտույտ դա: Քո սուրբ ոծումդ խոով հենա նոցա մերա, վորոնք քեզ այդպես արեցին. քո շուրջառը և մաշտոցը նոցա աչքը հանեն: Կանգնի՛ր, տերտեր ջան, վեր կաց» ասաց Ծիսուլը և մի մարդու ողնուժյամբ վեր քարշեց արբեցած մարմինը և քարշ ածելով տարավ նորա տուն և առանց հանդերձը հանելու ձգեց մահճի մեջ:

Այսպես վերջացավ ընթրիքը:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՂՈՒԼԸ

1864



Արտատպագրութեամբ 1872 թի «Մեղու Հայաստանի»-ից

I

Իմ կարծիքով, չէ կարելի ստեղծել վոչ մի անձն չիմանալով
Հաստատապես մարդկային բնությունները, վորպես չէ կարելի
խոսել մի լեզվով, վոր չզխտես: Գրականական ասպարիզի մեջ,
ինձ գեռես պատանի համարելով, վոր տեսնելի իմ մեջ ստեղ-
ծող— հեղինակ, յես սահմանափակվում եմ հասարակ պատմու-
թյամբ, լսած ուրիշի բերանից: Վասնորո կարգացողը թող ա-
զատ հավատ ընծայե այս անցքին, վորի ներդրծող անձինք,
կամ նոցա նմանները գուցե մինչև որս կենդանի յեն և յես այլ
աղբյուրներից ևս իմացա այս պատմության ճշտությունը:

Գործը ահա այսպես եր: Մի քանի պատանիներս յերբեմ-
նապես գնում եյինք զբոսնելու Թիֆլիզու մեծ գերեզմանատան
մեջ, Խոջի վանքի շրջակայքումը: Այդ վանքը, վոր հայտնի յի
Խոջի անունով (չգիտեմ ինչ պատճառով և չէ ևս հարկավոր
մեզ իմանալ այտեղ) կառուցած է մեծ գերեզմանատան մեջ,
բարձր պարիսպներով և մեծ, յերկաթյա դարպասով: Գավթի
մեջ կան գերեզմաններ և մի ծառատունկ պարտեզ յուր փոքրիկ
ավազանով: Բացի այն պարտեզի առաջև, պարսպապատին կպած
ձգվում եյին մի հարկանի սենյակներ առանձին դռներով: Այդ
սենյակների մեջ, յերբեմնապես, մի քանի որով կամ շարաթով
բնակվում եյին դամիսթեմաներ:

Վանքը պարսպի ներսը ներկայացնում է բավականին փոք-
րիկ, բայց զարդարուն յեկեղեցի: Առավոտյան և յերեկոյան
ժամասացութենից հետո ցրվում են և քահանան և տիրացուքը
և ժողովուրդը: Միմիայն ժամկոչ Մոմալառյանցը, արթուն
հսկայի պես, յեկեղեցու և դարպասի բանալիները ձեռին, որ և
դիչեր պահպանում է այդ փոքրիկ կալվածքը: Ուրեմն Մոմա-

վառյանցը, իբրև մրակ անհատ գիշերային ժամանակը, իմանում եր նաև ամենաչնչին անցքը, վոր պատահում եր գալթի սենյակների մեջ:

Ի՞նչ անցք կարող ե պատահել, բացի շատ և շատ սովորական բաներից— կարգանք և կիմանանք:

— Պատմիր մեզ վորևիցե մի առակ, պատվելի ժամկոչ, սասցինք վերջապես պ. Մոմալառյանցին:

Ժամկոչը ծուխ արձակեց, մորուքը հալասարեց. նայեց մեզ վերա և մտածեց:

Նա ուներ միջին հասակ, մոտ 60 տարեկան, ձախ աչքը կույր և աջ վորտե կաղ, ինքն ել կուզիկ:

— Յես առակ չգիտեմ, գնացեք, ձեր գործին յեղեք:

— Վաղը մենք գործ չունինք: Ընդդիմարանցինք մենք:

Յեվ այսպես մենք խնդրում էյինք, վոր ժամկոչ Մոմալառյանցը պատմեր ինչևիցե մի առակ: Բայց նա յուր խոսքն եր կրկնում «յես առակ չգիտեմ»: Մենք ևս մեր ստիպանքն էյինք առաջ տանում «պատմիր մեզ մի առակ»:

Մենք դեռ պատանի, աշխույժ, դվարճալի տղայք, տգրուկի նման կպանք Մոմալառյանցին: Վորքան նա հրաժարվում եր, այնքան մենք ստիպում էյինք:

— Ո՛հ, ինչ չար յերիտասարդներ եք, ինքնակամ, ձեր սասածի:

— Պատմիր, պատմիր—ալելի և ալելի կրկնեցինք մենք նորան շրջապատելով:

— Խեղքս գլխումս չե, չեմ կարող պատմել. հետաձուլությամբ պատասխանեց ժամկոչը չիբուխից ծուխ ծծելով:

Այս վրձը մեզ հայտնի յեր արդեն, վոր կնչանակե ժամկոչը գինի յե կամենում:

— Իսկույն, իսկույն պատրաստ կլինի, ձայն տվեցինք ամեն կողմից: Արդարև քառորդ ժամից հետո պատրաստ եր հաց, պանիր և գինի: Յերբ վոր ժամկոչի կատարը տաքացավ, ասեց մեզ:

— Յես թեպետ առակ չգիտեմ, բայց կպատմեմ ձեզ մի շատ հետաքրքիր անցք:

— Պատմիր, պատմիր, կրկնեցինք ամեն կողմից:

— Անցքը պատահած ե Խոջի վանքի մեջ...

— Շարունակիր, կրկնեցինք մենք: Ժամկոչը բաժակը ծծելով սկսեց շարունակել:

— Այո՛, անցքը պատահած ե Խոջի վանքի մեջ...

— Հետո՞, հետո՞:

— Հետո այն ե, վոր դուք դեռ ջահել եք, ձեզ կարելի չե պատմել:

— Վո՛չ, վո՛չ, պատմիր, մենք մեծ ենք, ստիպեցինք ժամկոչին: Մեր հետաքրքրությունը ալելի վառվեց: Ժամկոչը արդեն ստիպված հակամտություն ցույց տվեց պատմելու:

— Դու քանի՞ տարեկան ես, հարցրեց նա:

— Տասնուհինգ:

— Դո՞ւ:

— Տասնուվեց:

— Դո՞ւ:

— Տասնուհինգ և կես:

— Դո՞ւ:

— Տասն ու հինգ և քառորդ:

— Ուրեմն տասնուհինգից պակաս չկա՞ ձեր մեջ:

— Վո՛չ վորք, դրականապես պատասխանեցինք մենք:

— Վասնորո կարելի յե պատմել: Միայն չգրեք և առայժմ ուրիշին ցույց չտար:

— Վո՛չ, վո՛չ, կրկնեցինք ամեն կողմից:

— Նաև վոչվորք չպատմեք, այս ձեր մեջ խորհուրդ մնա՛, գոնե տասն տարի, լա՞վ:

— Խորհուրդ մնա՛, անպատճառ խորհուրդ մնա՛. կրկնեցինք մենք:

Ժամկոչը մի բաժակ ևս կոնծեց, մորուքը շիեց և սկսեց այսպես:

II

«184... Թվականի հունիս ամիսն եր:

Այրող արեգակից հետո Թիֆլիզը դովանում եր յերեկոյան հովով: Այս վանքի դարպասը կողպած, գավթումը յես էյի և մի հատ կին: Ալելի վոչ մի շնչառու մարդ. թե ով եր այդ կինը հետո կիմանաք: Մի կամ յերկու ուր եր, վոր վանքի մեջ այդ կինը դամիսթեա յեր:

Ղամիսթեա հասկանում ե՞ք ինչ կնշանակե: Այդ վրացոց խոսք ե: Ղամե-յերեկո. թեա-արշալույս»:

«Հին ժամանակից արդեն, թիֆլիզցիք սովորություն ունին, ամբողջ գերբաստանով կամ յուրաքանչյուր անհատ առանձին, բնակվել գանազան յեկեղեցիների գավթի տների մեջ, մի շարաթով, յերկու կամ ավելի շատ: Այդ ժամանակը նոքա անցնում էյին հսկողության և աղոթքի մեջ յերեկոյից մինչև արշալույս, սորանից ահա և ղամիսթեա: Այժմ այդ հսկողությունը չկա, դա դարձել է այժմ հացկերություն, արբեցություն, ուրախություն, զվարճություն և այլն և այլն»:

«Յես կարծեմ շատ անգամ լսած եք, և լսում եք զուռնի, նաղարայի, յերգի և ուրախության ձայն յեկեղեցիների, մանավանդ Բեդդեհեմի, սուրբ Կարապետի գավթումը: Դոքա յեն մեր ուխտավորները— ղամիս-թեա:

«Վերոհիշյալ կիներ նույնպես ղամիսթեա յեր այս Խոջի վանքումը: Նորա մոտ զուռնա և յերգեցողություն չկար. բայց կար, միայն այլ կերպի զվարճության առարկա:

Յերեկոյան ժամասացությունը ավարտվեց. բոլորեքյանք ցրվեցան. մնացինք յես և այն ուխտավոր կիներ: Ինքնայեղ զրեց, չայ պատրաստեց և, շնորհակալ եմ, ինձ ևս հրավիրեց: Չայից հետո դուրս յեկավ զբոսնուլ գավթի պարտեզի մեջ:

Բավական լավ հագնված եր նա: Միջին հասակով, մոտ 30 տարեկան և դեմքով բավական գեղեցիկ կին: Այնքան գեղեցիկ, վոր շատերին կարող եր գրավել: Իբրև միայնակյա՞ց ինձ ձանձրալի թվեց և յես մոտեցա այն կնոջը և սկսեցի հետը խոսել: Մենք նստեցինք գեղեցիկ, քարապատ ավազանի ափումը: Ինչպես ասացի, արդեն յերեկո յեր: Կինը յերբեմնապես նայում եր յուր չորս կողմը, կարծես մեկին սպասելով:

— Ա՛խ, մեծ ախորժակով կուտեյի այժմ խնձոր, արտասանեց կինը: Յերանի սուրբ Գեվորգը ուղարկե, մեռնեմ նորա սուրբ գորության և խաչակնքեց յերեսը:

— Այս պարտեզի մեջ, աղջիկ-պարոն, խնձորենի չկա, ապա թե վոչ, յես ձեզ հյուրասիրել կարող եյի, ասացի յես:

— Վոչ, պատվելի ժամկոչ, սուրբ Գեվորգը կատարում է միշտ իմ սրտիս ցանկությունը: Դու իմանո՞ւմ ես, վոր յես նորա զուռն եմ:

— Վոչ, աղջիկ-պարոն, չեյի իմանում. իսկ այժմ ձեզանից լսեցի և այսուհետև իմանալու յեմ:

— Այո՛ յես սուրբ Գեվորգի դուլն եմ, և նորա հրամանովը յեկած եմ յես այստեղ ղամիսթեա: Յեվ նա միշտ իմ սրտիս ցանկությունը կատարում է:

Ղուլ կնշանակե աղախին ընտրված վորեկից սրբի կողմից այլապես— սրբի աղախին, վոր ուշաթափ լինելով և գետնի վերա թափալվելով (յեթե սրբին հաճելի յեր) խոսում է սրբի բերանով, յեթե սուրբը կամենար սպառնալիք կամ պատիժ և կամ մխիթարություն տալ սորան կամ նորան, և այլն և այլն: Այսպիսի կանայք շատ կան Թիֆլիզումը և նորա շրջակայքումը, վորոնցից մինը խարբեայությամբ, մյուսը յերեկ հիվանդությամբ, այդպիսի հանդեսներ են ներկայացնում ժողովրդի առաջ:

Այս միջոցին ցած թռավ մի խնձոր և լողաց ջրի մակերևութի վերա:

— Ահա՛, տեսնում ե՞ս, ավելացրեց կինը, տեսնո՞ւմ ես, սուրբ Գեվորգը ուղարկեց:

Յես միանգամայն զարմացած մնացի: Լճակի մոտ չկար վոչ մի խնձորենի: Այդ մի հրաշք եր: Կինը առավ խնձորը և կերավ:

— Չգում եմ, ո՛վ սուրբ Գեվորգ, յես, քո դուլը այստեղ եմ, յես ցանկանում եմ եզուց այս ժամին, բացադանչեց կինը:

III

Մյուս ուրը, յերեկոյան ընթրիք էյին վայելում կինը, նորա տղամարդը, մեծ վորդին և աղջիկը մոտ 15 տարեկան: Սոցա թվումը յես նկատեցի մի անձանոթ մարդ, վոր այդ միջոցներումը կատարում եր կարծեմ թաղապահի պաշտոն, յերիտասարդ տղա, տափարաքիթ և շարժմունքից յերևում եր, վոր նա շատ բավական եր յուր պաշտոնով: Մեծ հպարտությամբ նայում եր նա յուր փայլուն կոճակների և սրի վերա: Նա և կամենում եր, վոր այլք ևս զարմանան նորա շորերի վերա:

Այդ անձին յես ճանաչում էյի հետևյալ հանդամանքով: Մի մարդ չեր հատուցանում ինձ վճարելի 10 բուբլին: Յես

Հայտնեցի այդ նրան վոր առաջարկեց ինձ 2 բուրլի, իսկ յուր-
յան 8 բուրլի միայն: Յես չհամաձայնեցի և նա ինձ հարված-
ներով դուրս վրնդեց: Սորանով ահա ճանաչում եյի յես դո-
րան:

Ընթրիքը համարյա՛ վերջանում եր, հանկարծ սուրբ Գեվոր-
գի դուրը ընկավ: Սենյակի մեջտեղ անամոթարար տարածվեց
կինը, վտաններ միմյանց խփելով: Նա մերթ դուռում եր, մերթ
սգում եր և մերթ ծիծաղում: Յերկու ձեռով յերեսը ջարդում եր
և գլխի մազերը փետում:

Նորա տղամարդը և վորդին մտաը չորքած, լուռ, կնոջ
ձեռները բռնելով, աշխատում եյին արգելել ինքնահարու-
թյունը: Վորդորմելի աղջիկը ահով և դողով պատած, արտա-
սուրբ աչքերին, անկյունից նայում եր դեպի յուր անամոթ
մայրը վոր չորս տարու չափ, մինչև այդ ուրը չարչարում եր
այդ թշվառ գերդաստանը: Յեվ ինչ եր պատճառը, վոր կինը
այդպես եր վարվում: Մի՞թե սուրբ Գեվորգը գերդաստանի ա-
վերման պատճառ կարող եր լինել: Յես չեյի հավատում. ըստ
վորում, յես ինքս թեպես ուսյալ չեմ, բայց մեր սուրբ հարց
քրջանքը բոլորը համարյա կարդացել եմ: Յեվ վոչ մի տեղ չե
հիշած, վոր կանայքը իրավունք ունին սուրբ Գեվորգի անունով
ղամիսթեա դնալ, շարաթներով հրաժարվել յուրյանց գեր-
դաստանից, սուրբի վերա գլորվել և յուրյանց անամոթ դրու-
թյամբ չարչարել յուրյանց վորդորմելի տղեա տղամարդերին,
վորդկերանց և աղջկերանց:

Թե այսպես և թե այնպես յես տարուբերման մեջ եյի, դու-
ցե, ասում եյի, սուրբ Գեվորգից ե: Բայց յերբ ակնաատես յե-
ղա այն բոլոր անցքերին, վոր հետո պատմելու յեմ ձեզ, այ-
նուհետև կասկածանք չմնաց իմ մեջ, վոր այդ բոլորը խաբե-
բայություն և, լրբություն և մի անբարոյական կնոջ կողմից:

Հայտնի բան ե, դուք ուսյալ յերիտասարդներ եք, կարող
եք առավել առողջ դատել քան թե յես: Վասնորո, յերբ պատ-
մությունս վերջանա, բոլորը մտաբերեցեք և քննեցեք:

Յեվ այսպես, կինը այդ անպատկառ դրության մեջ սկսեց
խոսել իբրև անոգա և ցնորման մեջ: «Յեկալ... ահա...
սուրբ... Գեվորգը... սպիտակ... ճիւղ... վերա... սուրբ...
աստվածածին... Մարիամ ասա... բու բու բու...»:

Այս խոսքերից հետո փոքր լուց: Բացի տախարաքթից,
վոր առավել դրազված եր յուր զարդարուն հանդերձով, մյուս
չըջապատողները սգալի դեմքով յերեսը խաչակնքում եյին և քթի
տակ աղոթք կարդում:

— Յես, յես քաջվեցե՛ք— շարունակեց կինը—սուրբ Գեվոր-
գը չե-չե հրամայում, վոր դուք լինեք այստեղ այս գիշերեր, բա-
ցի... բացի... բացի: Սուրբ Գեվորգը հրամայում ե յերկու մա-
նեթանոց մոմ վառել այս բոպեյին այս յեկեղեցումը, նորա
խոյ պատկերի առաջ: Յեվ ապա ցրվել, ցրվել, այստեղ չմնալ,
հրաման չկա սրբից: Սուրբը հրամայում ե ինձ անհանդիստ
չառնել և յերեք ուրից հետո դալ ինձ տեսություն: Իսկ դու...
դու... Գարսեան, սուրբ Գեվորգը հրամայում ե սուրբ թողնել
այստեղ, դնալ... բերդի սուրբ Գեվորգի յեկեղեցին, յերեք ան-
գամ ծուներ դնել... դալ... սուրբ առնել և հեռանալ այստե-
ղից»:

Կինը սուրբ Գեվորգի բերանից խոսելով վերջացրեց յուր
հրամանները և կարծես մտավ խոր քնի մեջ: Շրջապատողները
չտապեցին կատարել սրբի տված հրամանները կնոջ բերանով:
Հայր և վորդի տրամությամբ մտան յեկեղեցի:

- Սարգիս, վորդի, ունի՛ս փող մոմի համար:
- Վո՛չ, հայր, այսոր ծախս չեմ արած խանութումս:
- Ոհ, վորդի, այսոր յերկու մանեթի միայն գործ եմ կա-
տարել: Ծեր մարդ եմ, աչքերս հրաժարվում են տեսնել, ամ-
բողջ ուրը գործ եմ դրել այդ չնչին գումարի վերա: Վաղը ալ-
յետք ե կերակուր առնել և ուղարկել: Այս փոքր գումարը կա-
մենում եյի այդ բաների վերա գործ դնել:

— Վոչինչ հայր. սուրբ Գեվորգի հրամանը քանց առնել կա-
րելի չե, ապա թե վոչ— մեռնեմ՝ նորա սուրբ դրությանը, մորս
առավել վատթար կչարչարե: Տո՛ւր այժմ այդ յերկու մանեթը,
իսկ վաղը աստված վորդորմած ե, յես կաշխատեմ:

Յերկու ուրբլիանոց մոմ գնեցին ինձանից, վառեցին սուրբ
Գեվորգի պատկերի առջև, կրկին մտան կնոջ մոտ, վոր դեռ թա-
վալած եր: Կամենում եյին նստեցնել, բայց նա նույնպես սուրբ
Գեվորգի բերանով պատասխանեց, վոր նոքա չանհանգստացնեն
նորան յուրյանց ներկայությամբ: Ճարակուր յեղած, պա-

տանի աղջկա հետ վերադարձան նորա դեպի տուն, ուր սպասում էին յերկու դեռահաս յերեսայրը նորանց միայնութեան, ահի և զարհուրանքի մեջ: Տախարակաքիթ թողապահը, սուրբ թողնելով, արդեն վաղուց էր անհետացել:

Դեռ հայրը, վորդին և աղջիկը դարպասին չհասած, կինը հանդարտ նստեց, կարծես վոչինչ չէր պատահած:

Մուտք էր. դարպասը կողպեցի և դնացի կնոջը մխիթարելու:

— Ի՞նչ կողպեցիր, պատվելի ժամկոչ, Գարսեանը իսկույն կզա, արասանեց կինը ժպտը բերանումը:

— Կրանամ, յերբ հարկավոր է:

Անցավ մի ժամ և ահա դարպասը ծեծեցին:

Ներս ընդունեցի պաճոյին, վոր ուներ ձեռին մի կապոց:

— Կողպի՛ր դարպասը և պառկիր քնելու, ասեց նա ինձ հրամայողական ձայնով:

— Վո՛չ պարոն, յես դեռ մնալու յեմ արթուն, պատասխանեցի յես:

— Ի՞նչ պատճառով:

— Վորովհետև ձեր այտեղից դնալուց հետո հարկավոր է կողպել դարպասը:

— Վոչ, յես դնալու չեմ...

— Հը՛մ, արեցի յես և լուռ կացա: Պաճոն մտալ սենյակը և դուռը կողպեց: Եհ, մենք մարդիկս թույլ արարած ենք: Հետաքրքրութեան վառվեց: Ականջս դրեցի դռան ճեղքին:

— Ահա՛, հոգյա՛կս, քեզ համար խնձոր եմ բերել, իսկ նորանից և, վոր յերեկ ձգեցի ավաղանի մեջ:

— Մի՞թե բերդի յեկեղեցին դնացիր, Գարսեան ջան, ախ, կուրանամ յես, քեզ նեղութեան տվեցի:

— Աչքով անգամ չեմ տեսած բերդի յեկեղեցին. յես դնացի խնձոր առնելու միայն:

— Գարսեան ջան, ժամկոչը դնա՞ց քնելու:

— Յես նորան հրամայեցի:

Ճրագը հանդավ: Խոսակցութեանը փոխվեց դեպի շշնջոց: Վոչինչ չէր կարելի լսել ձիշտ:

IV

Դեռ արեգակի ճառագայթները չտարածված, պաճոն դնացյուր գործին: Կես որին կնոջ խնդիրքով յես դնացի նորա տունը ճաշ բերելու: Տունը ներկայացնում էր մի աղքատ խրճիթ: Մի յերեքամյա յերեխա պատռտված շարելով, բաց գլխով և բորիկ վոտերով, արտասուքը աչքերին, անկյունումը կանգնած հաց էր խնդրում: Յերկրորդը, մոտ հինգ տարեկան, նույնպես հին շորերով, կրծում էր ձմերուկի կեղև: Իսկ այն յերեկյան գեղեցիկ աղջիկը նստած տխուր մտածութեան մեջ գործում էր գուլպաներ: Տան մեջ բոլորը ցեր և ցան ածած, ցեխոտ, կեղտոտ էր:

Այդ տեսարանին ներկա լինելով մտածում էյի. «Լավ չե՛ր արդյոք, վոր այս յերեսայոց մայրը լիներ կատարյալ մայր. ընտանիքի մայր. սարգեր, տունը մաքուր պահպաներ, յերեխանց շորերը կարկատեր, այսպես գեղեցիկ աղջկա համար բաժին պատրաստեր, քան թե, ո՛հ, ասել դժվարանում եմ, քան թե շարաթներով դամիսթեա դնար, տուն տեղ թողած վանքի մեջ ապրեր, ուշաթափ լիներ, ընկներ, սուրբ Գեվորգի բերանով խոսեր յուր վատթար ցանկութեանը կատարելու համար: Յերեկ յերեկո նորա չքավոր այր աղամարդը վերջին յերկու սուրբին ձգելով, այնպիսի դրոթեան մեջ էր, վոր նորա փոխանակ իմ սիրտը այրվում էր: Յե՛վ այդպիսի մի կին, յուր պարտականութեանը մի կողմը դնելով նստել է յուր ախմար մարդու վերա և քշում է, դեպի ուր կամենում է: Յես դնացել էյի ճաշ ստանալու, բայց ի՞նչ տեղից, յերբ մի յերեսան հաց էր խնդրում, մյուսը կեղև կրծում:

— Մայրդ ճաշ էր խնդրում, պատվելի աղջիկ, ասացի յես:

— Ո՛հ, կուրանամ յես, տանը մի կտոր հաց չկա, թող թե կերակուր: Ահա տեսնում ես, յեղբայրներս ամբողջ ուր սպում են: Գնացի դրացիների մոտ մի հաց փոխ առնելու, վոչ վոք չտվեց: Մենք նույնպես դեռ վոչինչ չենք կերել: Այսուամենայնիվ, յես յեղբորս կուղարկեմ հորս կամ մեծ յեղբորս խանութը ճաշի համար:

— Նոցա խանութը վո՞ր փողոցումն է:

— Հորս խանութը կամրջի ծայրումն է: Նա կոչկակար է, վոչ թե կոչկակար այլ փինաչի. այն է հին կոչիկներ կարկատող: Իսկ մեծ յեղբայրս դուրգար է:

— Ուրեմն յես կարող եմ գնալ առանց ճաշի:

— Ների՛ր խնդրեմ, յես ահա կուղարկեմ յեղբորս հորս մոտ և այնտեղից ճաշով մորս մոտ:

— Ուրեմն մնաս բարև:

— Գնաս բարև, ասեց գեղեցիկ աղջիկը:

— Յես յեկա Խոջի վանքը: Կնոջ բարկությանը յուր տղամարդի վերա վերջ չկար:

Յերկու ժամից հետո յերևաց կնոջ չանթոտ վորդին, ձեռին մի փողոցի հաց և կտոր պանիր:

— Այս ինչ էս բերել: Ի՞նչ հարկավոր է ինձ չոր պանիրը: Այն «քալթաուր» չե՛ր իմանում, վոր ինձ հարկավոր է մսեղեն կերակուր:

Յերեսան զգալով մոր ծանր հարվածը գոռալով դուրս վազեց:

— Այստեղ սևացիր, գոռաց մայրը:

Յերեսան հեալով կրկին մոտեցավ:

— Միս ինչո՞ւ չե՞ր ուղարկում:

— Ասում եր առուտուր չունի դեռ. դորա փողը ևս հարևանից խնդրեց: Ասում եր բոլոր փողը յերեկ մոմի յե տվել:

— Յեվ համարձակվում ե խոսել սուրբ Գեվորգի դեմ. կաց, թող յերկու որից հետո այստեղ գա նա, յես այն «քալթաուրն» ցույց կտամ:

— Նա ասում եր այս յերեկոյին գալու յե:

— Ո՞վ, հա՞յրդ:

— Այո:

— Ինչպե՞ս է համարձակվում գալ առանց սուրբ Գեվորգի հրամանի: Յես նորան ասեցի վոր յերեք որից հետո կարող է գալ: Գնա՛, ասա, վոր նորա վոտը չկոխի այս տեղ, ապա թե վոչ սուրբ Գեվորգը նորան կծիկ կղարձնե. լսում ե՞ս, գնա, ասա...

Յերեսան գնաց:

Յերեկոյան ժամասացութենից հետո մնացինք միայն յես և այն կինը: Դարպասը կողպեցի և սկսեցի չիբուխս ծխել: Կի-

նր ճրագը վառեց և ինձ հրավիրեց յուր մոտ: Յես գնացի, նրատեցի և այլն ըստ կարգին Մեղիսեղեկի: Մենք մարդիկս թույլ արարած ենք, վորքան բարոյական ևս լինինք, այնուամենայնիվ պատեհ միջոցումը մեր թուլությունը դուրս է փայլում, մեզ օանձահարել դժվարանում ենք: Պարսպատան մեջ վոչ մի մարդ բացի յերկուսս: Յես տղամարդ, մոտս գեղեցկադեմ կին... Պ՛հ, փառք քեզ աստված, մենք մարդիկս թույլ արարած ենք: Յես ծեր մարդ. աշխույժ ժամանակս անցուցած... բայց աստված է... ո՛հ, աստված, մենք մարդիկս թույլ արարած ենք:

— Ձեր այր մարդը գալու յե՞ աղջիկ պարոն, հարցրեցի յես:

— Վոչ:

— Յեվ վո՛չ վորդի՞դ:

— Վոչ:

— Յեվ վո՛չ աղջիկդ:

— Վոչ:

— Մի՞թե վոչոք չի գալու տեսություն անելու:

— Վոչ, սուրբ Գեվորգը չի հրամայել:

— Ամենայն բան սուրբ Գեվորգի համաձայնությամբ եք գործում:

— Անպատճառ: Ըստ վորում յես նորա դուրն եմ. նա խոսում է իմ բերանովս: Ում պատժել կամենում է, իմ բերանովս է հայտնում: Ահա զորորինակ իմ հարևան Հարությունի կինը այս և այն տեղ խոսեցած եր իմ վերա՝ թե յես չուտ-չուտ գնում եմ դամիսթևա. թե յես սուտ եմ խոսում ամենայն բան յերբ ուշաթափ եյի, թե յես գիտությամբ եմ վարվում այսպես, թե սուրբ Գեվորգը իմ տերս չե. և այլն և այլն:

Յես թուլացա հարևանիս տան առաջ, և սուրբ Գեվորգը իմ բերանովս նորան սպառնալիք տվեց, բայց Հարությունի կինը առավել սկսեց բամբասել: Հինգ որից հետո նորա մարդը մեռավ խոլերայից, յերեք որից հետո վորդին՝ ևս մեռավ ծաղիկից: Յեվ նա ինքը ևս կմեռներ, յեթե ծնկաչոք չգար իմ տունը և իմ բերանով նկորդություն չխնդրեր սուրբ Գեվորգից: Մեռնեմ նորա սուրբ գորությանը: նա շատ հրաշքներ է գործել: Նա պահպանել է իմ գերդաստանը: Ամենին լափում եր խոլերան, բայց իմ տան մեջ կատուն անգամ չսատակեց: Մի անգամ ուտելու հաց չունեյի, սուրբ Գեվորգը յուր ձեռով յերկու ուրբի դրեց

առաջ և անհետացավ: Նա ինձ մանեթներով շատ անգամ փող է տված:

Յերեք բաղխումն դարպասի վերա ընդհատեցին կնոջ պատմությունը:

— Ո՞վ կարող է լինել. ձեզանից դալու չե՞ն հարցրեցի յես:

— Վոչ:

— Ուրեմն ո՞վ կարող է լինել այսպես ուշ, արդեն ժամը տասն է:

— Ախ. ապա թե ժամը տասն է, դա լինելու յե աղա Գարսեանը, շտապիր բանալու դուռը:

Դարպասը բաց արի և ներս ընդունեցի գիշերվան հյուրին:

V

Յերեք որ սուրբ Գեորգը չէր հրամայել վոչ վոքի դալ տեառության նորա դուրին. միայն պաճո թաղապահը ուներ ազատ մուտք... Յեւ յերեք որի մեջ ևս կինը վոչ մի անգամ չէր յեղած ուշաթափ և վոչ խոսած սուրբ Գեվորգի բերանով:

Անցավ և յերրորդ որը: Յերեկոյան տեսության յեկան կնոջ մարդը, վորդիքը և այն գեղեցիկ աղջիկը: Նոքա բերել էյին մի թեթև ընթրիք: Յես ևս, իբրև միակ պահապան Խոջի վանքի, հրավիրված էյի այդ ընթրիքի վերա: Պաճոն չկար:

— Ինչի՞ Գարսեանը չկա այստեղ, հարցրեց կնոջ աղամարդը:

— Վորովհետև սուրբ Գեվորգից հրաման չունիմ, համարձակ պատասխանեց կինը:

— Այն որից դեռ չե՞ յեղած նա այստեղ:

— Չեր համարձակվելու. բատ վորում սուրբ Գեվորգը հրամայեց ինձ վոչ վոքի չընդունել այս յերեք որվա մեջ. կինը իմ յերեսը գննիր. վարտասանեց այս խոսքերը: Յերեկ կարծում եր, թե յես հայտնելու յեմ գաղանիքը:

— Յես նորա համար եմ հարցնում — շարունակեց կնոջ աղամարդը, վոր աղա Գարսեանը չէ յեկած մոտս վոչ մի յերեկո և վոչ անցած է խանութիս մոտից:

— Վորովհետև սուրբ գինվորից հրաման չկա, փառավորապես պատասխանեց կինը:

— Կարելի յե նեղացած է, վոր սուրբը ուղարկեց նորան գեպի Բերդի յեկեղեցին. պետք է ներողություն խնդրել:

— Ումի՞ց, հարցրեց կինը:

— Աղա Գարսեանից: Վա՛հ, նա քո ծառան չէ, վոր նորա պես աղա մարդուն ուղարկես այս և այն յեկեղեցու մեջ ծուներ կրկնելու: Եստ մեծ ազնվություն է նորա կողմից քեզ լսել, ըստ վորում նա աղա յե: Իսկ դու հասարակ ծագումից ես և մի աղքատ փինաչու կին:

— Յե՞ս, հասարակ... փինաչու կի՞ն: Ինչպես մոռանում ե՞ս, վոր իմ տերը սուրբ Գեվորգն է:

Դուք ով եք, վոր խոսում եք ընդդեմ սուրբ Գեվորգի: Վահ կուրանամ յես. հող և մոխիր լինի գլխիս վերա. այս ի՞նչ լսեցի սրբի դեմ: Սուրբը կրարկանա և տունս տեղս փլատակ կղարձնե: Վայ... Վայ... Դու՛ւ, տղամարդ, լեզվովդ խսկույն մեղք գործեցիր. աղոթք արա՛, ներողություն խնդրիր սրբից նորա բարկությունը ցածացնելու... ահա գալիս է սուրբը, վա՛յ... վա՛յ... վա՛յ... ասեց կինը և տարածվեց բոլոր մարմնով սենյակի մեջտեղ:

Բոլոր ներկա յեղողները շափարյա քարացան: Կինը վոտեքով դետինն եր դարկում, իսկ ձեռներով յերեսը կարմրացնում և մագերը պոկում: Բաժական ժամանակ կոկորդի մեջ խոխոացնելուց հետո սիսեց խոսել սուրբ Գեվորգի կողմից:

«Սպասի՛ր, թշվառ դու մարդ. քո մեղքերի համար քեզ ցածացրի մինչև փինաչության արհեստը: Այնքան բարությունները քեզ համար արել եմ, այնուամենայնիվ դու բալական չես. (վորումելի փինաչին ահից դունաթափվեց): Ամբողջ Թիֆլիսը կերակուր դարձավ խորերային, բայց քո տան մեջ մի լացի ձայն չբարձրացավ: Ո՞վ եր քո տան պահապանը: Յես էյի և եմ, յես, սուրբ Գեվորգս: Սորանից հետո և համարձակվում ե՞ս խոսել այդպես: Իմ դուրի դեմ խոսել — կնչանակե իմ դեմ խոսել: Նա յե իմ ընտրածը: Մի՞թե այլ կանայք չկային: Բայց բոլորից գորան նախապատիվ համարեցի իմ դուրը չինել: Ուրեմն դա հասարակներից չէ:

Ինչ վոր դա առնելու յե և առնում է, իմ համաձայնությամբ է բոլորը: Այսուհետև չհամարձակիս հանել բերանիցդ այդպիսի խոսքեր. ապա թե վոչ կմտաբերես քո հարևան Հա-

բուժյունին: Կրկին վողորմում եմ քեզ քո կնոջ խնդիրքով: Միայն վաղը անպատճառ դնաս, յոթը զանազան յեկեղեցիներէից յուրաքանչյուրի մեջ յերեսուն անգամ ծունր կրկնես և չհամարձակվես կնոջդ տանել տուն, մինչև նորան չերևիմ յես յերազի մեջ: Յես ահա կուղարկեմ Գարսեանին. ասացեք նորան, վոր այս դիչեր ժամը 11 դա. յերեք անգամ բաղխի դարպասը, տասը անգամ ծունր դնի Խօջի վանքումը և յերեք մոմ վառելով խոյուն զուրս դնա:

Սորանից հետո կինը լոսց և սուրբ Գեվորգը յուր սպիտակ ձիու վերա աներեկութացավ: Կնոջ տղամարդը և վորդիքը միմյանց յերեսին նայելով մնացել էյին քարացած: Փինաչին գունաթափված հազիվ կարողանում եր կանգնել վոտների վերա: Նա զղջում եր, անզգուշ խոսեց սրբի դեմ: Ահհամբերությամբ սպասում եր, մինչև վաղը յոթը յեկեղեցիների մեջ կատարեր սուրբ Գեվորգի տված հրամանը, վոր նորանով գոնյա սրբի մոտ վողորմություն գտանէ:

Յերբ նոքա պատրաստվում էյին զնալ տուն, մտալ Գարսեվանը: Բացի կնոջից ամենքը ևս կարծում էյին, թե թաղապահին սուրբ Գեվորգն և ուղարկել: Փինաչին համարյա չոքեց թաղապահի առջև:

— Աղա Գարսեան ջան, դուք իմ տերս, յես ձեր ծառան: Յես արժանի չեմ ձեզ հետ խոսել անգամ: Յես փինաչի, իսկ դուք յերևելի մարդ եք: Բայց հարկադրված եմ հայտնել ձեզ սուրբ Գեվորգի հրամանը: Դուք այս դիչեր 11 ժամին պետք ե յերեք անգամ բաղխեք դարպասը, տաս անգամ ծունր դնեք այս Խոջի վանքումը և յերեք մոմ վառեք: Աղա ջան, ներեցեք, վոր ձեզ նեղություն ենք տալի: Ահա ձեզ յերեք մոմի վարձ, դուք պարտական չեք ձեր փողը մսխել:

Պաճոն մի հպարտ դրություն ընդունելով, հայտնի բան է, մերժեց 10 կոպեկը իրրև մոմերի վարձ:

— Ինչ բան է, խոսեց թաղապահը, յեթե սուրբ Գեվորգը արժան է համարել հրամայել ինձ, հապա յես անհապաղ կկատարեմ նորս ասածը:

— Շատ շնորհակալ եմ, աղա ջան: Ինձ համար մեծ պատիվ է, յեթե ձեզ պես մարդը արժան է համարում զալ իմ տունս:

Պաճոն այս խոսքերից առավել վիզից, կռատակների մեջ կծիկներ դնելով: Նոքա բոլորը գնացին. մնացինք յես և կինը:

Այստեղ հարկավոր է ավելացնել, վոր պաճո թաղապահը Ալեքսանդրապոլցի չինովնիկի վորդի յեր: Փոքրահաս ժամանակից զալով Թիֆլիս ուսանում եր գիմնադիայումը: Ծուրլության պատճառով արձակեցին նորան յերրորդ դաստնից, ուր յերեք տարու չափ մնացած եր: Մի տարի Թիֆլիս մնաց առանց գործի, ապա մտալ Թիֆլիսում ծառայության, իրրև հասարակ դրազիր յուր հեռու աղգականի ողնությամբ, վոր թաղապահ եր: Յերեք տարուց հետո աղգական թաղապահի ողնությամբ Գարսեանը դարձալ թաղապահի ողնական: Այդ նոր վիճակով նա շատ բավական եր և նորա հպարտության վերջ չկար: Որ չեր անցնիլ, վոր նա փողոցներումը, խանութների մեջ մարդ չձեծեր, խաբերայությամբ կաշառ չառներ, սպառնալով միշտ: Ահա այս ժամանակն եր, վոր տասը մանեթից Յուրյան նշանակեց և Չը ինձ և յերբ յես չհամաձայնեցի, նա ինձ ձեծելով դուրս քշեց:

Տասն և մի ժամին յերեկոյան, դարպասը յեռեք հարված ստացավ: Ներս ընդունեցի պաճոյին, վոր յեկեղեցին մտնելու, տասը ծունր կրկնելու ու յերեք մոմ վառելու փոխանակ մտալ ուղղակի կնոջ սենյակը:

Մենք մարդիկս թույլ արարած ենք: Հետաքրքրությունս բորբոքից: Ականջս դրի դռան ճեղքին:

— Գործերս վատ են գնում, խոսեց թաղապահը:

— Ի՞նչպես, մի՞թե իմացան:

— Չեր կարելի, վոր չիմանային, ըստ վորում բավականին մեծ գումար է:

— Վորքա՞ն է, Գարսեան ջան:

— Մոտ յերեք հարյուր ուրբլի:

Փոքրիկ լուություն:

— Դոնյա ծառայությունիցս չզրկեյին, շարունակեց թաղապահը:

— Մի՞թե կզրկեն:

— Ի՞նչպես չեն զրկիլ. փոքր չե 300 ուրբլի:

— Աղա Խորոզյանցին կինդրեյիր, վոր հոգաբարձությունս առներ:

— Նա չէ կարող, ըստ վորում Մեծը հրամայել է բանաւ ձգել ինձ, մինչև կվճարեյի 300 ուրբլին:

— Այս, կուրանամ յես Գարսեան ջան, ի՞նչ տեղից կարող ես հատուցել:

— Վերջին հուշսս փորրիկ կարվածքն է, վոր մնացած է ծնողացս մահից հետո:

— Այս, Գարսեան, Գարսեան, ինչ բերեցիր քո գլխին, ո՞ւր վչացրիր այդքան գումարը:

Այդ մասին գոնյա լուր: Մի՞թե չես իմանում ուր վչացրեցիր: Մոռացել ե՞ս, վոր մի անգամ 10 ուրբլի, մյուս անգամ 8 ուրբլի, յերրորդ անգամ 6 ուրբլի, չորրորդ անգամ 15 ուրբլի և այլն և այլն ստանում եյիր ինձանից և հիմար տղամարդիդ հավատացնում եյիր, վոր սուրբ Գեվորգը տվեց քեզ: Մոռացել ե՞ս: Սուրբ Գեվորգը յեթե տվող լինէր ինձ ևս կտար, այլոց ևս կտար և վոչ միայն քեզ:

— Յեթե դու ինձ տվել ես այդ գումարը, պարտքը ես տված: Իդուր չես տված, պատասխանեց կինը:

— Ի՞նչ պարտք:

— Ինչ պարտք: Մոռացել ե՞ս: Քո համար յես ձգել եմ իմ տունս, տեղս, վորդիքս և յեկել այստեղ իբրև դամիսթեա: Յեվ մի՞թե այս առաջին անգամն է: Ահա յերեք տարի յես, վոր թափառում եմ մի յեկեղեցուց դեպի մյուսը. մի տեղ մի ամիս, մյուս տեղ յերեք շաբաթ, յերրորդ տեղ յերկու շաբաթ և այլն և այլն: Այս բոլորը քո համար արած եմ, և դու այսօր ինձ նախատում ես, վոր դրամ ես մտնում իմ վերա: Լավ, այսուհետև յես այլ կերպով կվարվեմ:

— Բավական է, բավական է, ներիր հոգյակս, յես սխալվեցի, վոր այդ խուշերը ասացի. ասաց թաղապահը:

Սոսակցութեան տուտը կտրվեց, և յես հեռացա: Միայն զարմացա, վոր այնպիսի հպարտ և սառը մարդը, վորպիսի յերթապահը, լուռթյամբ ընդունեց կնոջ նախատինքը: Ինչի նա չբարկացավ և սառը արհամարհանքով դուրս չգնաց: Նա կարող էր հավիտյան թողնել յուրյան նախատողին:

Բայց վոչ, նա ներողամիտ գանվեցավ, ըստ վորում նա ունէր յուր նպատակը, վոր հետո կիմացվի:

Մի շաբաթ անցել էր արդեն, յերբ սուրբ Գեորգը յուրյան

VI

Մի շաբաթ անցել էր արդեն, յերբ սուրբ Գեվորգը յուրյան յերկնային հրեղեն ձիու վերա նստած, նիզակը ձեռին, բոլոր մարմնով զրահավորված և սպառազինված, կայծակի շանթեր արձակելով ներկայացավ կնոջը յերազի մեջ, թե այսուհետև չնորհած էր թուլտուլութուն վերադառնալու դեպի յուր տունը: Յոթերորդ օրումը կինը թողեց յուր կացարանը և սորանով համարյա վերջանում է իմ պատմութեանը, ով հետաքրքիր ունկնդիրներ: Բայց նորան լրացնելու համար, թույլ տվեք ինձ մի քանի խոսք ևս ավելացնել:

Շուտով համբավ տարածվեց, վոր պաճոն արձակված է յուր պաշտոնից, թագավորական 300 ուրբլին, վոր նորան հանձնված էր, անհետացնելու համար:

Առաջիկա թաղապահը, իսկ այժմ միայն Գարսեանը, մի տարի թափառում էր Թիֆլիսի փողոցներումը անգործ, ըստ վորում նորա սրբնթաց թեւերը, վոր նորան բարձրացնում էյին նորա կարծիքով մինչև յերկինք, այժմ ամենևին փչրված էյին:

Նա տուն և տեղ չունենալով ոթեան գուրով այն կնոջ տանը: Այժմ յես մտաբերեցի, վոր այդ սառնասիրտ մարդը խորամանկությամբ և նղատակով ընդունեց կնոջ նախատինքը ինչի վանքի մեջ:

Գարսեանի ներկայութեանն ամենևին արդելք չկար կնոջ տղամարդի կողմից, ըստ վորում սուրբ Գեվորգի համաձայնութեամբ յեղավ այդ գործը:

Բոլոր Թիֆլիսը իմանում է Գարսեանի արտաքսվելը և նորա պատճառը: Վասնորո նորա ծառայութեան ասպարեզն այստեղ շատ նեղ էր: Գեպի ում դառնար ոգնութեան մասին, խնդիրն անպատճառ բացասական դուրս կգար: Վասնորո արժան համարեց թողնել այդ կնոջ գերդաստանը և Թիֆլիսը տեղափոխվելով դեպի ուրիշ քաղաք, մեծ ճանապարհի վերա, առանցիոններումը ծառայելու համար:

Յերկու տարուց հետո, իջևանի մի քանի կողակների վերա

մեծ դարձավ և ապա կողակի շորերով ահա յեկավ Թրֆլիս միևնույն կնոջ մոտ:

Մի շաբաթ, դուցե և ավելի անցել էր, վոր համբավ տարածեցին, թե կողակների կարգավորիչը նշանվել է այն կնոջ դեղեցիկ աղջկա վերա:

Արդարև համբավը իրագործվեց: Գարսեանը պսակվեց այն գեղեցիկ աղջկա վերա, վոր մինչև այդ հասակը մնացել էր տանը: Յեվ յեթե Գարսեանը պսակվեց այդ գեղեցիկ աղջկա վերա այդպե՞ս և հարկավոր էր, նաև պետք էր: Ըստ վորում վոչ վոք յերկտասարդներից չէր նայում նորա վերա, բաւելով, վոր «նա յուր մոր աղջիկն է»:

Սորանով վերջ եմ դնում իմ պատմութեանս: Վորպե՞ս սկզբումը, նույնպես և այժմ խնդրում եմ, վոր չդրեք այս պատմութիւնը— իբրև շարադրութիւն և վոչ ասեք այս և այլ տեղ մինչև ասած ժամանակս անցնի:

— Պ. Ժամկոչ, պատմութեան սկզբումը դու խոստացար հայտնել կնոջ անունը, հարցրեցի յես:

— Այդ ավելորդ է, պատասխանեց նա:

— Յես իբրև խորհուրդ կծածկեմ այդ անունը:

— Միայն ա՞յդ անունը. դարմանալով հարցրեց Մոմավառյանցը:

— Այո.

— Վոչ պատվելիք. դուք պետք է ծածկեք և թաղապահի անունը:

— Լավ, և թաղապահի անունը կծածկենք:

— Միայն անունները կծածկեք. կրկին հարցրեց ժամկոչը:

— Անունները և պատմութիւնը մինչև իր ժամանակը, պատասխանեցինք մենք: Բայց պատմութիւնը կնկարագրենք, միայն վոչ վոքի ցույց չենք տալ առ այժմ:

— Վոչ վոքի, վոչ վոքի ցույց չտաք:

— Բարի յե, բարի յե, իբրև խորհուրդ ասա՛ և կնոջ անունը:

— Հըմ. կնոջ անունը: Լավ. ասեց ժամկոչը և ականջումս շշնջեց կնոջ անունը:

— Արդարև այդ կնոջը ճանաչում եմ, ասացի յես:

Արդեն մութ էր: Ժամկոչ Մոմավառյանցը զնայ դեպի յուր թաղավորութիւնը— Ողջի վանքը: Իսկ մենք յերկտասարդներս— դեպի մեր կացարանները:

1864

Մոսկվա

Պատ. խմբագիր՝ Սիրաս
Տեխ խմբագիր՝ Ստ. Ալբունյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան
Հիմնադրող սրբագրիչ՝ Յե. Տեր-Մինասյան

Գլավղևիտի լիազոր Ա.—4006. Հրատ. 4423.

Պատվեր 61. Տիրաժ 4000

Թուղթ 62×94. Տպագր. 7 3/4 մամ.

ՄԼԿ մամուլում 38,400 նշան. Հեղին. 6 մամ.

Հանձնված է արտադրության 11 հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 17 մարտի 1938 թ.

ՊԵՏՀՐԱՏԻ I ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

« Ազգային գրադարան



NL0375316

60395